




ԱՐՏԱԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՎԱՅՈՑ ՁՈՐԻ  
ՄԻՋԲԱՐԲԱՌԷ

ԱՐՏԱԿ ՎԱՐՂԱՆՅԱՆ

---

## ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԻՋԲԱՐԲԱՌԸ

*Նսիրում եմ սիրելի ուսուցիչս՝  
Մարտ Մ յորադասեի հիշատակին*

Գրքի տպագրությունը հովանավորել է  
«Ջերմուկ Գրուպ»  
փակ բաժնետիրական ընկերության նախագահ,  
Ազգային ժողովի պատգամավոր  
Աշոտ Արսենյանը



ԱՐՏԱԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ

# ՎԱՅՈՑ ՉՈՐԻ ՄԻՋԲԱՐԲԱՌԷ



ԵՐԵՎԱՆ – 2004

ՀՏԴ 809.198.1  
ԳՄԴ 81.2Հ  
Վ 301

Գրախոս՝  
բանասիրական գիտությունների դոկտոր,  
պրոֆեսոր Լավրենտի Յովհաննիսյան

Խմբագիր՝  
բանասիրական գիտությունների թեկնածու,  
դոցենտ Գաղթուհի Հանանյան

Վարդանյան Արուսյակ Վարդանի  
Վ 301 **Վայոց ձորի միջբարբառը.** և Եր.: «Տիգրան Մեծ», 2004.– 208 էջ,  
8 քարտ., 2 գծ. :

Գրքում քննության են առնված Վայոց ձորի և հյուսիսային Նախի-  
ջևանի շուրջ մեկ տասնյակ հնաքնակ գյուղերի լեզվական սերտ առնչու-  
թյուն ներկայացնող խոսվածքները: Ուսումնասիրված են Վայոց ձորի  
միջբարբառի հնչյունաբանությունը, ձևաբանությունը, բառագիտությունը,  
վեր են հանված ինչպես ներխոսվածքային տարբերությունները, այնպես  
էլ արտաքին առնչությունները մերձակա բարբառների նկատմամբ:

Վ  $\frac{4602020100}{774(01)2004}$  2004 թ.

ISBN 99941-0-075-0

ԳՄԴ 81.2Հ

© Արտակ Վարդանյան, 2004 թ.

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Պարմական Հայաստանի Սյունիք աշխարհի Վայոց ձոր գավառը, որ պարմագրության մեջ հայրնի է նաև Հայոց ձոր, Վարդաձոր, Եղեգյաց ձոր, Վայո ձոր, Վայիձոր անուններով և փեղադրված է եղել Վայքի, Վարդենիսի և Զանգեզուրի լեռնաշղթաների միջև ընկած լեռնային փիրությամբ, մոտավորապես համապատասխանում է Հայաստանի Հանրապետության այսօրվա Վայոց ձորի մարզին:

**Վայոց ձոր** փեղանվան վերաբերյալ փարբեր ստուգաբանություններ կան: Կիրակոս Գանձակեցին, հավանաբար հիմնվելով ժողովրդական ավանդության վրա, գավառանունը կապում է 735թ. աղետաբեր երկրաշարժի հետ, երբ գեղնասույզ է եղել գավառի Մոզ ավանը, և ստուգաբանում որպես «ողբերի ձոր»՝ «Եւ ահա խաւար ի վերուստ անտեսանելի կալաւ զՄոզանն սահմանն, և զաւուրս քառասուն շարժեցաւ վայրն, և խորասոյզ եղեալ ընկղմեցան կենդանոյն ոգիք իբրև փասն հազար: Վասն այնօրիկ Վայոց ձոր անուանեցաւ մինչև ցայսօր ժամանակի»<sup>1</sup>: Այս վարկածը Թադևոս Հակոբյանը համարում է ոչ հիմնավոր ստուգաբանություն<sup>2</sup>, քանի որ հիշյալ երկրաշարժից դեռևս դարեր առաջ Մովսես Խորենացին<sup>3</sup> և Եղիշեն<sup>4</sup> վկայում են այս փեղանվան մասին. ուստի այս աշխարհագրական անունը գոյություն է ունեցել առնվազն 5-րդ դարում: Գրիգոր Ղափանցյանը Վայոց ձորը դասում է ցեղանուններից բխող փեղանունների շարքին կապելով Հայկական լեռնաշխարհի հնագույն վայ ցեղանվան և

<sup>1</sup> Կ. Գանձակեցի, Պարմություն Հայոց, Թիֆլիս, 1909, էջ 70:

<sup>2</sup> Թ. Հակոբյան, Սյունիքի թագավորությունը, Երևան, 1966, էջ 6-7:

<sup>3</sup> Մ. Խորենացի, Հայոց պարմություն, Երևան, 1940, էջ 248:

<sup>4</sup> Եղիշեն, Վարդանանց պարմությունը, Երևան, 1947, էջ 239:

**Բիայնա** երկրանվան հետ<sup>5</sup>: Արարար Ղարիբյանը կապում է նաև սեպագիր արձանագրություններում հիշարակված **Ուայ** աստծու կամ **Ուայաս** երկրի հետ<sup>6</sup>: Գևորգ Զահուկյանը ցեղանվանական-տոհմանվանական ծագմամբ տեղանունների թվում հիշարակում է Արցախի Վայկունիք գավառանունը<sup>7</sup>: Սահմանակից այս երկու գավառների անունների նույնարմատությունը գրեթե ակնհայտ է:

Վայոց ձորը Հայաստանի հնագույն բնակավայրերից մեկն է: Հայ ժողովրդի պատմության հազարամյակներում գավառը գրնվել է Արարարյան թագավորության (Ուրարտու), Երվանդունիների, Արտաշեսյանների, Արշակունիների թագավորությունների կազմում: Մեծ Հայքի անկումից հետո (428) մարզպանական Հայաստանի մասն է կազմել, 571-ին Սյունիքի հետ միացվել Փայտակարան աշխարհին: Արաբական տիրապետության ժամանակ գրնվել է խալիֆայության Արմինիա նահանգի կազմում: 9-րդ դարում դարձել է Սյունիքի իշխանական տիրույթ, իսկ Եղեգիս գյուղաքաղաքը 9-10-րդ դարերում եղել է գահերեց իշխանական կենտրոնը: 10-12-րդ դարերում մտել է Անիի Բագրատունյաց թագավորության, ապա 13-15-րդ դարերում՝ Զաքարյանների իշխանապետության մեջ՝ որպես Խաղբակյանների և Օրբելյանների իշխանական տիրույթ:

Վայոց ձորը մշակութային մեծ ծաղկում է ապրել հարկապես 13-15-րդ դարերում. Գլաձորի հայրնի համալսարանը, Ներմոնի վանքի դպրոցը, Ցախաց քար, Քարկոփի կամ Խոտակերաց, Գնդեվանք, Վերին Նորավանք, Արափեսի, Թանահատի և այլ վանական հաստատություններ դպրության և գրչության նշանավոր կենտրոններ են եղել:

16-րդ դարից սկսվել է Վայոց ձորի պատմության անկումային շրջանը: 1555թ. գավառն անցել է Մեֆյան Իրանին, ապա 1590-ին՝ Օսմանյան սուլթանությանը: 1603 թվականին Շահ Աբասի կազմակերպած բռնագաղթի հետևանքով գրեթե ամայացել և հայաթափվել է: Այնուհետև 1639թ. թուրք-պարսկական պայմանագրով կրկին ան-

<sup>5</sup> Գր. Կապանյան, Историко-лингвистическое значение топонимики Древней Армении, Երևանի պետական համալսարանի «Գիտական աշխատություններ», 1940, հ. ԺԴ, էջ 382-385:

<sup>6</sup> Ա. Ղարիբյան, Հայոց լեզվի պատմության ուսումնասիրության ներածություն, Երևան 1937, էջ 62:

<sup>7</sup> Գ. Զահուկյան, Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան, Երևան, 1987, էջ 441-442:

ցել է Պարսկաստանին, իսկ 1828թ. ռուս-պարսկական պայմանագրով Ռուսաստանին<sup>8</sup>:

Վայոց ձորի այժմյան բնակչության գերակշիռ մասը՝ մոտավորապես 80 տոկոսը, խոսում է խոյի բարբառով: Խոյեցի հայերը, սակայն, այսօրեղ, ինչպես նաև Հայաստանի այլ վայրերում (հիմնականում Արարատի, Արմավիրի, մասամբ նաև Կոտայքի, Արագածոտնի, Սյունիքի մարզեր) վերաբնակվել են պարսկական ոչ հեռու անցյալում՝ 1828 թվականի Թուրքմենչայի դաշնագրին հաջորդող ժամանակահատվածում: Ինչպիսի՞ն է եղել ուրեմն Վայոց ձորի տեղաբնիկների խոսվածքը. չէ՞ որ այդ տարածքի բարենպաստ աշխարհագրական դիրքը վկայում է հայ ժողովրդի տվյալ հատվածի՝ ասպարակումներից և բռնագաղթներից, մասնավորապես շահաբասյան բռնագաղթից մասամբ պաշտպանվելու և հեղափոխություն իրենց հայրենի բնակավայրերում վերահաստատվելու հնարավորության մասին: Եվ իրոք, ուսումնասիրելով այժմյան Վայոց ձորի մարզի (մինչև 1988 թվականը՝ նաև հյուսիսային Նախիջևանի սահմանակից գյուղերի) խոսվածքները, հեշտությամբ կարելի է առանձնացնել խոսվածքների մի խումբ, որը միանգամայն տարբերվում է խոյի բարբառից: Մեր ուսումնասիրություններում այդ խոսվածքախումբն անվանել ենք Վայոց ձորի խոսվածք<sup>9</sup>՝ հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ խոսվածքը կրողներն իրենց անվանում են «հին հայեր»՝ ի տարբերություն խոյ-Մալմաստից վերաբնակվածների շառավիղ «թագա հայերի»: Վայոց ձորի խոսվածքով խոսող բնակավայրերն են՝ Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի, Աղավնաձոր, Գնիշիկ, Գնդեվազ, Խաչիկ, Կեչուտ, Ռինդ, Զիվա (վերջին բնակավայրի բնակչության գերակշիռ մասը 1918-20թթ. տեղափոխվել է Խաչիկից), Արփի (բնակչությունը 1963թ. տեղափոխվել է Գնիշիկից), Հորս (բնակչությո-

---

<sup>8</sup> Հայ ժողովրդի պատմություն, հ. Ա-Ը, Երևան 1967-1984:

<sup>9</sup> Ա. Վարդանյան, Ազնաբերդի (Վայոց ձորի) խոսվածքի հնչյունահնչության շառավիղի հանրապետական երկրորդ գիտաժողովի նյութեր, Երևան, 1981, էջ 19-20. Վայոց ձորի խոսվածքի հնչյունաբանությունը, Բանբեր Երևանի համալսարանի, թիվ 1, 1983, էջ 71-83. Վայոց ձորի խոսվածքի ձևաբանական առանձնահատկությունները (դրույթներ), Երիտասարդ լեզվաբանների հանրապետական հինգերորդ գիտաժողովի նյութեր, Երևան, 1986, էջ 107-108:



յունը 1918-20թթ. տեղափոխվել է Նախիջևանի Օծոփ գյուղից), Վերին (Նոր) Ազնաբերդ (բնակչությունը 1988-ին տեղափոխվել է Նախիջևանի Ազնաբերդ գյուղից), մասամբ՝ Զեղեա (Զեյթա), Եղեգիս (Ալայազ) և Արարատի մարզի Եղեգնավան (Շիղու) գյուղերը (վերջին երեք բնակավայրերի բնակչության շուրջ քառորդ մասը նույնպես 1988-ին տեղափոխվել է Նախիջևանի Ազնաբերդ գյուղից), ինչպես նաև Զերմուկ քաղաքը (բնակչության շուրջ երրորդ մասը 1930-50-ական թվականներին տեղափոխվել են Կեչուրից և Գնդեվազից): Ներկայացվող քարտեզներում, ըստ ժամանակագրական փուլերի, պարկերված են Վայոց ձորի խոսվածքի տարածման սահմանները (քարտեզներ 1, 2, 3):

Լեզվական առավել սերտ առնչություն ներկայացնող ընդհանուր խոսվածքից որոշ չափով առանձնանում է Օծոփ-Նորսի խոսվածքը: Օծոփ նշանավոր գյուղը տեղաբնիկ հայերի միակ բնակավայրն էր պարսկական Ճահուկ-Ճահապունիք գավառում (այժմյան Նախիջևանի Ինքնավար Հանրապետության Ճահբուզի շրջան), որ լիովին հայաթափվեց 1970-ական թվականներին, իսկ խոսվածքը գրեթե անփոփոխ գոյատևում է Նորս գ. ք. ում:

Խոյի բարբառը դասական բարբառագիտությանը միանգամայն քաջաձանոթ և առանձին աշխարհաբանությամբ ուսումնասիրված բարբառ է<sup>10</sup>, ուստի վերջինիս վայոցձորյան խոսվածքների քննությունը, բնականաբար, դուրս է մնում մեր աշխարհաբանի շրջանակներից: Մույն արեւնախոսության նպատակը Վայոց ձորի և հյուսիսային Նախիջևանի տարածքի վերոհիշյալ հնաբնակ գյուղերի ավանդական խոսվածքի ուսումնասիրությունն է, որը, ինչպես նշվեց, մեր հրապարակած աշխարհաբանություն անվանել ենք Վայոց ձորի խոսվածք:

Վայոց ձորի խոսվածքի մասին սոսկ թռուցիկ հիշատակություններ կան դասական բարբառագիտական աշխարհաբանություն. Արարաթ Ղարիբյանը<sup>11</sup> և Ահարոն Գրիգորյանը<sup>12</sup> այն համարել են Արա-

<sup>10</sup> Հր. Աճառեան, Հայ բարբառագիտութիւն, Էմինեան ազգագրական ժողովածու, հ. Ը, Մոսկուա-Նոր Նախիջևան, 1911. Քննություն Մարաղայի բարբառի, Երևան, 1926: Ա. Ղարիբյան, Հայերեն բարբառների մի նոր ճյուղ, Երևանի պետական համալսարանի «Գիտական աշխարհություններ», հ. ԺԿ, Երևան, 1939: Մ. Ասատրյան, Ուրմիայի (Խոյի) բարբառը, Երևան, 1962:

<sup>11</sup> Ա. Ղարիբյան, Հայ բարբառագիտություն, Երևան, 1947, էջ 73:

րադյան բարբառի խոսվածք, Նրաչյա Աճառյանը, այնուամենայնիվ, չի ընդգրկել ո՛չ Արարադյան, ո՛չ էլ Արցախի (Ղարաբաղի) բարբառների փարածման սահմաններում<sup>13</sup>: Որպես Արարադյան բարբառի խոսվածք է ներկայացված նաև Ռազմիկ Մարկոսյանի «Արարադյան բարբառ» ուսումնասիրության մեջ<sup>14</sup>: Սակայն առանձին աշխատանքով մանրակրկիտ ուսումնասիրությունը միայն կարող է վեր հանել խոսվածքում առկա բարբառային յուրօրինակ իրողությունները և ճշտել նրա դիրքը մերձակա բարբառների նկատմամբ:

Ըստ ձևաբանական դասակարգման՝ խոսվածքը պարկանում է հայ բարբառների արևելյան խմբակցության «ուս» ճյուղին և ըստ հնչյունաբանական դասակարգման ունի հայական բաղաձայնների երկանդամ համակարգ: Ննչյունային, քերականական, բառապաշարային և բառակազմական մի շարք առանձնահատկություններով հանդերձ՝ Վայոց ձորի խոսվածքն ընդհանուր գծեր է դրսևորում հարևան Այրարադի, Արցախ-Սյունիքի, Վասպուրականի խոսվածքների հետ: Իսկ խոսվածքի ճշգրիտ դիրքը հիշյալ շրջանների բարբառների նկատմամբ կարելի է պարզել ակադեմիկոս Գևորգ Զահուկյանի մշակած բազմահայրկանիշ վիճակագրական դասակարգման սկզբունքների<sup>15</sup> կիրառմամբ:

Ուշագրավ է, որ Վայոց ձորի միջնադարյան վիմագիր արձանագրություններում<sup>16</sup> և ձեռագրերի հիշարակարաններում<sup>17</sup> արտացոլվել են խոսվածքի որոշ հատկանիշներ: Դրանում կարելի է համոզվել՝ 14-15-րդ դարերի հիշարակությունների մի շարք դրվագներ համեմարելով ներկա խոսվածքի համապատասխան բառերի ու բառակապակցությունների հետ:

---

<sup>12</sup> Ա. Գրիգորյան, Նայ բարբառագիտության դասընթաց, Երևան, 1957, էջ 205:

<sup>13</sup> Հր. Աճառեան, Նայ բարբառագիտութիւն, Էմինեան ազգագրական ժողովածու, հ. Ը, Մոսկուա-Նոր Նախիջեան, 1911, էջ 37, 61-62. Նայոց լեզվի պարմություն, հ. Բ, Երևան, 1951, էջ 329, 331:

<sup>14</sup> Ռ. Մարկոսյան, Արարադյան բարբառ, Երևան, 1989:

<sup>15</sup> Գ. Զահուկյան, Նայ բարբառագիտության ներածություն, Երևան, 1972, էջ 45-119:

<sup>16</sup> Ղ. Ալիշան, Միսական, Վենետիկ, Մ. Ղազար, 1893, էջ 145, 167:

<sup>17</sup> Ակնարկներ միջին գրական հայերենի պարմության, հ. Ա, Երևան, 1973, էջ 39-40:

## Հիշատակություն

## Խոսվածք

*Ձեռքս թիկացաւ*

*Ծեղքս թիկացաւ*

*Շնհաւոր*

*Շընհաւօր*

*Իմ քիրն մեռաւ*

*Իմ քիրըս մեռաւ*

*Մէր չունի, Ա. քոյր ունի,  
էն էլ մեռաւ*

*Մէր չունիւմ, մին քիր ունիւմ,  
էն էլ մեռաւ*

*Մին կով փութի*

*Մին կով փրվիւմ*

*Գրում ի, մուկն ցեթեց*

*Կըրում իւմ, մուգը ցեթեց*

*Շապրէնն մէկ օր  
Ծակքարովն ջուր փութի*

*Շապրէնը մին օր  
Ծակքարովը ճուր փրվիւմ*

*Անծին յերինջ մորթեցի*

*Անծին հերինջ մօռթ(եց)իւմ*

*Մաքս մանկաղով կրդեւ ի,  
հէնչանք կարացի գրեւ*

*Մաղըս մանգ՛էղօվ կրդրեւ իւմ,  
ընչանք կարացիւմ կրդեւմ*

*Հայնց թուաց, թէ քան կա  
պակաս*

*Հէնց [թրվաց], թէ պան կա  
պագաս*

*Գ. փեղ է գրած ... էս փեղրս*

*Իրէք փեղ ա կրրած ... էս  
փեղր(ագ)րս*

*Արունեցի ոչ*

*[Վօրունեցիւմ] վօչ*

*Թէ չէ՝ նա վայ փութի*

*Թէ չէ՝ նա վայ փութի*

Խոսվածքի արեղաբնիկությունն է հասարակարում նաև այն կրող բնակավայրերի անունների հնավանդության փաստը: Օրինակ՝ 13-րդ դարի պարմիչ Սփեփանոս Օրբելյանի «Պարմութիւն նահանգին Սիսական» հայրնի աշխարության մեջ և եկեղեցու հարկացուցակնե-

րում հիշարակվում են Գնշին (Գնիշիկ), Նորք (Նորս), Արենի, Առիա (Արենի), Կեչուր (Կեչուր), Ընեղի (Ռինդ), Գնդեվանք (Գնդեվազ), Ածափ (Օծոփ), Չուվա, Չիվա (Չիվա)<sup>18</sup> բնակավայրերը: Ազնաբերդը, Աղավնաձորը և Խաչիկը այդ ժամանակաշրջանում հավանաբար կրել են այլ անուններ և, ըստ երևույթին, նոր անուններն սրացել են շահաբասյան բռնագաղթին հաջորդող փասնամյակներում: Այնուամենայնիվ, այս երեք բնակավայրերի փարածքներում նույնպես պահպանվել են փարբեր ժամանակաշրջանների բնակատեղիներ (Աղավնաձորի փարածքում Ուլգուր (Ուլգյուր)<sup>19</sup>, Ապանա, Միրաշ<sup>20</sup>, Խաչիկի փարածքում՝ Առնեփ (Արասփամուղ)<sup>21</sup>, Մռահող<sup>22</sup>, Ազնաբերդի փարածքում՝ Աշուղի աղբյուր, Էվինի աղբյուր, Ղարաղուշ գյուղատեղիները<sup>23</sup>), ինչպես նաև բերդեր ու հնավայրեր:

Վայոց ձորի միջնադարյան որոշ հատուկ անուններ, ի հասփարումն վերոհիշյալի, նույնպես խոսվածքի կնիքն են կրում: Որոշ հիշարակություններում, օրինակ, Բուրթեր անձնանունն ունի **Բուրթել** բարբառային ձևը<sup>24</sup>, Օրբելը՝ **Ուրբել**<sup>25</sup>, Արափեսը՝ **Արադես**<sup>26</sup>, Թանափի վանքը՝ **Թանաղա վանք**<sup>27</sup>, ակնհայտորեն խոսվածքին հարագատ են նաև տեղանունների **Աջառագավիթ**, **Աղնջոց բերդ**, **Ընեղի**, **Ըրվենք**, **Փշոնք**<sup>28</sup>, **Աջողք**<sup>29</sup> և այլ ձևեր:

<sup>18</sup> Մփ. Օրբեկյան, Սյունիքի պատմություն, Երևան, 1986, էջ 290, 382, 383, 395-396:

<sup>19</sup> Թ. Հակոբյան, Ս. Մելիք-Բախշյան, Հ. Բարսեղյան, Վայասփանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. Ե, Երևան, 1991, էջ 176:

<sup>20</sup> Նույն տեղում, հ. Ա, 1986, էջ 2, 158:

<sup>21</sup> Մփ. Օրբեկյան, նշված աշխատանքը, էջ 214-216: Ղ. Ալիշան, նշված աշխատանքը, էջ 173:

<sup>22</sup> Ղ. Ալիշան, նշված աշխատանքը, էջ 172: Թ. Հակոբյան, Ս. Մելիք-Բախշյան, Հ. Բարսեղյան, նշված աշխատանքը, հ. Գ, էջ 872:

<sup>23</sup> Ա. Վարդանյան, Ազնաբերդ. նախնիական հայության վերջին ամրոցը, Երևան, 2000, էջ 10 և ներդիրի բարձրագույն:

<sup>24</sup> Ղ. Ալիշան, նշված աշխատանքը, էջ 96:

<sup>25</sup> Նույն տեղում, էջ 97:

<sup>26</sup> Նույն տեղում, էջ 143, 144:

<sup>27</sup> Նույն տեղում, էջ 119:

<sup>28</sup> Մփ. Օրբեկյան, նշված աշխատանքը, էջ 395-396:

Խոսվածքի ուսումնասիրությունն արդիական է նաև Նախիջևանի տարածքի տեղաբնիկ, պատմական բարբառներից մեկը լինելու առումով. մի տարածք, որտեղ Ադրբեջանի կողմից պետականորեն իրագործվեց ոչ միայն հայերի սպիտակ ցեղասպանության հրեշավոր ծրագիրը, ոչ միայն հիմնահատակ ոչնչացվեցին հայ մշակույթի բազմաթիվ բարձրարժեք հուշարձաններ, այլև իրենց իսկ բնօրրանում մարեցին հայերենի մի ամբողջ շարք տոհմիկ բարբառներ ու խոսվածքներ: Դրանց թվում էին բազմաթիվ ուսումնասիրողների ուշադրությանն արժանացած Ագուլիսի բարբառը (գոկերենը), որի վերջին կրողները մինչև 1988 թվականն ապրում էին Գողթն գավառի (Ռրդուարի շրջան) Ցոլա և Տանակերտ գյուղերում, 1960-ականներին մարած Աստապատի խոսվածքը, Ջուղայի բարբառը (վերջին և միակ հայ բնակիչները Ջուղայից և Աստապատից արտաքսվեցին 1988-ին), ինչպես նաև Արցախի, Մեղրու, Խոյի բարբառների տեղական խոսվածքները<sup>30</sup>:

Ներկայացվող քարտեզները (քարտեզներ 4, 5, 6) ժամանակագրական փուլերով ընդհանուր պատկերացում են տալիս ինչպես Նախիջևանի տարածքում 20-րդ դարի հայ բնակչության տեղաբաշխման, այնպես էլ հայ բարբառների տարածման սահմանների մասին:

Պատմական Հայաստանի տարբեր նահանգների (Վասպուրական աշխարհի Գողթն և Նախճավան, Այրարատ աշխարհի Շարուր, Սյունիք աշխարհի Ճահուկ-Շահապունիք և Երնջակ գավառներ), հեյլեբար և ազգագրական տարբեր շրջանների խաչմերուկ լինելու հանգամանքը, ինչպես նաև բնակչության զանգվածային տեղաշարժերը նպաստել են Նախիջևանի տարածքի բարբառային բազմազանությանը: Մինչև 1603-04 թվականները Վայոց ձորի խոսվածքը հավանաբար տարածված է եղել նաև Ճահուկ-Շահապունիք, Նախճավան և Շարուր գավառներում: Այդ է վկայում խոսվածքը կրող վերոհիշյալ բնակավայրերի առկայությունը Նախճավան և Ճահուկ-Շահապունիք գավառներում, ինչպես նաև ըստ երևույթին Նախիջևանի տարածքի Ճահուկ ավանից և Դարաղուշ գյուղից 17-18-րդ դարերում Թուրքիայի Բոլու և մերձակա բնակավայրեր տեղափոխված կաթո-

---

<sup>29</sup> Ղ. Ալիշան, նշված աշխատանքը, էջ 97:

<sup>30</sup> Ա. Վարդանեան, Նախիջևանի բարբառային քարտեզը, Հանդես ամսօրեայ, Վիեննա, 2000, թիւ 1-12, էջ 457-470:

լիկ հայերի<sup>31</sup> խոսվածքի վերաբերյալ Վարդուշկա Սամուելյանի (Փարիզ) ուսումնասիրությունները<sup>32</sup>:

Այսպիսով այս աշխատանքը նվիրված է Վայոց ձորի և հյուսիսային Նախիջևանի տարածքի տեղաբնիկ խոսվածքի ուսումնասիրությանը, որի հիմքում առավելապես խոսվածքը կրող ամենամեծ բնակավայրի՝ Նախիջևանի Ազնաբերդ գյուղի խոսվածքն է:

Ազնաբերդը (բարբառախառն գրությամբ՝ Ըզնաբերդ, սխալ գրությամբ՝ Զնաբերդ, օտար գրությամբ՝ Ազնաբյուրդ) մինչև 1988 թվականի նոյեմբեր-դեկտեմբերյան բռնազաղթը Նախիջևանի Ինքնավար Նանրապետության միակ և վերջին հայաբնակ խոշոր գյուղն էր: Ուներ մոտ 2000 հայ բնակիչ, որոնք 1988-ին վերաբնակվեցին Վայոց ձորի և Արարատի մարզերի վերոհիշյալ բնակավայրերում, մասամբ նաև Երևանում, Կոտայքի մարզում և արտերկրում:

Ղևոնդ Ալիշանի կարծիքով Ազնաբերդը հնագույն հայկական բնակավայր՝ «նշանաւոր բերդ և աւան եղեալ է ի հնումն, թէպէտ և ոչ ի հին ցուցակին և ոչ առ պարմիչս գրանենք զդա յիշատակեալ»<sup>33</sup>: Ալիշանը խոսում է նաև գյուղանվան մեզ հայտնի ամենահին հիշատակության մասին՝ «անակնկալ իմն հանդիպմամբ գրանի յիշատակարան մի դամբանական ի տար աշխարհի, ի Գենուա (Ճենովա) քաղաքի Իտալիոյ, որ ընդ անուան գեղջն՝ ցուցանէ եւս զայն Գողթան գաւառի պապշաճեալ յ'ԺԷ դարու. և է այս արձան սղալագիր, ի Ս. Բարդուղիմէ եկեղեցւոջ Նայոց, յամի 1687, Նայրապետի ուրումն:

Այս է տապան Նայրապետին՝

Որ է որդի Անանիային.

Սա յերկրէն է Գոխարան տանին.

Եւ ի գեղջէն Ըզնաբերդին.

Վախճանեցաւ Նայոց թվին

Նազար հարիւր էրեսուն իւ վեցին.

Եւ ապրէլի քսան և յնգին:

---

<sup>31</sup> Ս. Ճեմճեմեան, Նախիջևանի հայոց վարժարանը և Տոմը, Վենետիկ-Ս. Ղազար, 2000, էջ 6-21:

<sup>32</sup> V. Samuelian, Le dialecte des Arméniens de Bolou (Turquie): Etat des recherches en cours, Նայ բարբառագիտության միջազգային համագումարի նյութեր, Սրեփանակերտ, 2001, էջ 2:

<sup>33</sup> Ղ. Ալիշան, նշված աշխատանքը, էջ 505:

Ով յանդիպի այս փապանին՝  
Նայր մեր յերկինքս շնորհին  
Վասն սիրուն Քրիստոսին:

Բնակիչք Ազնաբերդի բնիկ Նայք են և ոչ գաղթականք (տունք 43 առ Շոբենի և ոգիք 224), ընդ որս և 10 փուն մահմեդականաց»<sup>34</sup>:

Ազնաբերդի փարածքում կային Ք. ա. 3-2-րդ հազարամյակների կիկլոպյան ամրոցներ, փարբեր ժամանակաշրջանների այլ բնակավայրերի հետքեր: 1970-ական թվականների ուսումնասիրությունները<sup>35</sup> ցույց են տվել, որ պահպանված պարմական հուշարձանների մի մասը թվագրվում է 9-10-րդ և ավելի վաղ դարերի:

Անհրաժեշտ է նշել, որ Վայոց ձորի և հյուսիսային Նախիջևանի փարածքը, լեզվական սերտ առնչությունից զատ, դարեր շարունակ կազմել է պարմաազգագրական, տնտեսական, մշակութային մեկ ամբողջություն, փարածքի բնակիչները սերտորեն կապված են եղել ոչ միայն ընդհանուր բարբառով, այլև իրենց կենցաղով, ազգակցական-խնամիական կապերով, հինավուրց սովորություններով ու ավանդույթներով: Ընդհանուր են եղել նաև ժողովրդական փոնացույցի ամենասիրված տոները, հափկապես Զրօրհներ-Սուրբ Ծնունդը (Ճըրօխներ), Ծառզարդարը (Զրոզնոթնր), Զարիկը (Զնդիկ), Նամբարձումը (Նըմբաոցում), Վարդավառը (Վնոթիվօր), Խաչվերացը (Խըրօվ) և այլն: Նախիջևանի փարածքի Շամենի Ս. Խաչ վանքը (Քամօ խաչ, Քախմաչ), Վայոց ձորի Նորավանքը (Նարմիր վանք), Արկազնի Ս. Խաչ վանքը (Ալգնգ), ի թիվս այլ սրբավայրերի, փարածքի ընդհանուր և բազմամարդ ուխտավայրերն են եղել հարյուրամյակներ շարունակ:

Խոսվածքն ուսումնասիրելու գործում աջակցություն ցուցաբերելու համար երախտագիտությամբ ենք հիշում Նայաստանի Նանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի Հր. Աճառյանի անվան լեզվաբանության ինստիտուտի բարբառագիտության բաժնի նախկին վարիչ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Հովհաննես Մուրադյանի, բանասիրական գիտությունների դոկ-

---

<sup>34</sup> Նույն տեղում:

<sup>35</sup> Ա. Այվազյան, Նախիջևանի պարմաճարտարապետական հուշարձանները, Երևան, 1978, էջ 62-63:

յոր, պրոֆեսոր Ռաֆայել Իշխանյանի, սույն թեմայով մեր թեկնածուական արեւմախոսության առաջին գիտական ղեկավար, բանասիրական գիտությունների թեկնածու Ալբերտ Խաչատրյանի անունները:

Երախարագիտությամբ ենք հիշում բարբառախոսների՝ ազնաբերդցիներ Նայրապետ Վարդանյանի (ծնվ. 1895թ.), Թերուր Մարգարյանի (ծնվ. 1899թ.), Թադևոս Խաչիբաբյանի (ծնվ. 1898թ.) Շողակաթ-Աջի Նովհաննիսյանի (ծնվ. 1898թ.), Շուշան Բալասանյանի (ծնվ. 1916թ.), Ռուբեն Մարտիրոսյանի (ծնվ. 1916թ.), աղավնաձորցիներ Գրիգոր Շահբազյանի (ծնվ. 1910թ.), Նրանտ Պետրոսյանի (ծնվ. 1931թ.) Դմիտրի Զաքարյանի (ծնվ. 1919թ.), Իվան Պողոսյանի (ծնվ. 1927թ.), գնդեկագիցիներ Վանո (ծնվ. 1916թ.) և Արևիկա (ծնվ. 1918թ.) Մարգարյանների, գնդիկցիներ Զաբել Մարգարյանի (ծնվ. 1902թ.), Մեհրաբ Մարտիրոսյանի (ծնվ. 1903թ.), Լուսիկ Վարդանյանի (ծնվ. 1911թ.), Բագրատ Նայրապետյանի (ծնվ. 1935թ.), խաչիկցիներ Նահապետ Մարգարյանի (ծնվ. 1897թ.), Արուս Մարգարյանի (ծնվ. 1908թ.), Նեկտոր Մարտիրոսյանի (ծնվ. 1910թ.), Նեղուշ Ենգիբարյանի (ծնվ. 1898թ.), Բագրատ-Նետոր Մարգարյանի (ծնվ. 1923թ.), օժովցիներ Կարեն Նամբարձումյանի (ծնվ. 1900թ.), Անահիտ Իսրայելյանի (ծնվ. 1914թ.), Մերոբ Աբգարյանի (ծնվ. 1912թ.), ռնդեցիներ Ալեքսան Սիմոնյանի (ծնվ. 1894թ.), Նանո Սյունիանյանի (ծնվ. 1916թ.), Մկրտիչ Մկրտչյանի (ծնվ. 1941թ.), արենցիներ Խաչիկ Խաչատրյանի (ծնվ. 1936թ.), Արտաշես Մանուկյանի (ծնվ. 1924թ.), չիվացիներ Աղավնի (ծնվ. 1923թ.), Շուշանիկ (ծնվ. 1930թ.) և Պարիս (ծնվ. 1938թ.) Սաղաթեյանների, կեցուրցիներ Գևորգ (ծնվ. 1905թ.) և Արևիկա (ծնվ. 1913թ.) Առաքելյանների, Վարդգես (ծնվ. 1932թ.), և Պայծառ (ծնվ. 1933թ.) Գևորգյանների, հորսեցիներ Թովսիմյանի (ծնվ. 1916թ.), Մուշեղ Մաթևոսյանի (ծնվ. 1910թ.), Ներիքնազ (ծնվ. 1932թ.) և Գրիգոր (ծնվ. 1930թ.) Մարգարյանների, Զաբել (ծնվ. 1934թ.) և Կամո (ծնվ. 1932թ.) Ամրգույանների և այլոց անունները:

Մեր խորին շնորհակալությունն ենք հայտնում Նայասարանի Նանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի լեզվաբանության ինստիտուտի «Նայերենի բարբառագիտական արվաս» գիտական խմբի առաջարար գիտաշխատողներ, բանասիրական գիտությունների թեկնածուներ Դարիկո Կոստանդյանին, Անահիտ Նանեյանին՝ սույն թեմայով մեր թեկնածուական աշխատանքի ղեկա-



վարին, մյուս գիտաշխատողներին, որոնց հետ համագործակցել ենք սկսած 1978 թվականից և որոնց մասնագիտական խորհուրդներով և օժանդակությամբ, ըստ հայերենի բարբառագիտական արվասի նյութերի հավաքման ծրագրի, տարիներ շարունակ զբաղվել ենք Նախիջևանի և Վայոց ձորի խոսվածքների գրանցման աշխատանքներով, հրապարակել մի շարք գիտական հոդվածներ, որոնք հետագայում դարձան սույն ուսումնասիրության հիմքը:

Մեր խորին երախտագիտությունն ենք հայտնում ծնունդով գնդեվազցի՝ «Զերմուկ Գրուպ» փակ բաժնետիրական ընկերության նախագահ, Ազգային ժողովի պատգամավոր Աշոտ Արսենյանին՝ գրքի տպագրությունը հովանավորելու համար:

## ՀՆՉՅՈՒՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

### ՀՆՉՅՈՒՆԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

Վայոց ձորի խոսվածքն ունի 43 հնչյուն:

Բաղաձայնները 34-ն են.

ձայնեղ պայթականներ և կիսաշփականներ՝ **բ, գ, գ', դ, ձ, ջ.**

խուլ պայթականներ և կիսաշփականներ՝ **պ, կ, կ', տ, ծ, ճ.**

շնչեղ խուլ պայթականներ և կիսաշփականներ՝ **փ, ք, ք', թ, ց, չ.**

ձայնեղ շփականներ՝ **զ, ժ, ղ, վ.**

խուլ շփականներ՝ **ս, շ, խ, ֆ, հ.**

ձայնորդներ՝ **լ, մ, յ, ն, ո, ո', ր:**

Մնացած 9-ը ձայնավորներն են՝ **ա, է, ը, ի, ու, օ, ն, օ', ու:**

Ժամանակակից գրական հայերենի հնչյուններից փաթեթավորում են **ն, օ, ու** քմային ձայնավորները, **գ', կ', ք'** քմային բաղաձայնները և **ռ'** շնչեղ ձայնորդը:

**Օ**-ն և **ու**-ն առաջնային շարքի<sup>1</sup> միջին և վերին բարձրացման քմայիններ են, հիմնականում հանդիպում են նոր փոխառություններում և գրաբարից ավանդված որոշ բառերում՝ **ծողմագ** (բաղ), **ծմբիլ** (կյանք), **ք'ծքանալ** (գիրանալ), **ք'ծմ** (մարագ), **ք'նուգ** (գառների, ուլերի փարախ), **ք'նու** (մոխիր), **ք'նույն** (ծղոպ), **ք'նուք'նուք** (ծծումք), **սնուրն** (այծերի, ոչխարների հոտ), **գ'նունաբախան** (արևածաղիկ) և այլն, ինչպես նաև **մնուրն** (մորուք), **թնուք** (թուք), **թնուգ'նունք** (թիկունք), **լնուգն** (լեզու), **կ'նույնագ** (կուտակ), **գ'ծբուղ** (կոպիտ), **ք'ծմուխտ** (քեմուխտ), **ծրան** (օրան) և այլն:

**Ա**-ն առաջնային շարքի ստորին բարձրացման քմային է, մեծ հաճախականությամբ հանդիպում է ինչպես փոխառյալ բառերում՝ **բնառան** (շապ մեծ պարկ), **շնֆուսու** (ղեղձ), **փլընք'ան** (քարե աստիճան), **ղնմնյաթի** (մեծ դանակ), **ք'նուք'նունք'նու** (քարադոդոշ լեռնային

---

<sup>1</sup> Հ. Մուրադյան, Հայոց լեզվի պատմական քերականություն, հ. Ա, Երևան, 1982, էջ 58-59:

մողես), **զմռդանկ** (կանաչավուն դեղին), **զմռզմամբու** (նկուղ), **թնք'ան** (անիվ), **ննՖնր** (շուն), **սնկնրն** (լայն կողով), **փնյլլվան** (լարախաղաց), **վնրնան** (վերակացու), **փնռինջ** (չմաքրած հաճար), **մնռդ** (հանդուրժող), **սնռթ** (ցուրտ), **լրխանգն** (մեղադրյա փաշտ) և այլն, այնպես էլ գրաբարից ավանդված բառերում **ժննգ** (ժանգ), **հնրիլ** (հառնել), **նռ'թնր** (արդար), **զմռզմամբ** (սարսափ, զարզանդ), **կօջնգ** (կոճակ), **լնր** (լար), **նռ'ջի** (առաջին), **չնմիչ** (չամիչ), **անգ'նկ** (անկյալ), **սնռիգ** (սարյակ), **վօխննր** (ոչխար), **շլլնգ** (շալակ), **զրռ'թնրվիլ** (զարդարվել) և այլն: Այս հնչյունը խոսվածքում դրսևորում է հնչույթային արժեք: Դրանում կարելի է համոզվել՝ համեմատելով իմաստային հակադրության հետևյալ զույգերը՝

**նրն** (ա՛յ փղա)–**արա** (արա՛)

**փնր** (բարձր տեղ դար)–**փար** (փար՛)

**նշի** (ծայնարկություն)–**աշի** (ուրելի վայրի բանջար՝ մանդակ)

**հնրիլ** (կազդուրվել, առողջանալ)–**հարիլ** (հարել, շարժել)

**մնլն** (թունավոր փիղ)–**մալա** (որմնադրի գործիք)

**հնկն** (գորգագործի, կարպետագործի գործիք)–**հալա** (եղանակ)

**փնս** (դաս)–**փաս** (փաս)

**լնփ** (շան լակ)–**լափ** (ամբողջովին, լրիվ)

**լնլ** (լալ, լաց լինել)–**լալ** (համր)

**Չրվն** (Չիվա գյուղանունը)–**Չրվա** (նույն գյուղանվան տրական և բացառական հոլովածնը):

**Ք, կ', ք'** քմային բաղաձայնները հիմնականում հանդիպում են առաջնային շարքի **է, ի և ն, օ, ու** ձայնավորներից առաջ, չունեն հնչույթային արժեք: Այնուամենայնիվ, գրաբարից ավանդված և փոխառյալ որոշ բառերում այս հնչյունները երբեմն հանդիպում են նաև միջին և երկն շարքի ձայնավորներից առաջ՝ **գ'ըրնագ'ի** (կիրակի), **գ'ըրննգ** (զուրնակ), **գ'ըպպուն** (մեծ մուրճ, կոփուն), **ք'աֆուր** (դաժան), **ք'ըլնֆն** (զուգարան), **գ'ըլլնր** (բալ), **ք'ըֆուս** (կոլովակ), **ք'ալդար** (կաճապ) և այլն, Օծուփ-Նորսի խոսվածքում նաև **ք'ասալը** (աղքար), **ք'ըֆլան** (ճոճանակ) և այլն:

**Ռ**՝ շնչեղ ձայնորոշ նույնպես դիրքային բնույթ ունի, հանդիպում է հիմնականում խուլերից և խլացած ձայնեղներից առաջ, չունի հնչույթային արժեք՝ **վառ'թ**<վարդ, **կառ'թալ**<կարդալ, **մօռ'թի**<մորթի, **ճառ'թիլ**<ջարդել, **նռ'թնր**<արդար, **առ'չ**<արջ, **պառ'ց**<բարձ, **փրփեռ'սը**<բորբոս, **փռ'ցան**<դերձան, **ժողովուռ'թ**<ժողովուրդ,

**կօռ՝ջիլ**<կորնջիլ, **հըռ՝սանիք**<հարսանիք, **թըռ՝թուռ**<թրթուր և այլն: Օծուփ-Նորսի խոսվածքում այս հնչյունն առաջանում է նաև **րդ, րփ, րթ** հնչյունակապակցություններից և, թեև դարձյալ չունի հնչույթային արժեք, այնուամենայնիվ, կայուն հնչյունական գործառույթ ունի՝ **կօռ՝նունգ**<գորպնուկ, **վօռ՝նիլ**<որդնել, **պառ՝ք**<պարք, **ըզնապէռ՝ցի**<ազնաբերդցի և այլն:

Նարկ է նշել նաև, որ խոսվածքում **ա** ձայնավորն ունի թույլ արփահայրված շրթնայնություն, որն առավել զգալի է Աղավնաձորի և Օծուփ-Նորսի խոսվածքներում: Տեքստը չծանրաբեռնելու համար, սակայն, այդ հնչյունը հափուկ նշանով չենք փառադարձում:

### ՇԵՇՏԸ

Խոսվածքում շեշտը վերջընթեր է՝ **պա՛գուգ**<բագուկ, **փախ՝ծը**<դադձն, **փա՛ռդա՛նգ**<դադարկ, **կա՛րունք**<գարուն, **առդա՛սունք**<արփասուք, **ո՛ւղիլ**<ուրել, **գ՛ըրա՛գի**<կիրակել, **հո՛վունք**<ուլունք, **ուս՝մա՛րան**<ուսումնարան, **վօսկ՛էղէն**<ուկեղէն, **մառ՝թալ՛էլ**<մարդագայլ, **աղա՛նուր**<աղաջուր, **ուր(ա)խը՛թուն**<ուրախութիւն, **պարէզա՝մը՛թուն**<բարեկամութիւն և այլն:

Սակայն այս օրինաչափությունից շեղվելով՝ շեշտն ընկնում է վերջնավանկի վրա հետևյալ դեպքերում.

ա) նախավերջին վանկում գաղտնավանկ ունեցող բառերում՝ **փը՝մա՛գ**<դմակ, **կըձի՛գ**<կծիկ, **կըրա՛գ**<կրակ, **փըռի՛լ**<փռել, **թըռ՝թըռա՛լ**<թրթուր, **խըշխըշա՛լ**<խըշխըշալ, **ըստը՛ղ**<այստել, **կըլխը՝վէ՛ր**<գլուխ ի վայր և այլն.

բ) պարճառական բայերում՝ **աբրացնի՛լ**<ապրեցուցանել, **պընց(ր)ացնի՛լ**<բարձրացուցանել, **քընացնի՛լ**<քնեցուցանել, **լանցացնի՛լ**<լացուցանել, **ուրխացնի՛լ**<ուրախացուցանել և այլն.

գ) նի վերջավորությամբ հոգնակի ձևերում կարաս-**կարասնի՛**, շերեփ-**շերեփնի՛**, վօննաման-**վօննամաննի՛**, ալապաստրագ-**ալապաստրագնի՛**, ճիբօդ-**ճիբօդնի՛**, կադու-**կադվընի՛**, ասեղ-**ասխընի՛**, կըջուզ-**կըջըջնի՛**, փըրէխ-**փըրխընի՛**, շափիք-**շապկընի՛** և այլն.

դ) սահմանափակ թվով այլ բառերում՝ **ան՝ջի**<առաջին, **կօռ՝(թ)նո՛ւգ**< գորպ(նուկ), **փա՛րվէ՛ր**<դար ի վեր, **յէղնո՛ւգ**<աղաւնուկ, **կաթ՝ղիգօ՛ս**<կաթողիկոս և այլն:

## ՀՆՉՅՈՒՆ ԱՓՈՒՍՈՒԹՅՈՒՆ

### *Ձայնավորների հնչյունափոխությունը*

Բոլոր դիրքերում հին հայերենի ձայնավորների մեծ մասը խոսվածքում հիմնականում մնացել է անփոփոխ.

Պակաս>պագաս, կարդալ>կառ<sup>Ի</sup>թալ, անապատ>անաբադ, արջ>առ<sup>Ի</sup>ջ, կար>կար, սար>սար, ագատ>ագադ, կարաս>կարաս, կարագ>կարաք, ականջ>անգաջ, փղայ>փղղա, վեց>վեցց, էշ>էշ, իլիկ>իլիգ, սիրտ>սիրդ, հին>հին, վիգ>վիգ, փոքգ>փոքք, գլուխ>կըլուխ, առնետ>առնէդ, ուրագ>հուրաք, առու>առու, գարի>կարի, կատու>կադու, անգութան>անգութան, անսիրտ>անսիրդ, բերան>պերան, աղջիկ>ախճիգ, բագուկ>պագուգ, սեղան>սէղան, գերան>կ'երան և այլն:

Նախաշեշտ վանկերում, մասամբ թուլանալով, ձայնավորները (հայրկապեա ա-ն) ոչ մեծ հաճախականությամբ վերածվել են ը-ի.

Աղանձել>ըղանձիլ, առաւօտ>ըռավօդ, արաժան>ըրէժան, մարանի>մըղանի, արեգակն>ըրէքնագ, դագանակ>դըգ'աննագ, անալի>ըլանի, Ազնաբերդ>Ըզնապեռ<sup>Ի</sup>թ, Աղանաձոր>Ըղնաձօր, Արիստակէս>Ըռըստակէս, բաժանել>պըժանիլ, երախայ>ըրէխա, գերեզման>կըրէզման||կըրէձման, դեպի>դըբա, հասկանալ>հըսկանալ, գիշեր>քըշեր, Իսկուհի>Ըսկօհի||Ըսկօյի, ողողել>ըղօղիլ, լողանալ>լըղանալ, ոլորել>հըլօրիլ, օրորել>հըրօրիլ||ըրօրիլ, բորբոսնել>փըփեռ<sup>Ի</sup>սնիլ, ուղեղ>ըղօղ և այլն:

Փոքր հաճախականությամբ, հիմնականում նախաշեշտ վանկերում, լրիվ թուլանալով, ձայնավորներն ընկել են.

Ապսպարել>պըսպարիլ, եղունգն>դունգը, եթե>թէ, ապա>բա, մխիթարել>մըխթանիլ, ուղղորդ>(ը)ղօռ<sup>Ի</sup>թ, ուղարկել>ղարգ'իլ, Գարրիել>Կափուլ, Անանուխ>Նանուխ, Ամադու>Մադու և այլն:

Բոլոր դիրքերում հանդիպում են ա ձայնավորի քմայնության դեպքեր՝ ա>ն.

Արդար>առ<sup>Ի</sup>թար, աջք>նշկը, անկեալ>անգ'նլ, ակիշ>նգ'իշ, ալեւոր>հնլիվօր, ճանճ>նննջ, ճաշ>ննշ, կիրակե>գ'ըրնագ'ի, քարճիկ>ք'նոջիգ, լար>լնր, զարթնուլ>զնռ<sup>Ի</sup>թնիլ, շապիկ>շնբիք, թաքուն>թնքուն, թանաք>թնննք, ժանգ>ժննգ, հարիւր>հնրիւր, ոչխար>վօխճնր, թեւճակ>թնպճնագ, սպիտակ>սիպտնագ, Սարգիս>

**Մարքիս, Զաքար>Զմքմր, Զարդար>Զմոթմր, Վարդազար>Վմոթմազմր** և այլն:

Խոսվածքում Աճառյանի օրենքը գործում է մասնակիորեն՝ առավելապես դ-ով սկսվող բառերում.

**Դալար>լմլմր, դահ>լմնխ, դանակ>լմննգ, դառն>լմռռ, դաս>լմսս, դալարակ>լմռռնգ, դար>լմմր, դարձ>լմռռ'ց, դարման>լմմրմնն, դանդուռ>լմննդուռ, դաղձ>լմնխծըլլլախծը, նաև բանջար>լմննջմր, բաշ>լմշշ, ձար(իկ)>ծմրիգ, բարակ>լմմրնգլլ պարագ, ձագ>ծմքլլծաք** և այլն:

Օծով-Նորսի խոսվածքում այս օրենքն առավել լիարժեք է գործում, վերոհիշյալ օրինակներից բացի առկա են նաև մեծաթիվ այլ օրինակներ՝ բամբակ>լմմմբնկ, բակ>լմնկ, բարձ>լմմռ'ց, դալել>լմմլիլ, գարուն>լ'մրունք, ձաւար>ծմմլմր, ձագար>ծմքմր, գաբն>լ'մնի, գառն>լ'մնռ, գարի>լ'մրի և այլն:

Համեմատաբար սակավ է հանդիպում **ա>է** հնչյունափոխությունը.

**Երախայ>ըրէխա, մանգաղ>մանգ'էղ, ծագ>ծէք, ծագել>ծէք'իլ** և այլն:

Բառասկզբի **ե-ի** դիմաց խոսվածքն ունի **յէ** կամ **է**.

Միավանկ բառերում **ե-ի** դիմաց հիմնականում առկա է **յէ՝ ե>յէ՝ եգն>յէգը, եր>յէղ, ես>յէս, եռ>յէռ** և այլն, իսկ բազմավանկերում **ե>է՝ երեկ>էրէգ, երես>էրէս, երկու>էրգու, եփել>էփիլ, երկայն>էրգ'էն, երեք>էրէք>իրէք**. որոշ բառերում, որոնք բարբառային հնագույն փարբերակներ են, **է-ից** առաջ առկա է նաև **հ<sup>2</sup>**՝ երդ>**հէռ'թ, երինջ>հէրինջ, եղի>հէղի** և այլն: Ինչպես վերը նշվեց, կան նաև բառասկզբի **ե-ի ը-ի** վերածվելու և անկման դեպքեր:

Սահմանափակ թվով բառերում, որոնք նույնպես բարբառային հնագույն փարբերակներ են<sup>3</sup>, գրաբարի բառասկզբի **ե-ի** դիմաց առկա է **ա** հնչյունը՝ եղբայր>**ախպեր**, երագ>**արագ**, երկաթ>**արգաթ**, երկան(ք)>**արգանք**, եղիճ>**աղինջ**:

<sup>2</sup> Հր. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, հ. Բ, Երևան, 1951, էջ 413:

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 414-415: Է. Աղայան, Բարբառային հնագույն փարբերություններ հայերենում, «ՆԽՄՏ ԳԱ հասարակական գիտությունների տեղեկագիր», 1958, թիվ 5, էջ 67-80:

Բառամիջում որպես կանոն ե-ին, ինչպես նաև է-ին համապատասխանում է է ձայնավորը.

Տեր>տեր, աղուէս>աղվէս, տեղ>տէղ, աղեղն>անէղ, սերմն>սերմը, աներ>անէր, ասեղն>ասէղ, սեղան>սէղան, արեգակն>ըրէքնագ, բերդ>պէռ՞թ, բարեկամ>պարէգամ, խեղճ>հէղջ և այլն:

Ոչ հաճախ հանդիպում է ե>ի ( է>ի) հնչյունափոխությունը.

Կիրակէ>գ՛րրնգ՛ի, անէծք>անիսկը (է>ի), թեկն||թէկն>թինգը, աւել>ւմվիլ, թեթեւ>թիթէվ, խեժ>խիժը (ե>ի), ալետր>հւմվիօր (ե>է>ի) և այլն:

Ժամանակակից գրական հայերենի նման բառասկզբում որպես կանոն գործում է ո>վօ, բառամիջում ո>օ հնչյունափոխությունը.

Որդն>վօռ՞թը, ոսկի>վօսկի՞, ոչխար>վօխնւր, ոսկր>վօսկուր, ոսպն>վօսպը, ուրն>վօղը, ծով>ծօվ, ձոր>ծօր, շոր>շօր, բոր>բօր, ձոր>ծօր, որորոց>հըրօրօց, կոճակ>կօջնգ, փիլոն>փիլօն և այլն:

Մ, ն, ր, ո ձայնորդներից առաջ հաճախ հանդիպում է ո(օ)>ու հնչյունափոխական երևույթը.

Մոմ>մոմ, ծոմ>ծոմ, տոմար>տոմար, Թորգոմ>Թօրգոմ, Թովմաս>Թոմաս>Թոմասս, կոկոն>կուգոմ, մեռոն>մէռուն, դամոն>պամբուվ, մորեխ>մուրէխ, կորնգան>կուտընգա, Օրբել>Ուրբել, ծոռն>ծուռը («թոռան զավակ»), կոռն>կուռը («թոռան թոռ»), Հոռոմ>Հուռում և այլն:

### ***Երկբարբառների հնչյունափոխությունը***

Այ երկբարբառի դիմաց խոսվածքն ունի է ձայնավոր՝ այ>է.

Փայտ>փէղ, այծ>էձ, այդ>էդ, երկայն>էրգէն, ձայն>ծէն, կայծակ>կէձագ, մայր>մէր, հայր>հէր, եղբայր>ախպէր և այլն:

Աւ երկբարբառը ենթարկվել է ընդհանուր-պատրմական օրինաչափությանը՝ աւ>օ.

Աղ>օթ, ար>օր, աւձ>օց, արհնել>օխնիլ, աղաթել>աղօթիլ, գարբ>գօրբ, կարաւոք>կարօղ, ծանաւթ>ծանօթ և այլն:

Եա երկբարբառը, ինչպես նաև եայ եռաբարբառը դարձել են Է՝ եա>է, եայ>է.

Երանեակ>հըրանէք, սեամ>շէմք, կորեակ>կօրէգ, ցորեան>ցօրէն, սեաւ>սէվ, աւեալ>վէլ, մագեայ>մագէ, փայտեայ>փէղէ և այլն:

Իւ երկբարբառը հնչյունափոխվել է ի ձայնավորի իւ>ի.

Արին>արին, սին>սին, ալիւր>ալիւր, ձին>ձին, հարիւր>հւն-  
րիւր||հարիւր և այլն:

Սահմանափակ թվով բառերում, որոնք բարբառային հնագույն  
փարբերակներ են<sup>4</sup>, առկա է ավելի վաղ շրջանում փեղի ունեցած  
ի>ու հնչյունափոխությունը՝ ճիւղ>ճուղ, աղբիւր>ախպուր, շիւղ>  
շուղ:

Ութին վերջածանցով բառերում նույնպես առկա է իւ>ու հնչյու-  
նափոխություն, սակայն այս դեպքում առկա է ձայնավորների առա-  
ջընթաց ներդաշնակություն.

Բարձրութիւն>պանցըրութիւն||պանցըրըթիւն, գորութիւն>գո-  
րութիւն||գորըթիւն, արդարութիւն>ան<sup>5</sup>թարութիւն||ան<sup>5</sup>թարըթիւն և  
այլն.

Ոյ երկբարբառը հիմնականում հնչյունափոխվել է ի ձայնավորի՝  
ոյ>ի.

Լոյս>լիս, թոյլ>թիլ, պարոյգ>պաղդիք, քոյր>ք'իր, կապոյր>  
կաբիդ և այլն:

Մենաբարբառացման այս օրինաչափությանը չեն ենթարկվել  
սահմանափակ թվով բառեր, որոնցում ավելի վաղ փեղի է ունեցել  
ոյ>ու հնչյունափոխությունը<sup>5</sup>.

Շոյք>շուղ, ոյժ>ուժ, բոյն>պուն:

Միայն անոյշ>անօշ օրինակում ոյ-ի դիմաց առկա է օ ձայ-  
նավորը:

### ***Բաղաձայնների հնչյունափոխությունը***

#### ***Ձայնեղ պայթականներ և կիսաշփականներ***

Խոսվածքում հին հայերենի ձայնեղ պայթականներն ու կի-  
սաշփականները ենթարկվել են հետևյալ հնչյունափոխական օրինա-  
չափություններին.

Բառասկզբում դարձել են խուլեր՝ ք, գ, դ, ձ, ջ > պ, կ, փ, ծ, ճ.

---

<sup>4</sup> Հ. Մուրադյան, Հայոց լեզվի պատմական քերականություն, հ. Ա, Երևան,  
1982, էջ 191-196:

<sup>5</sup> Նույն փեղում, էջ 182-187:



Բարձ>պառ<sup>ո</sup>ց, բովել>պովիլ, գեպ>կ'եղ, գինձ>կ'ինձը, դեղին> փեղին, դուռն>փուռը, ձախ>ծախ, ձոր>ծօր, ջուր>ճուր, ջարդել>ճառ<sup>ո</sup>-թիլ և այլն:

Խուլերի են վերածվել նաև շփականահաջորդ դիրքերում.

Աղբիւր>ախպուր, ագբն>ասպը, աղբ>ախպը, անգգամ>անըսկամ, աղջիկ>ախճիգ, շաղգամ>շախկամ, դաղձն>փախձը, թուղբ>թուխպը և այլն:

Բառամիջում և բառավերջում՝ ր ձայնորդին հաջորդելիս, ձայնավորների միջև և բառավերջի հետձայնավորային դիրքում վերածվել են շնչեղ խուլերի՝ ք, գ, դ, ձ, ջ > փ, ք, թ, ց, չ.

Ժողովուրդ>ժողովուր<sup>ո</sup>թ, երդումն>օր<sup>ո</sup>թումը, կարդալ>կառ<sup>ո</sup>թալ, արդար>առ<sup>ո</sup>թար, արբենալ>հարփիլ, որձ>վօռ<sup>ո</sup>ց, որբ>վօրփ, մարդ>մառ<sup>ո</sup>թ, Սարգիս>Մարք<sup>ո</sup>իս և այլն.

Խաբել>խափիլ, արեգակն>ըրեքնագ, դադար>թաթար, յաջող>աչօղ, ոջիլ>վօչիլ և այլն.

Էգ>էք, գաք>կափը, ուրագ>հուրաք, ձագ>ծաք||ծաք, ծագ>ծէք, գոգ>կօք, աւծ>օց, Մերոք>Մէրօփ և այլն:

Սահմանափակ թվով այլ բառերում նույնպես վերածվել են շնչեղ խուլերի.

Բռնել>փրռնիլ, դառնալ>թառնալ, դադարել>թըրթարիլ, գնալ>քընալ, գիշեր>քըշէր, Գեղամ>Ք'էղամ, ինչպես նաև գերանդի>ք'նրննթու, բորբոսնել>փըփեռ<sup>ո</sup>սնիլ, բրդել>փըռ<sup>ո</sup>թիլ և այլն: Վերջին երեք օրինակների հնչյունափոխությունը, կարծում ենք, բառամիջի շնչեղ խլացած ձայնեղի առնմանությամբ բառասկզբի ձայնեղի շնչեղ խլացման երևույթ է:

Ռնգայիններին հաջորդող դիրքերում մնացել են անփոփոխ.

Սանդ>սանդ, խնձոր>խընձօր, փանձ>փանձ, բամբակ>պամբագ, մանգաղ>մանգ'էղ, երինջ>հէրինջ, ամբար>ամբար և այլն:

### *Խուլ պայթականներ և կիսաշփականներ*

Բառասկզբում խուլ պայթականներն ու կիսաշփականները մնացել են անփոփոխ՝ ա, կ, փ, ծ, ճ = պ, կ, փ, ծ, ճ.

Պապ>պաղ, պառաւ>պառավ, պարկ>պարգ, կափու>կաղու, կոճակ> կօջանգ, կով>կօվ, փանել>փանիլ, փուն>փուն, փոպրակ>փօր-

**րագ**, ծանր>**ծանդրր**, ծիծաղել>**ծըծաղիլ**, ծով>**ծով**, ճանկ>**ճանգ**, ճուր>**ճուդ**, ճրագու>**ճըրաքու** և այլն:

Որոշ բառերում դիպվում են խուլ պայթականների ձայնեղացման օրինակներ՝ **պ, կ, փ > ք, գ, դ**։

Կիրակել>**գ'ըրնագի**, Կիրակոս>**Գ'ըրնագ'ոս**, փող>**դօղ**, պղտոր>**բըխտոր**, կոպիտ>**գ'օբուտ** և այլն:

Օծով-Հորսի խոսվածքում նման հնչյունափոխության օրինակները համեմատաբար ավելի հաճախ են հանդիպում պոպոք>**բօբօք**, կոպրել>**գօդրիլ**, կորել>**գըդրիլ**, պրիհան>**բըդրրիհան**, կրուր>**կըրուր**, բայց սեռականում՝ **գըդրանը** և այլն: Այս հնչյունափոխությունը, կարծում ենք, բառամիջի ձայնեղի, ավելի ճիշտ՝ ձայնեղացած խուլի, առնմանությամբ բառասկզբի խուլի ձայնեղացման երևույթ է:

Որոշ բառերում խուլ պայթականներն ու կիսաշփականները բառասկզբում վերածվել են շնչեղ խուլերի՝ **պ, կ, փ, ծ, ճ > փ, ք, թ, ց, չ**։

Տաքանալ>**թըքանալ**, կթել>**քըթիլ**, կշեռ(ք)>**քըշեռք** և այլն: Այս հնչյունափոխությունը, կարծում ենք, բառամիջի շնչեղ խուլի առնմանությամբ բառասկզբի խուլի շնչեղացման երևույթ է:

Նման հնչյունափոխություն է երբեմն նկատվում նաև բառավերջի ձայնավորահաջորդ դիրքում՝ մափիտ>**մադիթ**, Բագրատ>**Պագրաթ**, Արարատ>**Արարաթ**, Անդրանիկ>**Անդրանիք**, Սմբատ>**Միմբաթ** և այլն:

Այսպեղ, անշուշտ, առկա է բառավերջի ձայնավորահաջորդ դիրքերում խուլ պայթականների և կիսաշփականների ձայնեղացման, ապա ձայնեղ պայթականների և կիսաշփականների շնչեղ խլացման երկաստիճան հնչյունափոխություն:

Բառամիջում և բառավերջում խուլ պայթականներն ու կիսաշփականները որպես կանոն ձայնեղացել են՝ **պ, կ, փ, ծ, ճ > ք, գ, դ, ձ, ջ**։

Շապիկ>**շափիք**, կուպր>**կուբրր**, կաբու>**կադու**, սունկն>**սունգը**, ճանճ>**ճանջ**, անկեալ>**անգ'անլ**, պատ>**պադ**, կարար>**կադար**, ալիշ>**անգ'իշ**, աճել>**աջիլ**, ապրել>**աբրիլ**, անապատ>**անաբադ**, անիծ>**անիձ**, պատրիժ(ք)>**պադիշկը**, ծաղիկ>**ծադիգ**, կայծակ>**կ'էձագ**, անգուրան>**անգուդան**, կարիճ>**կարիջ**, կարկուտ>**կարգուդ**, կուրապ>**կուդաք**, ճակատ>**ճագադ**, մածուն>**մաձուն**, մրածել>**մըդաձիլ**, նեղ>**նեդ**, շար>**շադ**, պճեղն>**պըջեղ**, պրծանիլ>**պըռձ(ը)նիլ**, արածել>**ըրաձիլ**, բարակ>**պարագ**, սպիտակ>**սիպլանգ** և այլն:

Բացառություն են կազմում խուլ շփականներին հաջորդող դիրքերը, որոնցում մնում են անփոփոխ՝ **այ, կ, տ, ծ, ճ = ա, կ, տ, ծ, ճ**։

Աստառ>**աստրառ**, փախտակ>**փախտազ**, ապսպարել>**պըսպարիլ**, աստրղ>**աստրղը**, փաշտ>**փաշտ**, պաշտել>**պաշտիլ**, սաստել>**սաստիլ** և այլն։

Բառամիջում և բառավերջում խուլերի համարարած ձայնեղացումը բնորոշ չէ միայն Օծուփ-Նորսի խոսվածքին՝ ծակել>**ծակիլ**, կապ>**կապ**, կուպ>**կօպ**, նամակ>**նամակ**, շալակ>**շըլակ**, կարու>**կարու**, պար>**պար**, ծիծաղ>**ծըծաղ**, կոճակ>**կօճակ**, անիծել>**անըծիլ**, կարկուտ>**կարկուտ** և այլն։ Այնուամենայնիվ, այստեղ ևս, թեև ոչ մեծ հաճախականությամբ, առկա են ձայնեղացման օրինակներ՝ շապիկ>**շնքիք**, այծ>**էճ**, ակիշ>**նգիշ**, հոտաղ>**հոդաղ**, փայտ>**փեղ**, ականջ>**անգաջ**, ծունկն>**ծունգը** և այլն։

### *Շնչեղ խուլ պայթականներ և կիսաշփականներ*

Շնչեղ խուլ պայթականները և կիսաշփականները հիմնականում մնում են անփոփոխ՝ **փ, ք, թ, ց, չ = փ, ք, թ, ց, չ**։

Փայտ>**փեղ**, փոխել>**փօխիլ**, քար>**քար**, քիթ>**քիթ**, թաթ>**թնթ**, թերեւ>**թիթել**, թափան>**թափան**, ցորեան>**ցօրեն**, ցամաք>**ցամաք**, չամիչ>**չնմիչ**, չարչարանք>**չարչարանք**, փարթամ>**փառթամ** և այլն։

Այս օինաչափությունը չի տարածվում շփականներին հաջորդող դիրքերի վրա, ուր շնչեղ խուլերը ապաշնչեղանում են՝ **փ, ք, թ, ց, չ** = **պ, կ, տ, ծ, ճ**։

Քաղցր>**քախծըր**, աղքատ>**ախկաղ**, աղցան>**ախծան**, ժածք>**ժնշկ**, յաղթել>**ախտիլ**, Ասքանազ>**Ասկանազ**, փախուցանել>**փախծընիլ**, մեղք>**մէխկը**, դժոխք>**տըժօխկը** և այլն։

### *Ձայնեղ շփականներ*

Ձայնեղ շփականները բոլոր դիրքերում հիմնականում մնացել են անփոփոխ՝ **զ, ժ, դ, վ = զ, ժ, դ, վ**։

Վարդ>**վառթ**, եղինգ>**աղինջ**, գգել>**կըզիլ**, գառակ>**զավազ**, զանգ>**զանգ**, բաժանել>**պըժանիլ**, աղ>**աղ**, ծով>**ծով**, ոյժ>**ուժ**, ժողովուրդ>**ժողովուռթ** և այլն։

Նպականների նախորդելիս դարձել են խուլ շփականներ՝ **գ, ժ, դ, վ > ս, շ, խ, ֆ**։

Աղքատ>**ախկադ**, աղջիկ>**ախճիգ**, ժածք>**ժանկ**, ազգ>**ասկը**, ազրն>**ասպը**, պարիժք>**պադիշկը**, նախ>**նանֆր** և այլն։

Մահմանափակ թվով բառերում, որոնք բարբառային հնագույն փարբերակներ են<sup>6</sup>, **դ** ձայնեղ շփականի դիմաց առկա է **լ** ձայնորդը։

**Ջիդ>ճիլ**, փիղմ>**փիլ**, բող>**պօլի**, բղուղ>**պուլիզ**||**պըղուղ**։

Մահմանափակ թվով բառերում **վ** ձայնեղ շփականի դիմաց առկա է **ֆ** խուլ շփականը՝ **վ>ֆ**։

Որս>**վօռ՝ս>ֆօռ՝ս**, Ազնիվ>**Ազնիֆ**։

Կա նաև **վ>բ** հնչյունափոխության օրինակ՝ **թեւճակ>թնբճնագ>թնպճնագ**։

### *Խուլ շփականներ*

Խուլ շփականները բոլոր դիրքերում հիմնականում մնացել են անփոփոխ՝ **ս, շ, խ, հ = ս, շ, խ, հ**։

Սար>**սար**, հասար>**հասար**, միս>**միս**, շուն>**շուն**, մաշել>**մաշիլ**, խելք>**խելք**, գլուխ>**կըլուխ**, հայելի>**հիլի**, բահ>**պահ**, հավ>**հավ**, վախենալ>**վախնիլ** և այլն։

Հ շփականին, սակայն, որոշ գյուղերի խոսվածքներում (Ազնաբերդ, Աղավնաձոր, Արենի, Ռինդ) բառասկզբում՝ **ո**-ից առաջ, համապարասխանում է **ֆ՝ հո>ֆօ**։

Նող>**ֆօղ**, հոս>**ֆօղ**, հորել>**ֆօրիլ**, հոսել>**ֆօղիլ**, հորթ>**ֆօռ՝թ**, հոգի>**ֆօք՝ի** և այլն (քարտեզ 7)։

Երկու բառում **հ**-ի դիմաց առկա է **խ** հնչյունը՝ **հ>խ՝** օրինել>**օխնիլ**, դահ>**տանիլ**։

### *Ձայնորդներ*

**Յ** ձայնորդը բառասկզբում հիմնականում ընկել է՝ **յ>Յ**։

Յաղթել>**ախսրիլ**, յաջող>**աջօղ**, յիշարակ>**իշադազ**, յղի>**ըղի**, յոնք>**ունք**, յօրանջել>**ըռըշկօղալ**, յուշապ>**ուշաք**, Յիսուս>**իսուս**, Յակոբ>**Ագօփ** և այլն։

---

<sup>6</sup> Նույն տեղում, էջ 206-217։

Մահմանափակ թվով բառերում յ-ի դիմաց առկա է **հ՝ յ>հ՝** յիսուն>**հիծծուն**, յուշ>**հուշ**:

Մյուս ձայնորդները հիմնականում չեն հնչյունափոխվել՝ **մ, ն, և, ր, ռ = մ, ն, և, ր, ռ**.

Լար>**լար**, խելք>**խելք**, գայլ>**կ'ել**, մագ>**մագ**, ծամ>**ծամ**, նուռն>**նուռ**, անիծ>**անիծ**, ռուս>**ռուս**, առաջ>**առաջ**, թառ>**թամ**, արեւ>**արեւ**, գիշեր>**քըշէր** և այլն:

Շրթնայիններից առաջ, սակայն, ն ձայնորդը վերածվել է **մ-ի՝** ն>մ.

Անբախտ>**ամբախտ**, անփորձանք>**ամփօռ՝ցանք**, անպետք>**ամպետրկը**, անմարդ>**ամմառ՝թ** և այլն:

**Անրմ** (<անուն) բառը, որտեղ երկրորդ **ն-ի** դիմաց առկա է **մ** հնչյունը, ինչպես Արցախ-Սյունիքի, Զուղայի բարբառներում և Արարատյան որոշ խոսվածքներում, պահպանել է հնդեվրոպական ածո՞ղ նախաձևի **m** հնչյունը<sup>7</sup>:

**Բ** ձայնորդը ձայնավորի հաջորդելիս վերածվել է **ռ-ի՝ դ, ձ, ջ, փ, ծ, ճ** ձայնեղ և խուլ **հպականներին, ինչպես նաև գ, ժ** ձայնեղ **շփականներին** նախորդող դիրքերում, և **ռ՝-ի՝ թ, ց, չ** ձնչեղ խուլ **հպականներին, ինչպես նաև ս, շ** խուլ **շփականներին** նախորդող դիրքերում **ր>ռ, ռ՝**.

Արտ>**առտ**, արտասուք>**առդասունք**, արձան>**առձան**, կարճ>**կառճ**, կրտել>**կըռղիլ**, դարարկ>**դարտակ**>**տմառդնգ**, խարտել>**խառղիլ**, արժենալ>**մառժիլ**, արծաթ>**արգաթ**>**առգաթ** և այլն.

Մարդ>**մառ՝թ**, մորթել>**մօռ՝թիլ**, կարդալ>**կառ՝թալ**, արդար>**մռ՝թմր**, արջ>**առ՝ջ**, հարց>**հառ՝ց**, փարջ>**փառ՝ջ**, հարսն>**հառ՝սը**, Արշակ>**Առ՝շագ**, և այլն.

Մահմանափակ թվով բառերում **ր-ի** դիմաց առկա է **լ** ձայնորդը՝ խանձիր>**խանձիլ**, մոծիր(ք)>**մօձիլք||մօձիրք**, Արկազն>**Ալգ՝նգ**:

Որոշ հնաբանություններում **լ** ձայնորդի դիմաց առկա է **դ** ձայնեղ **շփականը՝ լ>դ**<sup>8</sup>.

Բոլոճ>**բըղօջ**, ճուճուլ>**ճուջուլ**:

<sup>7</sup> Հր. Աճառյան, Վայերեն արմատական բառարան, հ. Ա, Երևան, 1971, էջ 208-209:

<sup>8</sup> Հ. Մուրադյան, նշված աշխատանքը, էջ 206-217:

## **Փոխազդեցական և դիրքային հնչյունափոխություն**

### **Բաղաձայնական կապակցություններ**

Կից բաղաձայնները խոսվածքում ենթարկվում են որոշակի հնչյունափոխական օրինաչափությունների:

Վերը մասնավոր առումներով արդեն նշվեց շփականահաջորդ հպականների հնչյունափոխության մասին: Ընդհանրացնելով ասվածը՝ կարող ենք նկատել, որ շփականից և հպականից կազմված գույգը խոսվածքում վերածվել է խուլ շփականից և խուլ հպականից կազմված գույգի.

Աղբիւր>ախաւոր, ագբն>ասալը, աղբ>ախալը, աղջիկ>ախճիգ, բողկ>պօխկը, շաղգամ>շախկամ, գաղթական>կախորագան, թուղբ>թուխալը, ագգ>ասկը, դաղձն>տախձը, մաղձ>մախձը, ծաղկել>ծախկ'իլ, պժգալ>փըշկըվիլ, քաղցր>քախժըր, աղքատ>ախկաղ, աղցան>ախծան, ժաժք>ժաձկ, յաղթել>ախտիլ, դժոխք>տըժօխկը, Ասքանագ>Ասկանագ, մեղք>մէխկը, աստառ>աստառտ, տախտակ>տախտագ, ապստարել>պըստարիլ, աստղ>աստըղ, տաշտ>տաշտ, պաշտել>պաշտիլ, տատել>տատիլ և այլն:

Կարելի է նկատել նաև, որ կիսաշփականից և պայթականից կազմված գույգը հնչյունափոխվում է խուլ շփականից և խուլ պայթականից կազմված գույգի.

Կոժկել>կօսկ'իլ, վարձք>վառ'սկը, ծածկել>ծասկ'իլ, կծկել>կըսկ'իլ, անէծք>անխկը, ործկալ>օռ'սկալ, խոցտիկ>խօստիգ, մեջք>մէշկը, աչք>աձկը և այլն:

Խոսվածքում առկա է տրնն փոխազդեցական-առնմանական հնչյունափոխությունը.

Մտնել>մըննիլ, մարնոց>մաննօց, մարնել>մաննիլ, ուրնաման>վօննաման, գետնախնձոր>կ'էննախընձօր, երնաթուխ>յէննաթուխ («ոչ թեժաթուխ լավաշ») և այլն:

Նարկապետ Օծով-Նորսի խոսվածքում առկա է նաև պն>մն փոխազդեցական-առնմանական հնչյունափոխությունը.

Դիպչել>դիպնել>դըմնիլ, կպչել>կպնել>կըմնիլ:

Ինչպես նկատվում է, հնչյունափոխության այս երևույթը պայմանավորված է չ սոսկածանցի դիմաց և սոսկածանցի առկայու-

թյամբ, որը բնորոշ է խոսվածքին (թռչել>թըռնիլ, փախչել>փախնիլ և այլն):

Կան նաև հնչյունների միաձուլման օրինակներ՝

վի>ֆ՝ հավաքել>վըհաքիլ>ֆաքիլ, Արևհար>Արեվհար>Արեֆադ:

### Հնչյունական շղթա

Հնչյունական շղթայում դիտվում են հաջորդ բառի սկզբի բաղաձայնի ազդեցությամբ բառավերջի բաղաձայնի հնչյունափոխության մի շարք օրինաչափ երևույթներ: Հնչյունափոխության նման օրինաչափություններ նկարվել<sup>9</sup> և ուսումնասիրվել են<sup>10</sup> են նաև այլ բարբառներում:

Ձայնեղները խուլերից առաջ խլանում են.

Կըրազ անիլ, բայց՝  
ջանըդ արբի,  
նըստաձ աղվես,

կըրակ տալ,  
ջանըդ սառել ա,  
նըստաձ ճանջ և այլն:

Մանդ ա թագրւմ, բայց՝  
ջօրացրաձ անջար  
կաջ ա քրարւմ

սանթ թագիլ,  
ջօրացրաց չիր,  
կաջ քրսօդ և այլն:

Հալ էմ պահիրւմ, բայց՝  
գիժ ախնիգ,  
մադ առնող,

հաֆ պահօդ,  
գիշ տրդա,  
մախ սարքող և այլն:

Արագ խոսելիս կիսաշփականները, ենթարկվելով նշված օրինաչափությանը, նաև պայթում են և վերածվում համապատասխան շփականի.

Դանդաղ խոսելիս  
Մարկաձ բադ  
կառթացաձ կիրք

Արագ խոսելիս  
սարկազ բադ  
կառթացաա կիրք

<sup>9</sup> Հր. Աճառյան, Զննություն պոլսահայ բարբառի, Երևան, 1941, էջ 11-12:

<sup>10</sup> Դ. Կոստանդյան, Երզնկայի բարբառը, Երևան, 1979, էջ 22-23, 34:

*քրնաց քաղաք  
ճանճ փրոնի*

*քրնաս քաղաք  
ճանճ փրոնի* և այլն:

Խուլերը ձայնեղներից առաջ ձայնեղանում են.

*Իրեք օր, բայց՝  
լավ մատոթ ա,  
վեցց օր,*

*իրեգ դիլին,  
մատո ջանմեռ չի ըլի,  
վեճճ դավուն և այլն:*

*պաբբա Արամն ա, բայց՝  
քաֆ քաշի,  
թաս լրվանալ*

*պաբբո Գրբյւզճուն ա,  
քաֆ վեննի,  
թազ դրլեգիլ և այլն:*

Արագ խոսելիս **ջ, ճ, չ** կիսաշփականներից առաջ սուլականները վերածվում են շչականների.

**Դանդաղ խոսելիս**

**Արագ խոսելիս**

**Շարք արագ խոսելիս**

*Հրրեվանիս  
ջամուշը*

*հրրեվանիգ ջամուշը*

*հրրեվանիժ  
ջամուշը*

*կալիս չէս*

*կալիս չէս*

*կալիշ չէս*

*քրնաց չիր պերի*

*քրնաս չիր պերի*

*քրնաշ չիր պերի և  
այլն:*

Արագախոսության արդյունք է նաև կիսաշփականների՝ շփականների վերածվելու երևույթը ձայնորդներից առաջ.

**Դանդաղ խոսելիս**

**Արագ խոսելիս**

*Ինճ նան ք՛էգ*

*ինգ նան ք՛էգ*

*ընդանց լավ խափիւ*

*ընդանս լավ խափիւ*

*կառժ մախաթ*

*կառժ մախաթ*

*ինչ լավ պան ա*

*ինշ լավ պան ա և այլն:*

*Երկնայեզվայինները ձայնավորներից առաջ*

**Գ, կ, ք** երկնայեզվային բաղաձայնները բառասկզբում և բառամիջում առաջնային շարքի **է, ի, ն, օ, ու** ձայնավորներից առաջ



անխտիր վերածվել են իրենց քմային փարբերակներին: Այս օրինաչափությանը ենթարկվում են ինչպես հնավանդ բառերը, այնպես էլ նոր և նորագույն փոխառությունները՝ կ'ինդ, կ'ինի, ք'երիլ, գ'օբուդ, գ'իդալ, գ'իժ, մանգ'էդ, պարկ'էրք, ք'ան'թանք'ան, ք'ուգ, գ'իլան, լազ'էռ, փազ'էթ, փըշկ'ան և այլն:

Այս երևույթը գործում է նաև հնչյունական շղթայում, եթե երևալեզվայինով ավարտվող և վերոհիշյալ ձայնավորներից մեկով սկսվող բառերը միասին են արտասանվում.

*Տըվինք տարան, բայց՝  
ընդանք կալ'դեն,  
կըրազ տալ,*

*տըվինք՝ իրանց,  
ընդանք՝ էգան,  
կըրազ՝ ին տըվել*

*Օծով-Նորսի խոսվածքում՝  
կըրակ տալ,*

*կըրակ՝ ին տըվել և այլն:*

### ***Հնչյունափոխական այլ երևույթներ***

#### ***Հավելում***

Խոսվածքում կան հնչյունի հավելման մի շարք օրինաչափ դեպքեր.

**Բ**-ի հավելում բառամիջում՝ ամոլ>ամբօլ, թմրել>տըմբըրիլ, ճմռել>ճըմբըրիլ, համարել>հըմբարիլ, գնուռ>գըմբուռ, **դ**-ի հավելում բառամիջում՝ մանր>մանդըր, ծունր>ծունդըր, ծանր>ծանդըր, **հ**-ի հավելում բառասկզբում՝ ալետր>հանլիօր, ոլորել>հըլօրիլ, օրորել>հըրօրիլ||ըրօրիլ, ուլունք>հուլունք, ուրագ>հուրաք, **ն**-ի հավելում բառամիջում՝ կանաչ>կանանչ, եղիճ>աղինչ, կամուրջ>կարմունչ, յիշոց>ուշունց, արտասուք>առդասունք, աղի(ք)>աղինք, չեչ>չենչ, դդում>տընդըմ, ամաչել>հըմանչիլ, **ռ**-ի հավելում բառամիջում՝ մզել>մըռզիլ, մծեխ>մըռջէխ, **ք**-ի հավելում բառավերջում՝ պարկեր>պարկ'էրք, գարուն>կարունք, աշխարհ>ախշարք, աշուն>աշունք, **ը**-ի հավելում բառավերջում՝ ազգ>ասկը, բողկ>պոխկը, գաղթ>կախտը, անէծք>անիսկը, ծառ>ծառը, **ը**-ի հավելում բառասկզբում **ռ** և **ր** ձայնորդներից առաջ՝ ռահան>ըռէհան, ռոճիկ>ըռօ-

ջիգ, ռուս>ըռուս, թուպե>ըրօպպե, Ռազմիկ>Ըռազմիգ, Ռափայել>Ը-  
ռափայիլ, ինչպես նաև և ձայնորդից առաջ նոր>ընօր և այլն:

Կան նաև հավելման այլ օրինակներ.

Մ-ի հավելում բառամիջում կոպալ>կօմբալ, ա-ի հավելում  
բառասկզբում նոթի>անօթի և այլն:

### *Անկում*

Խոսվածքում առկա են հնչյունի անկման հերևյալ օրինաչափ  
դեպքերը.

Ն-ի անկում բառավերջում մուկն>մուգը, ձուկն>ծուգը, կամն>  
կամը, նուռն>նուռը, ձեռն>ծեռը, մաքն>մաղը, դոխն>դօխ, կո-  
տինն>կօդին, ասեղն>ասեղ, յ-ի անկում բառասկզբում յաջողել>աջօ-  
ղալ, յոպոպ>պոպալու, յղի>ըղի, յուշապ>ուշաք, Յիսուս>Իսսոս, յ-ի  
անկում բառավերջում երախայ>ըրէխա, մանանայ>մանանա,  
տղայ>տրղա, սափանայ>սրղանա, հ-ի անկում բառամիջում աշ-  
խարհ(ք)>ախշարք, շնորհ(ք)>շընօրք, ք-ի անկում բառամիջում օրի-  
նել>օխնիլ, արջառ>աջառ, խարշել>խաշիլ, երբ>յէփ, սուրբ>սուփ,  
ջրաղաց>ճաղաց, Գրիգոր>Կիքօր և այլն:

Ձայնավորների անկման մասին խոսվեց ձայնավորների հնչյու-  
նափոխության բաժնում:

Կան նաև անկման այլ օրինակներ.

Տ-ի անկում բառամիջում պարճառավոր>պաջառավօր, ն-ի ան-  
կում բառամիջում լինել>ըլիլ և այլն:

Խոսվածքում առկա են նաև կրկնավոր բարդության առաջին ար-  
մադի վերջին հնչյունի անկման բազմաթիվ օրինակներ՝ ջախջա-  
խել>ճըջըխիլ, մրթմրթալ>մըմըրթալ, խրթխրթալ>խըրթխըրթալ,  
սրթսրթալ>սըրթսըրթալ, կրթկրթալ>կըրթկըրթալ, փնթփն-  
թալ>փընփընթալ>փըմփընթալ և այլն:

### *Դրափոխություն*

Խոսվածքում կան հնչյունների դրափոխության զգալի թվով  
օրինակներ.

Ականջ>անգաջ (կ/ն), բորբոս>փըփեռսը (ր/բ), բանալի>պը-  
լանիք (ն/լ) անալի>ըլանի (ն/լ), աղեղն>անեղ (ղ/ն), կամուրջ>կար-  
մունջ (մ/ր), այրելիք>ըլելիք (ր/լ), թթխմոր>փըխփրմօր (թ/խ),  
գոքանջ>գանքաջ (ք/ն), դափարկ>փմռոյմգ (փ/ր), փեպուր>թե-  
փուտ||թեբուտ (փ/փ), թոնիր>թօրեն (ն/ր), աշխարհ>ախշարք (շ/խ),  
անձրել>անձվեր (ր/վ), արեգակն>ըրեքնագ (կ/ն), լվացք>վըլասկը  
(լ/վ), ոչխար>վօխճնար (չ/խ), (հ)ամաչել>մըհանչիլ, համար>մըհար  
(հ/մ), կակղել>կախկիլ (կ/ղ), նալ>լաննը (ն/լ) և այլն:

### *Կրկնություն*

Տնչյունի կրկնման (տրականության) դեպքերն առավել նկատելի  
են բնաձայնական բառերում.

Կոռռալ, մրռռալ, ֆըշշալ, ֆըսսալ, ճրռռալ, մըզզալ, վըզզալ,  
թըշշալ, սըղղալ և այլն:

Կան նաև այլ օրինակներ.

Թ-վականներում վեց>վեցց(ը), ութ>ուրթ(ը), տասն>տասս(ը), յի-  
սուն>հիծծուն, հազար>հազ(զ)ար, ինչպես նաև Յիսուս>Իսսուս,  
երախ>ըռռէխ, ջոլորել>ճըլլօրիլ, լոպէ>ըրօպպէ, ամեն>ամմեն և  
այլն:

Այս հնչյունափոխությունը խոսվածքում հիմնականում սաստ-  
կական բնույթ ունի:

### *Բաղաձայնների առնմանություն*

Կան բաղաձայնների առնմանության մի շարք օրինակներ.

Մաքնոց>մաննօց, մքնել>մըննիլ, մաքնել>մաննիլ, ոքնա-  
ման>վօննաման, ուռչել>ուռռիլ, մոլոր>մըլօլ, կաճապ>կաջաջ, ել-  
նել>լէլիլ, կլորիկ>կըլօլիգ||պըլօլիգ||փըլօլիգ, Փիլիպոս>Պըլիպօս,  
Կիրակոս>Կըրնագճս>Գըրնագճս, Պառել>Պապել||Պաբել և այլն:

### *Բաղաձայնների տարմանություն*

Մի շարք բառերում խ-ն դ-ից տարմանվելով դարձել է հ՝ խ>հ.

Խաղող>հաղօղ, խաղ>հաղ, խեղճ>հեղջ, խեղճացնել>հեղջաց-  
նիլ, խաղալ>հաղ անիլ, խաղաղ>հաղաղ, խաղաղութիւն>հաղա-  
ղըթուն և այլն:

Բաղաձայնների փարսմանության այլ օրինակներ նույնպես կան.  
Բարձր>պանցըր, շրէշ>սըրէշ||սըրէժ, ննջել>մընջալ, բոկիկ>պօ-  
բիգ և այլն:

### *Ձայնավորների ներդաշնակություն*

Խոսվածքում առկա են ձայնավորների առավելապես հետընթաց,  
երբեմն նաև առաջընթաց ներդաշնակության օրինակներ.

Աւել(ի)>Էվէլ(ի), թիկունք>թո՞ւգո՞ւնք, լեզու>լո՞ւզո՞ւ, կանեփ>կէ-  
նէփ, գոքանչ>գանքաչ, հայելի>հէլի>հիլի, մորուք>մո՞ւրո՞ւք, կո-  
կոն>կօգոմ>կուգոմ, մենակ>մէննազ>մաննազ, Ռուբէն>Ըռուբէն>Ու-  
ռուբէն>Ուռուբէ||Ուռբէ, ինչպես նաև մարգարէ>մարքարա, կարե-  
նալ>կարանալ և այլն:

### *Ամփոփում*

Խոսվածքում առկա են ամփոփման բազմաթիվ օրինակներ:  
Ամփոփման են ենթարկվում ոչ միայն առանձին բառեր, բառա-  
կապակցություններ, այլև երբեմն նախադասություններ.

Շնորհավոր>շընհավոր, բարի երեկո>պարո՞ւգո՞ւն, համար>մար,  
ինչի համար>ինչիմար, ես ինչ իմանամ>յէսիմ, ով է գիտենում>օվայ-  
դըմ||օվայըմ, դեպի ուր>տըվօրը, ընդ այս>տէսը, ընդ այդ>տէդը, ընդ  
այն>տէնը, եկ այստեղ>յէստէ՛, տուր ինձ>տուրի՛, ահաւասիկ>հէսիգ,  
ահաւաղիկ>հէղիգ, ահաւանիկ>հէնիգ, փորս ի վայր>փոռ՝սըվէր,  
դար ի վեր>տւիրվէր, գլուխ ի վայր>կըլխըվէր, ինչ տեղ>ըշտէղ, ամեն  
օր>ամնօր, մեծ-մեծ>մէմէնձ, խաչհամբույր>խըչհամբուր, ուսումնա-  
րան>ուսմարան («դպրոց»), աշնանաւար>աշնավար («աշնանա-  
ցան»), զարնանաւար>կըռնավար («զարնանացան»), այ տղա>մողմի՛,  
վեր կաց>վէ՛կաց, վեր կացեք>վէ՛րէք, Տյառնընդառաջ>Դատանջ,  
Սուրբ Նովիաննես>Սըռվանէս, Սուրբ Նակօր>Սըրգագօփ, Թովմա  
Առաքյալ>Թօփառաք՛ել, Քամոյ խաչ>Քամխաչ||Քախոմաչ, Աղաւնա-  
ծոր>Ըղնածօր, Վարդիթեր>Վառ՞թէր, այգողք>այք և այլն:

### *Պարզեցում և բարդացում*

Ննջումի պարզեցման և բարդացման օրինակները խոսվածքում  
համեմատաբար սակավ են.

Ձգտալ>զրգրողալ, ածելի>առզրլի, արծիւ>առզիւ, արծաթ>առզաթ, պարծանք>պառզանք, Ծառգարդար>Ջրոզանթանր, կեղև բառի հոմանիշներից՝ կեղա>քրլեք>խրլեք, կճեղա>քրջեք>խրջեք<sup>11</sup>.

Քանզ>քանց, գերեզման>կրրեճման, մժեխ>մրոջխ, կռժ>կրռժ||կրռէնջ, յիսուն>հիծծուն:

### Ժողովրդական սրուգաբանություն

Խոսվածքում առկա են նաև ժողովրդական սրուգաբանության օրինակներ.

Պարկապզուկ>պարգապուբուզ («պարկի կույր»), մկնաբամ>մգրադամ(ան) («մկրաբաման»), ականջամուր>անգաջամընուն («ականջի մուն»), մարդակեր>մառթակ'ել («մարդագայլ»), մալունաշուրթն>մաննաշունջ («մալի շունջ՝ րնքոց»), խոջակ>խրոթարնզ («խոջակի րակ»), սարդ>սրդանա («սարանա»), վերնաշապիկ>վրնշաբիք («վրայի շապիկ»), եղիսաբեր>եղսապեթ («Յուլի բերդ»), Յուդաբեր>Յեդապեդ («Յուլի պեր»), Բազմունք>Պազուզ («Բազուկ») և այլն:

### Բաղաբանություն

Խոսվածքում առկա են երկու նույնանիշ կամ մերձիմաստ բառերի միաձուլմամբ նոր բառ կազմվելու՝ բաղաբանության (կոմբամինացիա)<sup>12</sup> օրինակներ՝ ծամօն + մասրակ > ծանդաք («ծամոն»), րոտրիկ + ոլոք > րոտօք («շար նիհար, ոսկրոտ ուրք»):

Կա նաև փոխառյալ բառերի բաղաբանության օրինակ. կարծում ենք, որ ճանկ, մագիլ բառերի պարսկերեն փննջուլ (پنجول) և չանգուլ (چنگول) հոմանիշների միախառնումից խոսվածքում առաջացել է չանջոլ (<չանջուլ) («ճանկ, մագիլ») ձևը:

<sup>11</sup> Հր. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, հ. Բ, Երևան, 1951, էջ 419:

<sup>12</sup> Հ. Պետրոսյան, Մ. Գալստյան, Թ. Կարազույան, Լեզվաբանական բառարան, Երևան, 1975, էջ 47:

## ՉԵՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

### ԳՈՅԱԿԱՆ ԱՆՈՒՆ

Խոսվածքում *գոյականի հոգնակի թիվը* կազմվում է հետևյալ վերջավորություններով.

էր-ով կազմվում է միավանկ բառերի հոգնակին՝ **էձ-էձէր, կօվ-կօվէր, սիռդ-սրռդէր, ծու-ծրվէր, պաղ-պաղէր, շուն-շրներ, լու-լրվէր, կիրք** (<գիրք)-**կրրք'եր**: Նին հայերենում բաղաձայն+ն-ով վերջացող միավանկ բառերը հոգնակիում պահպանել են ն հնչյունը՝ մուկն>**մուգը-մրգներ, ձուկն>ձուգը-ծրգներ, նուռն>նուռը-նրռներ, թռռն>թռռը-թռռներ, հարսն>հառ'սը-հառ'սներ, մալն>մաղը-մաններ**: Որոշ բառեր, որոնք հավանաբար նախկինում ն են ունեցել, նույնպես հոգնակի ձևում ն-ն պահպանել են՝ **ծառը** (<ծառն)-**ծառներ, կափը** (<գաբն)-**կափներ, թեղը** (<թեռն)-**թեռներ, խօփը** (<խոփն)-**խօփներ, ճուղը** (<ճիւղն)-**ճրղներ, քուղը** (<քուղն)-**քրղներ**:

**Նի/ներ** վերջավորությամբ կազմվում է հիմնականում բազմավանկ բառերի հոգնակին (տղիղ ձևերում **նի-ով, թեք ձևերում՝ նէր-ով**)՝ **աղվես-աղվեսնի/աղվեսների, վոխճաճ-վոխճաճնի/վոխճաճների, ալապաստրագ-ալապաստրագնի/ալապաստրագների, առնեղ-առնեղնի/առնեղների, թաքավօր-թաքավօրնի/թաքավօրների, ասեղ-ասխընի/ասխըների, կրջուջ-կրջըջնի/կրջըջների, առու-առվընի/առվըների, կաղու-կաղվընի/կաղվըների, փրրէխ-փրրիխընի/փրրիխըների, ախպուր-ախպըրնի/ախպըրների, կ'եռինք-կ'եռ'քընի/կ'եռ'քըների, շափք-շապկընի/շապկըների, աղինք-ախկընի/ախկըների**:

Ինչպես նկատվում է վերջին օրինակներից, **նի/ներ-ով** կազմված հոգնակի ձևերում բաղաձայնային կուտակումների արդյունքում երբեմն փեղի է ունենում ն հնչյունի անկում և ի>ը հնչյունափոխություն:

Ք վերջավորությամբ կազմվում է հիմնականում ձայնավորով վերջացող բառերի հոգնակին՝ **ըրէխա-ըրէխէք, սըղանա-սըղանէք, հիլի** (<հայելի)-**հիլէք, ճըրաքու-ճըրաքվէք, պէլի-պէլէք, մըղանի-մըղանէք, կաղու-կաղվէք||կաղվընի, աման-ամանէք, ախպեր-ախ-**

**պէրք, քիր-քըվէրք:** Ինչպէս երևում է օրինակներից, **ք** վերջավորությունը, ավելի վաղ շրջանում կիրառվելով **այ**-ով ավարտվող բառերի ոլորտում, **այ>է** հնչյունափոխությունից հետո դիպվել է որպէս նոր հոգնակերպ վերջավորություն՝ **էք**, որը համաբանությամբ ընդգրկել է **ի, ու** ձայնավորներով, երբեմն նաև բաղաձայնով վերջացող բառերը: Աղավաճորի, Ռինդի և Օծով-Նորսի խոսվածքներում, սակայն, ձայնավորահանգ բառերը անաղարտորեն ստանում են գրաբարի **ք** հոգնակերպը՝ **կինի-կինիք, քամի-քամիք, մղդանի-մղդանիք, առծըլի-առծըլիք, խընամի-խընամիք, դասափու-դասափուք:** Ի դեպ, այս երևույթն ընդգրկում է նաև նորաբանությունները՝ **ավփօ-ավփօք, կինօ-կինօք, վէդրօ-վէդրօք:**

**Էրք** վերջավորությունը կիրառական է մի շարք բառերի հոգնակի ձևերում՝ **ախճիգ-ախճըգ'էրք, փրղա-փրղէրք, կ'էղին** (<գէտին)-**կ'էննէրք, ծօց-ծօցէրք, կօխկ-կօխկ'էրք, մէչ** («միջուկ»)-**մէչէրք:**

**Ինք** և **անիք** վերջավորությունները համապատասխանաբար ստանում են **մարդ** և **կին** բառերը՝ **մառ'թ-մառ'թինք, կընիգ-կընանիք:**

Սահմանափակ կիրառություն ունեն հետևյալ բաղադրյալ վերջավորությունները, որոնցով կազմված հոգնակի ձևերը հիմնականում ունեն հավաքական իմաստ.

**Արենք՝ փեղ-փեղարենք, կ'եղ-կ'եղարենք, սերմը-սերմարենք:**

**Անք՝ փըշուր-փըշուրանք, փագ-փագանք, ծի-ծիյանք:**

**Դանք՝ կըղօր-կըղօրդանք:**

**Նէրք՝ ափը-ափներք:**

Տոհմանունները և անեզական մի շարք բառեր կազմվում են **անք, էնք, օնք** վերջավորություններով՝ **Մըխսօնք, Դամըռ'չօնք, Խառաղէնք, Ուսէփէնք, հէրանք, ք'էռօնք, խընամօնք:**

Որոշիչ հոդ ստանալիս **ա** ձայնավորին հանգող գոյականներում փեղի է ունենում **այ>է** հնչյունափոխություն՝ **սըղանա** (<սափանայ)-**սըղանէն, փրղա** (<փղայ)-**փրղէն, Աննա** (<Աննայ)-**Աննէն:**

Մրացական հարկացյալի հոգնակին կազմվում է կրկնակի վերջավորությամբ, որոնցից վերջինը որպէս կանոն **նի**-ն է՝

**էձ-էձէր-էձէրնիս** (մեր այծը, մեր այծերը)

**էձէրնիդ** (ձեր այծը, ձեր այծերը)

**ծաղիգ-ծախկընի-ծախկընէրնիս** (մեր ծաղիկը, մեր ծաղիկները)

**ծախկընէրնիդ** (ձեր ծաղիկը, ձեր ծաղիկները):

**Էք** վերջավորությամբ կազմված հոգնակիների ստացական հաքվացյալի եզակին և հոգնակին քարքերակվում են.

Խընամի-խընամէք-**խընամէքնիս** (մեր խնամիները)  
**խնամէքնիդ** (ձեր խնամիները)  
**խնամէրնիս** (մեր խնամին)  
**խնամէրնիդ** (ձեր խնամին):

Ստացական հոդ ստացած գոյականը հանդես է գալիս նաև դերանվան հետք.

**Ախճիգըս նան քողէդ մին թայ էն:**

**Իմ ախճիգըս նան քօ քողէդ մին թայ էն:**

(Իմ աղջիկն ու քօ քղան հասակակից են:)

Խոսվածքի անվանական հոլովման համակարգը արդի հայերենի նման ունի հինգ հոլով՝ ուղղական (ուղղական-հայցական), քրական (սեռական-քրական), բացառական, գործիական, ներգոյական:

Բոլոր հոլովածներում գոյականը կարող է ստանալ որոշիչ հոդ:

*Տրական հոլովն* ունի **ի, ան, օ, վա(ն), ա և (օն)ց** հոլովական վերջավորությունները (վերջինը միայն հոգնակի ձևերի համար), առկա են նաև **օ-ով** և **ա-ով** հերթագայություններ:

*Բացառական հոլովի* հիմքը սովորաբար քրականն է, որին ավելանում է **(ի)ց** վերջավորությունը, զուգահեռ կիրառական է նաև **է(ն)** վերջավորությամբ ձևը, որի դեպքում հիմքը ուղղականն է կամ քրականը (սար-սարի-սարից||սարէն, ճուր-ճըրի-ճըրից||ճըրէն, հեր-հօր-հօրից||հօրէն, ախալեր-ախալօր-ախալօրից(ը)||ախալօրէն, քըշեր-քըշերվա(ն)-քըշերվանից(ը)||քըշերվանէ): Նոգնակի սեռականում **(օն)ց** ունեցող բառերը որպես կանոն ստանում են **էն** վերջավորությունը (հըրեվանէնք-հըրեվանէնց-հըրեվանէնցէն, ք'եռօնք-ք'եռօնց-ք'եռօնցէն, ըրէխէք-ըրէխէքօնց-ըրէխէքօնցէն), իսկ **ա-ով** թեքվող բառերի բացառականը նույնանում է քրականին.

**Նախճըվանա ժամը կարմիր քարից ա:**

(Նախիջևանի եկեղեցին կարմիր քարից է:)

**Նախճըվանա էմ կալի:**

(Նախիջևանից եմ գալիս:)

*Գործիական հոլովի* միակ վերջավորությունը **օվ-ն** է, ընդ որում ներքին թեքման և հոգնակի սեռականում **(օն)ց** ունեցող բառերի համար հիմքը քրականն է, իսկ մնացած դեպքերում ուղղականը



(սին-սան-սանօվ, հեր-հոր-հորօվ, ըրէխէք-ըրէխէքօնց-ըրէխէքօնցօվ, ք'էոնք-ք'էոնց-ք'էոնցօվ, բայց՝ կըջուջ-կըջըջօվ, ծաղիգ-ծախկօվ):

**Ներգոյական հոլովը** կազմվում է ըմ վերջավորությամբ: Նրա և գործիականի հիմքերը միշտ համընկնում են (**սար-սարօվ-սարըմ, կըջուջ-կըջըջօվ-կըջըջըմ, հոր-հորօվ-հորըմ, պարգ-պարգօվ-պարգըմ**):

Այս հոլովածնը ժամանակակից գրական հայերենի համապատասխան հոլովածնի համեմատությամբ խոսվածքում առավել կիրառական է.

**Առվըմը փախծը կա:**

(Առվի մեջ դաղձ կա:)

**Քննանիը հորըմը չի, ախպօրըմն ա:**

(Նայրը մեղք չունի, եղբայրն է մեղավոր, բառացի՝ Մեղքը հոր մեջ չէ, եղբոր մեջ է:)

**Օրըմըս ըղենց պան չեմ փեսել:**

(Կյանքիս մեջ նման բան չեմ փեսել:)

**Քարըմը արին կա:**

(Քարի մեջ արյուն կա:)

**Ծառան քօքըմը սունգը կար:**

(Ծառի բնին սունկ կար:)

Խոսվածքի *արտաքին թեքման* հոլովումներն են.

Ի հոլովումը ամենագործածականն է խոսվածքում, որով թեքվում է բառերի գերակշիռ մասը (սար-սարի, քար-քարի, ճուր-ճըրի, լիս-լըսի, չնմիչ-չնմչի, կարիջ-կարջի, կարմունջ-կարմընջի, կըրէզման-կըրէզմանի, ուսմարան-ուսմարանի, թըլթու-թըլթվի, կադու-կադվի, առու-առվի, Անուշ-Անուշի, Մարօ-Մարօյի, Մարքարա-Մարքարի):

**ՈՒ** ծըմէրուգ(ը)                      ծըմէրգընի(ն)

**Տ** ծըմէրգի(ն)                      ծըմէրգընէրի(ն)

**Բ** ծըմէրգից(ը)                      ծըմէրգընէրից(ը)

**Գ** ծըմէրգօվ(ը)                      ծըմէրգընէրօվ(ը)

**Ն** ծըմէրգըմ(ը)                      ծըմէրգընէրըմ(ը)

Ան հոլովմամբ հոլովվում են հիմնականում նախկին **բաղաձայն + ն** վերջավորությամբ բառերը (ծուգը-ծըգան, մուգը-մըգան, փուռը-փըռան, ծունգը-ծընգան, ծառը-ծառան, խօփը-խօփան, ինչպես նաև ախճիգ-ախճըգան(ն), կընիգ-կընգան(ն):

|                      |               |
|----------------------|---------------|
| <b>ՈՒ</b> ծունգը     | ծընգընի(ն)    |
| <b>Տ</b> ծընգան(ը)   | ծընգըների(ն)  |
| <b>Բ</b> ծընգանից(ը) | ծընգըներից(ը) |
| <b>Գ</b> ծընգանով(ը) | ծընգընեով(ը)  |
| <b>Ն</b> ծընգանըմ(ը) | ծընգըներըմ(ը) |

**Օ**-ով թեքվում են **ի** ձայնավորով վերջացող բառերը (մըղանի-մըղանօ, կիհի-կիհնօ, հօքի-հօքօ, ըզնապեռ<sup>1</sup>թցի-ըզնապեռ<sup>2</sup>թցօ, Անայի-Անայօ): Անշուշտ, այսպեղ պահպանվել է հին հայերենի<sup>1</sup> **ո** հոլովիչը (հմմտ. ոսկի-ոսկոյ, մաքանի-մաքանոյ, հոգի-հոգոյ, որդի-որդոյ), որ մեծ կիրառություն ուներ նաև միջին հայերենում<sup>2</sup> (հմմտ. գինի-գինոյ, եկեղեցի-եկեղեցոյ, կաշի-կաշոյ, գարի-գարոյ):

|                   |               |
|-------------------|---------------|
| <b>ՈՒ</b> սինի(ն) | սինեք(ը)      |
| <b>Տ</b> սինօ(ն)  | սինեքօնց(ը)   |
| <b>Բ</b> սինօց(ը) | սինեքօնցեն    |
| <b>Գ</b> սինով(ը) | սինեքօնցով(ը) |
| <b>Ն</b> սինըմ(ը) | սինեքօնցըմ(ը) |

**Ի**-ով վերջացող՝ ազգակցություն արտահայտող որոշ բառեր և անձնանուններ փրականում ստանում են նաև **նի** վերջավորությունը (բիբի-բիբինի||բիբօ, զիզի-զիզինի||զիզօ, քեռի-քեռինի||քեռօ, պելի-պելինի||պելօ, Մամրի-Մամրինի, Ծաղի-Ծաղինի, Նաղի-Նաղինի). այսպեղ **ն** հնչյունը հանդես է գալիս որպես ձայնակապ: Աղավնաձորի և Կեչուսի խոսվածքներում **օ** հոլովմանը փոխարինում է **ու** հոլովումը (մըղանի-մըղանու, քամի-քամու, հօքի-հօքու, ըզնապեռ<sup>1</sup>թցի-ըզնապեռ<sup>2</sup>թցու, Անայի-Անայու), որն ամենայն հավանականությամբ գրական հայերենի ազդեցություն է: Օծուփ-Նորսի խոսվածքում նույնպես **օ**-ի փոխարեն առկա է **ու** հոլովում, որը, սակայն, կարելի է բացարթել Արցախ-Սյունիքի խոսվածքների հետ աշխարհագրական մերձավորությամբ:

<sup>1</sup> Ա. Աբրահամյան, Գրաբարի ձեռնարկ, Երևան, 1976, էջ 50-52:

<sup>2</sup> Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության, հ. Բ, Երևան, 1975, էջ 17-22: Մ. Ղազարյան, Նայոց լեզվի համառոտ պատմություն, Երևան, 1981, էջ 237-242:

**Վա(ն)** հոլովմանն են ենթարկվում ժամանակ ցույց տվող մի շարք բառեր (օր-օրվա(ն), քրշեր-քրշերվա(ն), ծնունդ-ծնունդվա(ն), տա-րի-տարվա(ն), առաջ-առաջվա(ն), յեղ-յեղվա(ն):

|                                      |                |
|--------------------------------------|----------------|
| <b>ՈՒ</b> քրշեր(ը)                   | քրշերնի(ն)     |
| <b>Տ</b> քրշերվա(ն)(ը)               | քրշերների(ն)   |
| <b>Բ</b> քրշերվանե(ն)  քրշերվանից(ը) | քրշերներից(ը)  |
| <b>Գ</b> քրշերով(ը)                  | քրշերներով(ը)  |
| <b>Ն</b> քրշերում(ը)                 | քրշերներում(ը) |

**Ա**-ով թեքվում են բոլոր տեղանունները (Ըրեվան-Ըրեվանա, Նախճրվան-Նախճրվանա, Ըզնապեռ-Ըզնապեռա, Զահրի-Զահրվա, Զրվն-Զրվա):

|                     |             |
|---------------------|-------------|
| <b>ՈՒ</b> Ըրեվան(ը) | Կրնդեվազ(ը) |
| <b>Տ</b> Ըրեվանա    | Կրնդեվազա   |
| <b>Բ</b> Ըրեվանա    | Կրնդեվազա   |
| <b>Գ</b> Ըրեվանովը  | Կրնդեվազովը |
| <b>Ն</b> Ըրեվան     | Կրնդեվազ    |

**Անշուշտ**, այստեղ պահպանվել է հին հայերենի արտաքին թեքման **ա** հոլովումը<sup>3</sup> (հմմտ. Մծբին-Մծբնայ, Նոովմ-Նոովմայ):

**Ց**-ով թեքվում են ազգակցական կապեր արտահայտող մի շարք անեզական բառեր (հերանք-հերանց, պարօնք-պարօնց, պելօնք-պելօնց, Խաչըբաբեք-Խաչըբաբեց, Փօլադենք-Փօլադենց, Զարգենք-Զարգենց, Կրովրոնք-Կրովրոնց):

|                      |              |
|----------------------|--------------|
| <b>ՈՒ</b> Մըխսոնք    | ք'նոնք(ը)    |
| <b>Տ</b> Մըխսոնց(ը)  | ք'նոնց(ը)    |
| <b>Բ</b> Մըխսոնցեն   | ք'նոնցեն     |
| <b>Գ</b> Մըխսոնցովը  | ք'նոնցով(ը)  |
| <b>Ն</b> Մըխսոնցումը | ք'նոնցում(ը) |

**Օնց** վերջավորությունը համաբանությամբ ծագել է **ց** հոլովումից՝ դիտվելով որպես ինքնուրույն հոլովական վերջավորություն: Դրանով թեքվում են **ք**, **եք**, **երք** վերջավորություններով հոգնակի ձևերը (սղդանեք-սղդանեքօնց, ախալերք-ախալերքօնց, ախճըգ'երք-ախճըգ'երքօնց, կրնանիք-կրնանիքօնց, կ'եններք-կ'եններքօնց):

|                        |                 |
|------------------------|-----------------|
| <b>ՈՒ</b> ախալերք(ը)   | ախճըգ'երք(ը)    |
| <b>Տ</b> ախալերքօնց(ը) | ախճըգ'երքօնց(ը) |

<sup>3</sup> Ա. Աբրահամյան, Գրաբարի ձեռնարկ, Երևան, 1976, էջ 24-27:

|          |                 |                   |
|----------|-----------------|-------------------|
| <b>Բ</b> | ախալերթօնցէն    | ախճըգ'երթօնցէն    |
| <b>Գ</b> | ախալերթօնցօվ(ը) | ախճըգ'երթօնցօվ(ը) |
| <b>Ն</b> | ախալերթօնցըմ(ը) | ախճըգ'երթօնցըմ(ը) |

Խոսվածքի *ներքին թեքման* հոլովումներն են.

**Օ** ներքին հոլովումն ընդգրկում է ազգակցական կապեր ար-  
փահայտող մի շարք բառեր (հեր-հօր, մեր-մօր, աներ-անօր, հրնգ'եր-  
հրնգօր, փէրըր-փէթօր, ք'իր-քըվօր, ըսկ'եսօր-ըսկ'եսօր):

|           |                       |                 |
|-----------|-----------------------|-----------------|
| <b>ՈՒ</b> | ախալեր(ը)             | ախալերք(ը)      |
| <b>Տ</b>  | ախալօր(ը)             | ախալերթօնց(ը)   |
| <b>Բ</b>  | ախալօրէն  ախալօրից(ը) | ախալերթօնցէն    |
| <b>Գ</b>  | ախալօրօվ(ը)           | ախալերթօնցօվ(ը) |
| <b>Ն</b>  | ախալօրըմ(ը)           | ախալերթօնցըմ(ը) |

Ինչպես նկատվում է, **ըսկ'եսօր** բառի սեռականը նույնանում է ուղղականին, իսկ **ք'իր** բառը սեռականում պահպանել է հնդեվրո-  
պական \**syésōr* (սեռ. *syésrós*)<sup>4</sup> նախաձևը:

**Ա** ներքին հոլովման ենթարկվում է միայն երեք բառ՝ **փուն-փան,**  
**շուն-շան, սին-սան:**

|           |          |            |
|-----------|----------|------------|
| <b>ՈՒ</b> | փուն(ը)  | փըներ(ը)   |
| <b>Տ</b>  | փան(ը)   | փըների(ն)  |
| <b>Բ</b>  | փանից(ը) | փըներից(ը) |
| <b>Գ</b>  | փանօվ(ը) | փըներօվ(ը) |
| <b>Ն</b>  | փանըմ(ը) | փըներըմ(ը) |

Խոսվածքում **փէր** և **Ասփօձ** բառերն ունեն յուրօրինակ թեքում.

|           |            |                       |                    |
|-----------|------------|-----------------------|--------------------|
| <b>ՈՒ</b> | Ասփօձ      | փէր(ը)                | փէրնրէնք(ը)        |
| <b>Տ</b>  | Ասսօ(ն)    | փըրօնչ(ը)             | փէրնրէն(քօն)ց(ը)   |
| <b>Բ</b>  | Ասսանէ     | փըրօնչից(ը)           | փէրնրէն(քօն)ցէն    |
| <b>Գ</b>  | Ասսանօվ(ը) | փըրօնչէն  փըրօնչօվ(ը) | փէրնրէն(քօն)ցօվ(ը) |
| <b>Ն</b>  | Ասսանըմ(ը) | փըրօնչըմ(ը)           | փէրնրէն(քօն)ցըմ(ը) |

Ինչպես նկատվում է, **Ասփօձ** բառը **օ** արտաքին հոլովմամբ  
թեքվող միակ **ի**-ով չվերջացող բառն է, որի թեք ձևերում փեղի է  
ունեցել **փ** հնչյունի անկում և **սձ>սս** փոխազդեցական-առնմանական  
հնչյունափոխություն, իսկ **փէրը** միակ բառն է, որ հոլովվում է հա-  
վելյալ **ն** ստացած **օչ(<ոչ)** հոլովմամբ:

<sup>4</sup> Հր. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, Խ. Դ, Երևան, 1979, էջ  
586-587:

Սրացական հատկացյալի եզակին և հոգնակին հոլովվում են հետևյալ ձևով.

|                      |                                 |
|----------------------|---------------------------------|
| <b>ՈՒ</b> կարասնիս   | կարասներնիս                     |
| («իմ կարասները»)     | («մեր կարասը», «մեր կարասները») |
| <b>Տ</b> կարասներիս  | կարասներներիս                   |
| <b>Բ</b> կարասներիցս | կարասներիցս                     |
| <b>Գ</b> կարասներովս | կարասներներովս                  |
| <b>Ն</b> կարասներմս  | կարասներներմս                   |

## ԱԾԱԿԱՆ ԱՆՈՒՆ

Խոսվածքում առկա են ինչպես *որակական* (մենձ, պըջիր, էրգ'են, կառջ, փեղին և այլն), այնպես էլ *հարաբերական* (փեղէ||փեղի, արգաթէ||արգաթի, հորագան, պաբէգան և այլն) ածականներ:

Որակական ածականներն ունեն համեմատության երեք աստիճան՝ դրական, բաղդատական, գերադրական:

Դրական աստիճանն ընդհանուր է արդի հայերենի հետ՝ **նախշուն ախճիգ, փեղին ծաղիգ, սիպրնագ փնռոյն** և այլն:

Բաղդատականն ունի առավելական և նվազական աստիճաններ:

Առավելականն արտահայտվում է նկարագրական ձևով (առաջին օրինակ) կամ բացառական խնդրով (երկրորդ օրինակ).

**Էս ծառը մենձ ա, քանց էն մինը:**

**Էս ծառը էն ծառանիցը մենձ ա:**

Նվազականն արտահայտվում է **ավուն** ածանցով և ցույց է տալիս փվյալ հատկանիշից քիչ ունենալը.

**Կարմրաավուն խընձոր, մենձավուն ծըմէրուգ, էրգ'ենավուն փանձ:**

Գերադրական աստիճանը կազմվում է **շաղ, լաղի, թոնդ** բառերով, **ամմենա** նախածանցով ինչպես նաև **սաղ, բիթնմ, բիրնդի** փոխառյալ դերանունների բացառական հոլովածներով և արտահայտվում է գերազանց հատկանիշ.

**Շաղ կ'էշ, լափ պըջիր, թոնդ կաբիդ:**

**Թուխծամը մնիլի ախճըգ'էրքոնցէն ամմենանախշունն էր:**

(Թուխծամը թաղի աղջիկներից ամենագեղեցիկն էր:)

**Յէրըլէմշի մէջին բիրնդօցը լավը շնափրնաւուն ա:**

(Մրգերից ամենալավը դեղձն է:)

Մասրկական իմաստ արտահայտելու համար ածականը կրկնվում է՝ մէնծ-մէնծ, սէվ-սէվ, ծանդըր-ծանդըր, փաք-փաք, նախշուն-նախշուն և այլն:

Գոյականաբար գործածվող ածականը հոլովվում է ի հոլովմամբ (սիպարնգ(ը)-սիպարնգի(ն)-սիպարնգից(ը)-սիպարնգով(ը)-սիպարնգմ(ը):

## ԹՎԱԿԱՆ ԱՆՈՒՆ

Խոսվածքի *քանակական* թվականներն են՝ մին, երգու, իրէք, չօռ՝ս(ը), հինգ(ը), վէցց(ը), օխպը, ութթ(ը), ինն(ը), փասս(ը), փասնըմին, փասնէրգու, փասնիրէք, փասնըչօռ՝ս, փասնըհինգ, փասնըվէցց(ը), փասն(ը)օխպը, փասն(ը)ութթ(ը), փասն(ը)ինն(ը), քըսան, (յ)էռէսուն, քառասուն, հիծծուն, վածծուն, օխփանասուն, ութանասուն, իննըսուն, հնարիր, երգու հնարիր, հազ(զ)ար...

**2973-Էրգու հազ(զ)ար իննը հնարիր օխփանասն(ը)իրէք:**

Քանակական թվականները հոլովվում են ի հոլովմամբ (մին-մինի, երգու-երգըսի, իրէք-իրէքի, օխպը-օխպի, իննըսնըվէցց-իննըսնըվէցցի, հնարիր-հնարրի):

*Բաշխական* թվականները կազմվում են քանակականների կրկնությամբ՝ մին-մին, չօռ՝ս-չօռ՝ս, էռէսուն-էռէսուն, հնարիր-հնարիր և այլն:

*Կոպորական* թվերն արտահայտվում են նկարագրական եղանակով՝ ութթիցը մինը (1/8), փասնօխպիցը իրէքը (3/17) հնարրիցը օխպը (0,07) և այլն:

Խոսվածքի *դասական* թվականներն են **անշի** (առաջին), **վեռ՝ջի** (վերջին), ինչպես նաև **ըմ** (<ում) ածանցով կազմված ձևերը (երգըսըմ, իրէքըմ, փասսըմ, հնարըրըմ և այլն):

**Քըվօրըս անշի թօռը Պագրաթն ա:**

(Քրոջս առաջին թօռը Բագրաթն է:)

**Հինգ հեղ ճըղըղացիմ, լըսեց վօջ, վէցցըմը լըսեց:**

(Հինգ անգամ գոռացի, ջըսեց, վեցերորդին լըսեց:)

## ԴԵՐԱՆՈՒՆ

Խոսվածքի *անձնական* դերանուններն են՝ **յէս, փու, ինքը, մէնք, փուք, իրանք**: Երրորդ դեմքի **նա, նրանք** դերանունները բացակայում են, նրանց համապատասխանաբար փոխարինում են **էն, ընդանք||ընդօնք** ցուցական դերանունները:

Անձնական դերանունները հոլովվում են դերանվանական հոլովման համակարգում, որտեղ առկա է նաև սեռական հոլովը: Այս համակարգում սեռականը, երբեմն նաև քրականը ունեն ինքնուրույն հոլովաձևեր, իսկ բացառականը և գործիականը կազմվում են քրականի հիմքով և համապատասխանաբար **անէ||(ան)ից, օվ, ըմ** վերջավորություններով.

|                          |                   |               |
|--------------------------|-------------------|---------------|
| <b>ՈՒ</b> յէս            | փու               | ինքը          |
| <b>Մ</b> իմ              | քօ                | իրա           |
| <b>Տ</b> ինձ             | ք'է(զ)            | իրան          |
| <b>Բ</b> ինձանէ  ինձանից | ք'էզանէ  ք'էզանից | իրանէ  իրանից |
| <b>Պ</b> ինձանօվ         | ք'էզանօվ          | իրանօվ        |
| <b>Ն</b> ինձանըմ         | ք'էզանըմ          | իրանըմ        |

|                          |                 |
|--------------------------|-----------------|
| <b>ՈՒ</b> մէնք           | փուք            |
| <b>Մ</b> մէր             | ծէր             |
| <b>Տ</b> մէզ             | ծէզ             |
| <b>Բ</b> մէզանէ  մէզանից | ծէզանէ  ծէզանից |
| <b>Պ</b> մէզանօվ         | ծէզանօվ         |
| <b>Ն</b> մէզանըմ         | ծէզանըմ         |

Միայն **իրանք** անձնական դերանունն է հոլովվում անվանական համակարգում (իրանք-իրանց-իրանցէն-իրանցօվ-իրանցըմ):

*Ցուցական* դերանուններն են՝ **էս, էդ, էն, ըստանք||ըստօնք, ըդանք||ըդօնք, ընդանք||ընդօնք, ըստէդ, ըդէդ, ընդէդ, ըստնմ||ըստնր, ըդնմ||ըդնր, ընդնմ||ընդնր, ըստէնց, ըդէնց, ընէնց**: **էս, էդ, էն** դերանունները հոլովվում են դերանվանական համակարգում, իսկ դրանց հոգնակի ձևերը և մյուսները՝ անվանական համակարգում.

|                          |               |                 |
|--------------------------|---------------|-----------------|
| <b>ՈՒ</b> էս             | էդ            | էն              |
| <b>Մ</b> ըստա  ըստուր    | ըդա  ըդուր    | ընդա  ընդուր    |
| <b>Տ</b> ըստան           | ըդան          | ընդան           |
| <b>Բ</b> ըստանէ  ըստանից | ըդանէ  ըդանից | ընդանէ  ընդանից |

|           |                                    |                      |           |
|-----------|------------------------------------|----------------------|-----------|
| <b>Գ</b>  | ըստ(ան)ով                          | ըդ(ան)ով             | ընդ(ան)ով |
| <b>Ն</b>  | ըստ(ան)ըմ                          | ըդ(ան)ըմ             | ընդ(ան)ըմ |
| <b>ՈՒ</b> | ըստանք                             | ըդանք                | ընդանք    |
| <b>Տ</b>  | ըստանց                             | ըդանց                | ընդանց    |
| <b>Բ</b>  | ըստանցէն                           | ըդանցէն              | ընդանցէն  |
| <b>Գ</b>  | ըստանցով                           | ըդանցով              | ընդանցով  |
| <b>Ն</b>  | ըստանցըմ                           | ըդանցըմ              | ընդանցըմ  |
| <b>ՈՒ</b> | ըստամ  ըստար                       | ըդամ  ըդար           |           |
| <b>Տ</b>  | ըստամի(ն)  ըստարի(ն)               | ըդամի(ն)  ըդարի(ն)   |           |
| <b>Բ</b>  | ըստամից(ը)  ըստարից(ը)             | ըդամից(ը)  ըդարից(ը) |           |
| <b>Գ</b>  | ըստամով(ը)  ըստարով(ը)             | ըդամով(ը)  ըդարով(ը) |           |
| <b>Ն</b>  | ըստամըմ(ը)  ըստարըմ(ը)             | ըդամըմ(ը)  ըդարըմ(ը) |           |
| <b>ՈՒ</b> | ընդամ  ընդար                       |                      |           |
| <b>Տ</b>  | ընդամի(ն)  ընդարի(ն)               |                      |           |
| <b>Բ</b>  | ըստամից(ը)  ընդարից(ը)             |                      |           |
| <b>Գ</b>  | ընդամով(ը)  ընդարով(ը)             |                      |           |
| <b>Ն</b>  | ընդամըմ(ը)  ընդարըմ(ը)             |                      |           |
| <b>ՈՒ</b> | ըստէ(դ)                            |                      |           |
| <b>Տ</b>  | ըստէդի(ն)  ըստէյի(ն)               |                      |           |
| <b>Բ</b>  | ըստէդան(ը)  ըստէյան(ը)  ըստիյան(ը) |                      |           |
| <b>Գ</b>  | ըստէդով(ը)  ըստէյով(ը)  ըստիյով(ը) |                      |           |
| <b>Ն</b>  | ըստէդըմ(ը)  ըստէյըմ(ը)  ըստիյըմ(ը) |                      |           |
| <b>ՈՒ</b> | ըդէ(դ)                             |                      |           |
| <b>Տ</b>  | ըդէդի(ն)  ըդէյի(ն)                 |                      |           |
| <b>Բ</b>  | ըդէդան(ը)  ըդէյան(ը)  ըդիյան(ը)    |                      |           |
| <b>Գ</b>  | ըդէդով(ը)  ըդէյով(ը)  ըդիյով(ը)    |                      |           |
| <b>Ն</b>  | ըդէդըմ(ը)  ըդէյըմ(ը)  ըդիյըմ(ը)    |                      |           |
| <b>ՈՒ</b> | ընդէ(դ)                            |                      |           |
| <b>Տ</b>  | ընդէդի(ն)  ընդէյի(ն)               |                      |           |
| <b>Բ</b>  | ընդէդան(ը)  ընդէյան(ը)  ընդիյան(ը) |                      |           |



**Գ** ընդէղօվ(ը)||ընդէյօվ(ը)||ընդիյօվ(ը)

**Ն** ընդէղըմ(ը)||ընդէյըմ(ը)||ընդիյըմ(ը)

*Փոխադարձ* դերանուններից կիրառական են **իրար(ի)**, **մինմի-**  
**նի||մինը մինին** դերանունները, որոնք հոլովվում են անվանական  
հոլովմամբ (իրար-իրարի-իրարից-իրարօվ-իրարըմ):

*Հարցական-հարաբերական* դերանուններն են՝ **օվ, ինչ, վօր,**  
**օվօր(ի), ինչվօր(ի), վօր մին, յեփ, ուր, քանի(ս), խի||խը, էր,**  
**ըշմամ||ըշմար, վօնց, ըշտել||վօրդէ(դ), արվօրը** և այլն: **Օվը** հոլով-  
վում է դերանվանական հոլովման համակարգում, անվանականում  
**ինչ, վօր, վօր մին, քանիս, ըշմամ, վօնց, ըշտէ(դ)||վօրդէ** դերա-  
նունները.

**ՈՒ** օվ

**Մ** ում

**Տ** ում

**Բ** ումանէ||ից

**Գ** ումանօվ

**Ն** ումանըմ

**ՈՒ** ինչ(ը)                      վօր(ը)                      ըշտէ(ը)

**Տ** ինչի(ն)                      վօրի(ն)                      ըշտէի(ն)||ըշտէի(ն)

**Բ** ինչից(ը)                      վօրից(ը)                      ըշտէան(ը)||ըշտէյան(ը)||ըշտիյան(ը)

**Գ** ինչօվ(ը)                      վօրօվ(ը)                      ըշտէօվ(ը)||ըշտէյօվ(ը)

**Ն** ինչըմ(ը)                      վօրըմ(ը)                      ըշտէըմ(ը)||ըշտէյըմ(ը)

*Ժխրական* դերանուններն են՝ **վօչ մին, օչօվ, վօչ մին պան:**

*Որոշյալ* դերանուններն են՝ **ամմէն, ամմէն մին, ամմէն պան,**  
**ինչպես նաև փոխառյալ սաղ, բիրթամ** («բոլոր մարդիկ»), **բիրնդի**  
(«բոլորը») դերանունները:

*Անորոշ* դերանուններից կիրառական են **նորնշ||ուրիշ, էսինչ,**  
**էդինչ, էնինչ, մին, մին քանի, մին-էրգու,** ինչպես նաև փոխառյալ  
**Ֆըլան** («այսինչ»), **բէման** («այնինչ»), **Ֆըլանք'մա** («այսինչ մար-  
դը»), **բէմանք'մա** («այնինչ մարդը»), **բմգի** («որոշ»), **մին վախար,**  
**վախարին** դերանունները:

Վերջին երեք տեսակների դերանունների մի մասը նույնպես հոլովվում է անվանական հոլովման համակարգում (վօջ մին(ը)-վօջ մինի(ն)-վօջ մինէն||վօջ մինից(ը)-վօջ մինօվ(ը)-վօջ մինըմ(ը), էսինչ(ը)-էսինչի(ն)-էսինչէն||էսինչից(ը)-էսինչօվ(ը)-էսինչըմ(ը) և այլն):

### ԲԱՅ

Բայը խոսվածքում ունի երկու լծորդություն՝ է և ա, թեև է լծորդության բայերը անորոշում ունեն իլ վերջավորությունը՝ քընիլ-քընէմ, պամբասիլ-պամբասէմ, ազադիլ-ազադէմ, հաքնիլ-հաքնէմ, ուղացնիլ-ուղացնէմ, լըցնիլ-լըցնէմ, առնիլ-առնէմ, անիլ-անէմ, կըրիլ-կըրէմ: Ա լծորդության բայերը անորոշում ունեն ալ, ինչպես նաև հազվադեպ ան վերջավորությունները՝ քընալ-քընամ, աղալ-աղամ, կառ՞թալ-կառ՞թամ, ուրխանալ-ուրխանամ, հըվադալ-հըվադամ, լըղանալ-լըղանամ, գօրանալ-գօրանամ, նաև՝ գ՞իդանլ-գ՞իդանմ, գ՞իդանլ-գ՞իդանմ, լանլ-լանմ:

Սակավաթիվ բացառություններով հանդերձ՝ կարելի է ասել, որ գրաբարի բայի 4 լծորդությունները խոսվածքում ունեն հետևյալ համարժեքները՝ ալ>ալ||անլ, ել, իլ, ուլ>իլ:

Որոշ բայեր անորոշ ձևում ունեն երկու վերջավորություն՝ հաքիլ||հաքալ, կաթիլ||կաթալ, ցալիլ||ցալալ, փըշիլ||փըշալ և այլն:

Խոսվածքում բայն ըստ կազմության կարելի է ընդհանուր ձևով բաժանել երկու հիմնական խմբերի՝ համադրական կազմությամբ (քընիլ, լէլի, զընգալ, զըռ՞թանլիլ, իլանալ, թըռնիլ, լըզլըզալ, կօնձկօնձալ, ճօգճօգադիլ, պընցանալ, թըլըսօրիլ, խընթխընթացնիլ, ֆանիմիլ, աֆսունիլ) և հարադրական կազմությամբ (հաղ կանչիլ, վեր ունիլ, վեր փընիլ, կարունքըհան ըլիլ, փըրօր-փըրօր կալ, կաթընկօրէզ ըլիլ, փօղփօղահար կալ, դընջընջահար կալ, դըռի-դըռի պար աձիլ, վեր հաղ անիլ, դառհադառ ըլիլ, փեղբափեղ ըլիլ, քառ՞սընքակօխ ըլիլ, դընամիշ անիլ, անփըռմիշ կալ, անգանգ-բանգանգ ըլիլ):

Բայաձանցներն են՝

Վ՝ կրավորական սեռի և կրավորակերպ չեզոք սեռի բայերում (կօղըրվիլ, ուղվիլ, խըմվիլ, պացվիլ, կաբվիլ, խառնըրվիլ, ճօզվիլ, հաքնըրվիլ, ճօզնըրվիլ, հընցըրվիլ, պընջըրվիլ):

ն, ան՝ սոսկածանցավոր բայերում (թըռնիւ, դըբնիւ, կըբնիւ, կըզանաւ, պընցանաւ, քըշանաւ, իլանաւ, յեղանաւ)։

(ա)ցն՝ պատճառական բայերում (հընցընիւ, հակծընիւ, լնցացնիւ, կըռվացնիւ, պընցացնիւ, քըշացնիւ, շըռշըռացնիւ)։

ադ, օդ, օր՝ բազմապարկական բայերում (կըդդարդիւ, թագօդիւ, վէննօդիւ, պաչպըջօրիւ, թըլըսօրիւ, պընպընատիւ, պօզպօզադիւ, թըռ՝թըռնօդիւ, խըլխլօդիւ, խըլխըլատիւ, ծըքծըքատիւ, ճաքճըքօրիւ, ջըքջըքօդիւ)։

Են սոսկածանցը խոսվածքում հնչյունափոխվել և նույնացել է ան սոսկածանցին՝ մոտենալ>մօղանալ, ուզենալ>ուզանալ, գիտենալ>գիդանալ և այլն։

*Բուն (անկախ) դերբայներն* են՝ անորոշ, ենթակայական, հարակարար, համակարար և ընթացակցական<sup>5</sup>, ձևակազմիչ (կախյալ) դերբայները՝ անկարար, վաղակարար և ապառնի։

Անորոշ դերբայն ունի իւ, ալ վերջավորությունները՝ լըսիւ, աղաւ, թըռնիւ, պընցանաւ, թիլանաւ։ Այս դերբայը հոլովվում է ի հոլովմամբ՝ պընցանալի վախարը, քընիլի փեղը, կառ՝թալի կ'իրքը և այլն։

Ենթակայական դերբայը ժամանակակից հայերենի նման կազմվում է անորոշի կամ անցյալի հիմքով և օդ վերջավորությամբ՝ լըսօդ, աղացօդ, թըռնօդ, պընցացօդ, թիլացօդ։

Հարակարար դերբայի կազմությունը նույնպես ժամանակակից հայերենի նման է. կազմվում է անորոշի կամ անցյալի հիմքով և ած վերջավորությամբ՝ լըսաձ, աղացաձ, թըռաձ, պընցացաձ, թիլացաձ։

Համակարար դերբայը կազմվում է անորոշ դերբայով և իս կամ ից վերջավորությամբ՝ լըսիլիս||լըսիլից, աղալիս||աղալից, թըռնիլիս||թըռնիլից, պընցանալիս||պընցանալից, թիլանալիս||թիլանալից։

Ընթացակցական դերբայը կազմվում է անորոշ դերբայով և էն վերջավորությամբ՝ լըսիլէն, աղալէն, թըռնիլէն, պընցանալէն, թիլանալէն։

Անկարար դերբայը կազմվում է բայահիմքով և ըմ վերջավորությամբ՝ լըսըմ, աղըմ, թըռնըմ, պընցանըմ, թիլանըմ։

---

<sup>5</sup> Ա. Աբրահամյան, Հայերենի դերբայները և նրանց ձևաբանական նշանակությունը, Երևան, 1953։

**Հաղակարար** դերբայը կազմվում է անորոշի կամ անցյալի հիմքով և է վերջավորությամբ՝ **լըսէլ, աղացէլ, թըռէլ, պընցացէլ, թիւացէլ**:

**Ապառնի** դերբայը կազմվում է անորոշ դերբայով և **օ** վերջավորությամբ՝ **լըսիօ, աղալօ, թըռնիլօ, պընցանալօ, թիւանալօ**: Օծուի-Նորսի խոսվածքում այս դերբայն ունի **ու** վերջավորությունը՝ **լըսիւու, աղալու, թըռնիլու, պընցանալու, թիւանալու**:

Բայն արդի հայերենի նման ունի 5 եղանակ՝ սահմանական, ըդ-ձական, պայմանական, հարկադրական, հրամայական, և համապատասխան 14 ժամանակաձևերը (աղյուսակ 1): Հիմնականում արդի հայերենի նման է նաև խոնարհման համակարգը, սակայն առկա են մի շարք առանձնահատկություններ, որոնք ներկայացվում են հիշյալ աղյուսակում:

Սահմանականի ապառնին և անցյալ ապառնին (քարտեզ 8) կազմվում են անորոշ դերբայով և **պիպրեմ** բայի մաշված ձևերով (**լըսիլ'դէմ||լըսի'բդէմ, լըսիլ'դիմ||լըսի'բդիմ**), իսկ շրջուն շարադասության, հարադրական բայերի և ժխտական խոնարհման դեպքերում երևան են գալիս ապառնի դերբայով և օժանդակ բայով ձևեր՝

**յէս լըսիլ'դէմ, բայց՝ յէս էմ լըսիօ, լըսիօ չէմ**

**յէս քընալ'դիմ յէս իմ քընալօ, քընալօ չիմ**

**լւնց էմ ըլիօ, վեր էմ ունիօ, հաղ իմ կանչիօ, պար իմ կալօ** և այլն:

Որոշ բնակավայրերի խոսվածքներում (Աղավնաձոր, Գնիշիկ, Գնդեվագ, Խաչիկ) անորոշ դերբայով կազմված ձևին զուգահեռ կիրառական է ապառնի դերբայով կազմված ձևը (**լըսի'բդէմ||լըսիօ էմ, քընա'բդիմ||քընալօ իմ**), իսկ Օծուի-Նորսի խոսվածքում գերիշխում է ապառնի դերբայով կազմված (**ու>վ** հնչյունափոխությամբ) ձևը՝

**յէս լըսիլ'վէմ, բայց՝ յէս էմ լըսիլու, լըսիլու չէմ**

**յէս քընալ'վիմ յէս իմ քընալու, քընալու չիմ**:

Օժանդակ բայի, ինչպես նաև պարզ դիմավոր ժամանակաձևերի անցյալի եզակի թվի առաջին դեմքերում ավելանում է **մ** վերջավորությունը՝ **լըսըմ իմ, լըսէլ իմ, լըս(եց)իմ, լըսիմ, կըլըսիմ, բըղի լըսիմ||բիղի լըսիմ||բիղըմա լըսիմ**:

Օծուի-Նորսի և Կեչուրի խոսվածքներում է լծորդության որոշ պարզ բայերի սահմանական եղանակի անցյալ կադրայալը կազմվում է **ա** խոնարհիչով, իսկ եզակի երրորդ դեմքը՝ կրավորաձև՝ **պէ-**

**րամ-պերար-պերավ, պերանք-պերաք-պերան, փրրամ-փրրար-փր-  
րավ, փրրանք-փրրաք-փրրան, փրվամ-փրվար-փրվավ, փրվանք-  
փրվաք-փրվան** և այլն:

Աղավնաձորի և Ռինդի խոսվածքներում **գալ, փալ** բայերի սահմանական եղանակի ներկան և անցյալ անկատարը կազմվում է նաև անկատար դերբայի մաշված ձևով՝ **կալիս ա||կալի ա, փալիս ա||փալի ա, կալիս իք||կալի իք, փալիս իք||փալի իք** և այլն:

Բոլոր ժխտական ձևերը կազմվում են օժանդակ բայի հեփադաս կիրառությամբ՝ **լըսըմ չեմ, լըսըմ չիմ, աղալ չեմ, քընաք վօջ, բըդի աղամ վօջ, ա՛ղալ մի, քընա՛լ մէք** և այլն: Բացառություն է կազմում Աղավնաձորի խոսվածքը, որտեղ օժանդակ բայը կիրառվում է առաջադաս՝ **չեմ լըսըմ, չիմ լըսըմ, չեմ աղալ, չըքընաք, բըդի չաղամ, մի՛ աղալ, մէ՛ք քընալ** և այլն: Սա կարելի է բացատրել ինչպես գրական հայերենի ազդեցությամբ, այնպես էլ այս բնակավայրում ժամանակին հաստատված խոյեցի մի քանի փոփոխության բարբառի ազդեցությամբ:

Ինչպես նկատվում է օրինակներից, օժանդակ բայի անցյալի ձևերը կորցրել են է հնչյունը՝ **էի>իմ, էիր>իր, էիք>իք** և այլն:

Խոսվածքում առկա են նաև *անկասնոն բայեր*, որոնց խոնարհումը ընդհանուր օրինաչափություններից շեղվում է բերված ձևերում.

**անիլ՝** արած, արել, արիմ, արա՛  
**փընիլ՝** փըրած, փըրել, փըրիմ, փի՛ր  
**փանիլ՝** փարած, փարել, փարամ, փա՛ր  
**ռդիլ՝** կ՛երած, կ՛երել, կ՛երամ, կ՛էր  
**կ՛ենալ՝** կացած, կացել, կացամ, կա՛ց  
**պանալ՝** պացած, պացել, պացամ, պա՛ց  
**ունիլ՝** կալած, կալել, կալամ, կա՛լ  
**մըննիլ՝** մըդած, մըդել, մըդամ, մըդի՛  
**փէնալ՝** փէսած, փէսել, փէսամ, փէ՛ս  
**կալ՝** էգօղ, էգած, կալի(ս), էգ՛ել, էգամ, յէ՛գ  
**փալ՝** փըվօղ, փըված, փալի(ս), փըվել, փըվիմ, փո՛ւր  
**առնիլ՝** առ  
**պէրիլ՝** պէր  
**ասիլ՝** ասա՛  
**թօղալ՝** թօ՛ղ

Խոսվածքի պակասավոր բայերն են.

**Էմ՝** ունի միայն սահմանականի ներկա և անցյալ՝

|    |     |    |     |
|----|-----|----|-----|
| Էմ | էնք | իմ | ինք |
| Էս | էք  | իր | իք  |
| ա  | են  | եր | ին  |

**Կամ՝** ունի միայն սահմանականի ներկա և անցյալ՝

|     |      |      |       |
|-----|------|------|-------|
| կամ | կանք | կ'իմ | կ'ինք |
| կաս | կաք  | կ'իր | կ'իք  |
| կա  | կան  | կ'եր | կ'ին  |

**(բ)ղէմ՝** ունի միայն սահմանականի ներկա և անցյալ՝

|        |         |        |         |
|--------|---------|--------|---------|
| (բ)ղէմ | (բ)ղէնք | (բ)ղիմ | (բ)ղինք |
| (բ)ղէս | (բ)ղէք  | (բ)ղիր | (բ)ղիք  |
| (բ)ղի  | (բ)ղէն  | (բ)ղէր | (բ)ղին  |

**ունէմ՝** ունի միայն սահմանականի ներկա և անցյալ՝

|       |        |       |        |
|-------|--------|-------|--------|
| ունէմ | ունէնք | ունիմ | ունինք |
| ունէս | ունէք  | ունիր | ունիք  |
| ունի  | ունէն  | ունէր | ունին  |

**լնլ՝** ունի սահմանականի ներկա և անցյալ, արգելական հրամայական՝

|          |           |          |           |
|----------|-----------|----------|-----------|
| լնլիս էմ | լնլիս էնք | լնլիս իմ | լնլիս ինք |
| լնլիս էս | լնլիս էք  | լնլիս իր | լնլիս իք  |
| լնլիս ա  | լնլիս են  | լնլիս եր | լնլիս ին  |

լնլ մի, լնլ մէք:

Մրանք կիրառվում են հարադիր կազմություններին գուգահեռ (**լնց էմ ըլըմ, լնց ինք ըլըմ, լն'ց մի ըլի** և այլն):

**Վէննիլ** բայը, որ առաջացել է **վեր ունիլ** հարադիր բայի ամփոփումից, ունի սահմանականի ներկա (**վէննըմ էմ**), ապառնի (**վէննի(յ)'(բ)ղէմ**), անցյալ անկատար (**վէննըմ իմ**), անցյալ ապառնի (**վէննի(յ)'(բ)ղիմ**), ըղծականի ապառնի (**վէննէմ**) և անցյալ (**վէննիմ**), պայմանականի ապառնի (**կըվէննէմ**) և անցյալ (**կըվէննիմ**), հարկադրականի ապառնի (**բըղի վէննէմ**) և անցյալ (**բըղի վէննիմ**), որոնք կիրառվում են հարադիր կազմություններին գուգահեռ (**վեր էմ ունըմ, բըղի վեր ունէմ, վեր իմ ունըմ, բըղի վեր ունիմ, վեր ունէմ** և

այլն): Մնացած ժամանակաձևերում կիրառական են միայն հարադիր կազմությունները՝ վեր եմ կալել, վեր կալամ, վեր կալ, վեր մի ունիլ և այլն:

Ձևաբանորեն հերաքրքրական մի երևույթ է նկատվում խոսվածքում. բազմապարկական օդ ածանցի օգնությամբ որոշ բայերի հոգնակիները սրանում են առանձնահատուկ բազմապարկական ձևեր.

**էգօդանք** (մենք բոլորս եկանք), **էգօդաք** (դուք բոլորդ եկաք), **էգօդան** (նրանք բոլորը եկան), **էգօդինք** (մենք բոլորս գայինք), **էգօդիք** (դուք բոլորդ գայիք), **էգօդին** (նրանք բոլորը գային), **քընացօդանք** (մենք բոլորս գնացինք), **քընացօդաք** (դուք բոլորդ գնացիք), **կառ՞թացօդինք** (մենք բոլորս կարդայինք) և այլն:

Խոսվածքում կիրառական են նաև բայի *երկրորդական բադարձյալ ժամանակներ*, որոնք կազմվում են անկատար, հարակատար, համակատար դերբայներով և **ըլի**, **կամ** բայերով.

**խօսըմ ա ըլըմ, խօսըմ ինք ըլըմ, քընած ինք ըլիօ, կառ՞թըմ կըլեմ, քընած բըդի ըլիմ, քընալիս էնք ըլըմ, քընալիս ինք ըլըմ, փեսած կամ, քընացած չըկիմ** և այլն:

## ՄԱԿԲԱՅ

Խոսվածքում առավել կիրառական են հետևյալ մակբայները.

*Ժամանակի՝ հըմիգ(ըս)||մըհիգ(ըս), յեղավ, ըսօր, էքում, էլլօր, կալլօր, մեգ՛ել օրը, քըշեռօվ, քըշեր-ցերեգ, հերու||հերնըվի, մեգ՛ել փարի, էգօդ փարի, շապտենը մին, փարտենը մին, ինչպես նաև փոխառյալ ընթանշրան* («վաղ առավոտյան»), *հանման* («միշտ»):

*Տեղի՝ փեմափեմ, վերեվ, ներքեվ, փեսը, փեղը, փենը, հեռու, մօդ(իգ):*

*Ձևի՝ թանքուն, մեննգ, կամանց, ծեռաց, մառ՞թալօրի, փնագվերի, ծանդըր, ծանդըր-ծանդըր, ինչպես նաև փոխառյալ անբանը||անբըհանը* («խսկույն, միանգամից»), *դաֆուլ(դան)* («հանկարծ(ակի)»), *յալաշ* («կամաց, դանդաղ»), *թանփի* («շտապ»), *բիրդան* («հանկարծ»), *յեգին* («արագ»), *յեգին-յեգին* («արագ-արագ»):

*Չափի՝ շադ, քիչ, մըկն||մըքն* («մի քիչ, մի կտոր»), *մին թիթել, ըսկի* ինչպես նաև փոխառյալ *խելնգ* («բավական»), *բօլ* («շատ»), *մին բօլ* («մի գլուխ»):

*Ընդհանրական՝ մին-մին, ճուխտ-ճուխտ, հա, հենցհա, էլ, կահէս||կասէս, ինչպես նաև փոխառյալ նըհախս* («անտեղի, իզուր»), *յալանանան* («ի միջի այլոց») և այլն:

Մակբայների մի մասը հոլովվում է՝ *վերել(ը)-վերելի(ն)-վերէ-վան(ը)-վերելով(ը)-վերելքմ(ը), ներքել(ը)-ներքելի(ն)-ներքէ-վան(ը)-ներքելով(ը)- ներքելքմ(ը)* և այլն:

## ԿԱՊ

Կիրառական են հետևյալ կապերը.

*Տեղի՝ կուշտ* («մութ»), *մէջ, վըրա, րագ, արանք, քամագ, տէսը, տէղը, տենը, դըբա:*

*Ժամանակի՝ մընչել, յեղավ, առաջ:*

*Բացառման և զիջման՝ առանց(ի), տեղագ, տէղը, փոխանագ, փոխառյալ սաֆայի* («բացի, չհաշված»), *անվան* («փոխարեն»):

*Պատճառի՝ էրեսիցը, պաջառովը, փոխառյալ՝ սմբմբը* («պատճառով»):

*Նպատակի՝ հըմար||մըհար||մար:*

*Ձևի՝ պէս:*

*Չափի՝ ավել, պագաս, փոխառյալ՝ դըդմը||դըդման* («չափ»):

*Ընդդիմության՝ հագառագ, փոխառյալ՝ աջըղովը* («ի հեճուկս»):

*Միասնության՝ հէդ:*

Կապերն օգտագործվում են ինչպես ուղղական-հայցական, այնպես էլ սեռական-տրական և բացառական հոլովների հետ՝ *մընչել ծառը, ծառան րագի՛ն, ծառանիցը տենը* և այլն:

Կապերի մի մասը հոլովվում է՝ *կուշտ(ը)-կըշտի(ն)-կըշտից(ը)-կըշտով(ը), րագ(ը)-րագի(ն)-րագից(ը)-րագով(ը), մէջ(ը)-մէջի(ն)-մէջից(ը)-մէջով(ը)-մէջքմ(ը)* և այլն:

## ՇԱՂԿԱՊ

Խոսվածքում գործածական են հետևյալ շաղկապները.

*Համադասական՝ (հ)ու, էլ, էնինչ, թէ, ինչպես նաև փոխառյալ նա(ն)* («և»), *համա* («բայց»), *նմ... նմ* («ո՛չ... ո՛չ»), *յմ* («կամ»), *յմ... յմ* («կամ... կամ»), *հա՛մ... հա՛մ* («և՛... և՛») և այլն:



*Մտորադասական՝ վոր, թէ, քանց, մընչէվ, հէնց, քանի(չ), մէննգ||մաննագ, յէփ, վոր թէ, թէ վոր, քանց թէ, հէնց վոր, մընչէվ վոր, յէփ վոր, թէ չէ, թէ չէ նա, մէննգ թէ||մաննագ թէ, ինչպես նաև փոխառյալ չօնքի* («որովհետև, քանի որ») և այլն:

## ՎԵՐԱԲԵՐԱԿԱՆ

Կիրառական են հետևյալ վերաբերականները.

*Հասարակական՝ հա, լավ, ինչ խօսկը:*

*Յուցական՝ ըիը, հէսիգ||հէսէ, հէդիգ||հէդէ, հէնիգ||հէնէ:*

*Երկբայական՝ օվայըմ, յէսիմ, կասէս||կահէս, վայ թէ, չէ-հա, ինչպես նաև փոխառյալ հանրթ* («երևի, հավանաբար»), *բանքի||բանք'ա||բան(ը)յան* («երևի»):

*Մասրական՝ մընչէվ անքամ:*

*Մահմանադական՝ կօնյա, մէննգ||մաննագ, փոխառյալ՝ մադուլ(ջա)* («գոնէ»):

*Կամային՝ թօղ, դէ, բա, մին, փոխառյալ՝ հանն* («տե՛ս»), *ա(յ) ջանըմ* («այ հոգիս»), *յանի* («իբր»), *գըվան* («իբր»):

*Զիջական՝ ինչ վօրի ա, օվ վօրի ա:*

*Ժխրական՝ չէ:*

*Բաղձանքի՝ հըրանէք, հըրանէք էր, ուր էր, փոխառյալ՝ յարաք* («միթէ»):

## ՀԱՅՆԱՐԿՈՒԹՅՈՒՆ

Խոսվածքում կիրառվող ձայնարկությունները կարելի է բաժանել երեք խմբի.

*Զգացում արտահայտող* ձայնարկություններ՝

*պա՛յ, վա՛յ, պը՛յ, պա՛, պո՛ւ* (զարմանք), *ջա՛ն, ջա՛ն, ջա՛ն-ջա՛ն, ջա՛ն-ջա՛ն* (ուրախություն), *պա՛հ, պա՛հ-պա՛հ, պա՛խ-պա՛խ* (արհամարհանք), *է՛, է՛հ, դէ՛, հա՛լլա, հա՛լլա-հա՛* (բարկություն), *փիյան՛, պա՛-բա՛-բա՛-բա՛, պա՛հօ-վան՛* (զայրույթ), *անջի՛, անջի-դէ՛, ան(հ), (անարարբերություն, ծանծրույթ), ի՛ֆֆ, փի՛ֆֆ, փո՛ւֆֆ* յանկ, թո՛ւ (զգվանք, նողկանք), *վա՛յ, վո՛ւյ, վը՛յ վո՛ւշ, վի՛շ* (վիշտ), *ան(չ) վականություն), ի՛շ, ի՛շ-յէսի՛մ* (հուսահատություն), *թան՛* (ափսոսանք) և այլն:

*Կամային վերաբերմունք արտահայտող ձայնարկություններ*

ա) մարդկանց դիմելու՝

**մրա՛, մրա՛** (տղամարդկանց), **ախճի՛, ակընի՛գ** (կանանց),  
**բալա՛, բալէ՛ս** (երեխաներին), **ա՛յ, է՛յ, հէ՛յ, է՛-հէ՛-հէ՛յ** և այլն.

բ) կենդանիներին կանչելու՝

**բըժի՛-բըժի՛** (կովին), **բըժօ՛-բըժօ՛** (հորթին), **գըղի՛-գըղի՛** (այծին),  
**գըղօ՛-գըղօ՛** (ուլին), **քըշո՛ւ-քըշո՛ւ** (էշին), **քո՛ւռ-քո՛ւռ** (քուռակին),  
**փըշի՛-փըշի՛** (կապվին), **փըշօ՛-փըշօ՛** (կապվի ձագին), **քո՛ւթ-քո՛ւթ**  
(շանը), **քըչօ՛-քըչօ՛** (շան լակոտին), **ծի՛ք-ծի՛ք** (հավերին), **ճո՛ւ-ճո՛ւ**  
(ճտերին), **փո՛ւ-փո՛ւ** (ոչխարին, արտասանվում է շրթունքների  
թրթոցով) և այլն.

գ) կենդանիներին քշելու՝

**օհօ՛** (կովին), **էհա՛** (այծին), **քի՛ս** (ոչխարին), **հօ՛շ(շ), չօ՛շ(շ),**  
**հօշ(շ)է՛** (էշին), **հէ՛-հէ՛** (ծիռն), **փը՛շփ, փըշփա՛** (կապվին), **աշո՛ւն**  
(շանը), **քըշա՛** (հավին) և այլն.

դ) կենդանիներին կանգնեցնելու՝

**հօ՛-քը՛շ** (էշին), **փո՛ւռ** (ծիռն, շրթունքների թրթոցով), **օ՛հօ**  
(կովին),

**հը՛ռ** (եզին), **յը՛խ** (ուղտին), **ճըգը՛ռ-թը՛սս** (հավին) և այլն.

ե) կենդանիներին կռվեցնելու՝

**քը՛շ-քը՛շ, հոջա՛-հօ՛յ** (շներին), **հօ՛լ- հօ՛լ** (ցուլերին) և այլն:

*Բնաձայնություններ արտահայտող ձայնարկություններ.*

**դը՛գգ, թը՛ռռ, ճը՛ռռ, թըրը՛մփ, չըրը՛խկ, գըրը՛նգ, թը՛խկ-թը՛խկ,**  
**շը՛խկ-շը՛խկ, չը՛խկ-չը՛խկ, ծուգլուկո՛ւ, կը՛ռռ, մը՛ռռ, խը՛ռռ** և այլն:

**ԲԱՅԻ ԽՈՆԱՐՀՄԱՆ ՀԱՐԱՅՈՒՅՅՆԵՐ  
ԴՐԱԿԱՆ ԽՈՆԱՐՀՈՒՄ  
Սահմանական եղանակ**

| Ժամանակ        | է խոնարհում                                         | ա խոնարհում                                      | Ածանցավոր բայեր                                        |                                                           |                                                                 |
|----------------|-----------------------------------------------------|--------------------------------------------------|--------------------------------------------------------|-----------------------------------------------------------|-----------------------------------------------------------------|
|                |                                                     |                                                  | ն սոսկածանցով                                          | ան սոսկածանցով                                            | (ա)ցն պարճառական ածանցով                                        |
| Ներկա          | լըսըմ էմ<br>լըսըմ էս<br>լըսըմ ա                     | աղըմ էմ<br>աղըմ էս<br>աղըմ ա                     | թըռնըմ էմ<br>թըռնըմ էս<br>թըռնըմ ա                     | թիլանըմ էմ<br>թիլանըմ էս<br>թիլանըմ ա                     | պընցացնըմ էմ<br>պընցացնըմ էս<br>պընցացնըմ ա                     |
|                | լըսըմ էնք<br>լըսըմ էք<br>լըսըմ էն                   | աղըմ էնք<br>աղըմ էք<br>աղըմ էն                   | թըռնըմ էնք<br>թըռնըմ էք<br>թըռնըմ էն                   | թիլանըմ էնք<br>թիլանըմ էք<br>թիլանըմ էն                   | պընցացնըմ էնք<br>պընցացնըմ էք<br>պընցացնըմ էն                   |
| Վաղա-<br>կատար | լըսել էմ<br>լըսել էս<br>լըսել ա                     | աղացել էմ<br>աղացել էս<br>աղացել ա               | թըռել էմ<br>թըռել էս<br>թըռել ա                        | թիլացել էմ<br>թիլացել էս<br>թիլացել ա                     | պընցացրել էմ<br>պընցացրել էս<br>պընցացրել ա                     |
|                | լըսել էնք<br>լըսել էք<br>լըսել էն                   | աղացել էնք<br>աղացել էք<br>աղացել էն             | թըռել էնք<br>թըռել էք<br>թըռել էն                      | թիլացել էնք<br>թիլացել էք<br>թիլացել էն                   | պընցացրել էնք<br>պընցացրել էք<br>պընցացրել էն                   |
| Ապառնի         | լըսի(լ)'(բ)դէմ<br>լըսի(լ)'(բ)դէս<br>լըսի(լ)'(բ)դի   | աղա(լ)'(բ)դէմ<br>աղա(լ)'(բ)դէս<br>աղա(լ)'(բ)դի   | թըռնի(լ)'(բ)դէմ<br>թըռնի(լ)'(բ)դէս<br>թըռնի(լ)'(բ)դի   | թիլանա(լ)'(բ)դէմ<br>թիլանա(լ)'(բ)դէս<br>թիլանա(լ)'(բ)դի   | պընցացնի(լ)'(բ)դէմ<br>պընցացնի(լ)'(բ)դէս<br>պընցացնի(լ)'(բ)դի   |
|                | լըսի(լ)'(բ)դէնք<br>լըսի(լ)'(բ)դէք<br>լըսի(լ)'(բ)դէն | աղա(լ)'(բ)դէնք<br>աղա(լ)'(բ)դէք<br>աղա(լ)'(բ)դէն | թըռնի(լ)'(բ)դէնք<br>թըռնի(լ)'(բ)դէք<br>թըռնի(լ)'(բ)դէն | թիլանա(լ)'(բ)դէնք<br>թիլանա(լ)'(բ)դէք<br>թիլանա(լ)'(բ)դէն | պընցացնի(լ)'(բ)դէնք<br>պընցացնի(լ)'(բ)դէք<br>պընցացնի(լ)'(բ)դէն |



## Ըղծական եղանակ

| Ժամանակ | է խոնարհում              | ա խոնարհում           | Ածանցավոր բայեր             |                                |                                      |
|---------|--------------------------|-----------------------|-----------------------------|--------------------------------|--------------------------------------|
|         |                          |                       | ն սոսկածանցով               | ան սոսկածանցով                 | (ա)ցն<br>սլափճառական<br>ածանցով      |
| Ապառնի  | լըսէմ<br>լըսես<br>լըսի   | աղամ<br>աղաս<br>աղա   | թըռնէմ<br>թըռնես<br>թըռնի   | թիլանամ<br>թիլանաս<br>թիլանա   | պընցացնէմ<br>պընցացնես<br>պընցացնի   |
|         | լըսենք<br>լըսեք<br>լըսեն | աղանք<br>աղաք<br>աղան | թըռնենք<br>թըռնեք<br>թըռնեն | թիլանանք<br>թիլանաք<br>թիլանան | պընցացնենք<br>պընցացնեք<br>պընցացնեն |
| Անցյալ  | լըսիմ<br>լըսիր<br>լըսէր  | աղիմ<br>աղիր<br>աղար  | թըռնիմ<br>թըռնիր<br>թըռնէր  | թիլանիմ<br>թիլանիր<br>թիլանար  | պընցացնիմ<br>պընցացնիր<br>պընցացնէր  |
|         | լըսինք<br>լըսիք<br>լըսին | աղինք<br>աղիք<br>աղին | թըռնինք<br>թըռնիք<br>թըռնին | թիլանինք<br>թիլանիք<br>թիլանին | պընցացնինք<br>պընցացնիք<br>պընցացնին |

### Պայմանական (ենթադրական) եղանակ

| Ժամանակ | է խոնարհում                   | ա խոնարհում              | Ածանցավոր բայեր                   |                                      |                                            |
|---------|-------------------------------|--------------------------|-----------------------------------|--------------------------------------|--------------------------------------------|
|         |                               |                          | ն սոսկածանցով                     | ան սոսկածանցով                       | (ա)ցն պատճառական ածանցով                   |
| Ապառնի  | կըլտսեմ<br>կըլտես<br>կըլտի    | կաղամ<br>կաղաս<br>կաղա   | կըթըռնեմ<br>կըթըռնես<br>կըթըռնի   | կըթիլանամ<br>կըթիլանաս<br>կըթիլանա   | կըպընցացնեմ<br>կըպընցացնես<br>կըպընցացնի   |
|         | կըլտսենք<br>կըլտեք<br>կըլտեն  | կաղանք<br>կաղաք<br>կաղան | կըթըռնենք<br>կըթըռնեք<br>կըթըռնեն | կըթիլանանք<br>կըթիլանաք<br>կըթիլանան | կըպընցացնենք<br>կըպընցացնեք<br>կըպընցացնեն |
| Անցյալ  | կըլտսիմ<br>կըլտսիր<br>կըլտեր  | կաղիմ<br>կաղիր<br>կաղար  | կըթըռնիմ<br>կըթըռնիր<br>կըթըռներ  | կըթիլանիմ<br>կըթիլանիր<br>կըթիլանար  | կըպընցացնիմ<br>կըպընցացնիր<br>կըպընցացներ  |
|         | կըլտսինք<br>կըլտսիք<br>կըլտին | կաղինք<br>կաղիք<br>կաղին | կըթըռնինք<br>կըթըռնիք<br>կըթըռնին | կըթիլանինք<br>կըթիլանիք<br>կըթիլանին | կըպընցացնինք<br>կըպընցացնիք<br>կըպընցացնին |

### Հարկադրական եղանակ

| Ժամանակ | է խոնարհում                             | ա խոնարհում                          | Ածանցավոր բայեր                            |                                               |                                                     |
|---------|-----------------------------------------|--------------------------------------|--------------------------------------------|-----------------------------------------------|-----------------------------------------------------|
|         |                                         |                                      | ն սոսկածանցով                              | ան սոսկածանցով                                | (ա)ցն պատճառական ածանցով                            |
| Ապառնի  | բռդի լռսւմ<br>բռդի լռսէս<br>բռդի լռսի   | բռդի աղամ<br>բռդի աղաս<br>բռդի աղա   | բռդի թրռնէմ<br>բռդի թրռնէս<br>բռդի թրռնի   | բռդի թիլանամ<br>բռդի թիլանաս<br>բռդի թիլանա   | բռդի պրնցացնէմ<br>բռդի պրնցացնէս<br>բռդի պրնցացնի   |
|         | բռդի լռսէնք<br>բռդի լռսէք<br>բռդի լռսէն | բռդի աղանք<br>բռդի աղաք<br>բռդի աղան | բռդի թրռնէնք<br>բռդի թրռնէք<br>բռդի թրռնէն | բռդի թիլանանք<br>բռդի թիլանաք<br>բռդի թիլանան | բռդի պրնցացնէնք<br>բռդի պրնցացնէք<br>բռդի պրնցացնէն |
| Անցյալ  | բռդի լռսիմ<br>բռդի լռսիր<br>բռդի լռսեր  | բռդի աղիմ<br>բռդի աղիր<br>բռդի աղար  | բռդի թրռնիմ<br>բռդի թրռնիր<br>բռդի թրռներ  | բռդի թիլանիմ<br>բռդի թիլանիր<br>բռդի թիլանար  | բռդի պրնցացնիմ<br>բռդի պրնցացնիր<br>բռդի պրնցացներ  |
|         | բռդի լռսինք<br>բռդի լռսիք<br>բռդի լռսին | բռդի աղինք<br>բռդի աղիք<br>բռդի աղին | բռդի թրռնինք<br>բռդի թրռնիք<br>բռդի թրռնին | բռդի թիլանինք<br>բռդի թիլանիք<br>բռդի թիլանին | բռդի պրնցացնինք<br>բռդի պրնցացնիք<br>բռդի պրնցացնին |

### Հրամայական եղանակ

| Ժամանակ | Է խոնարհում     | ա խոնարհում     | Ածանցավոր բայեր |                     |                                |
|---------|-----------------|-----------------|-----------------|---------------------|--------------------------------|
|         |                 |                 | ն սոսկածանցով   | ան սոսկածանցով      | (ա)ցն<br>պատճառական<br>ածանցով |
| Ապառնի  | լռսի՛<br>լռսե՛ք | ա՛ղա<br>աղա՛ցեք | թըռի՛<br>թըռե՛ք | թիլա՛ցի<br>թիլա՛ցեք | պընցաքրի՛<br>պընցաքրե՛ք        |



**ԺԽՏԱԿԱՆ ԽՈՆԱՐՀՈՒՄ**  
**Մահմանական եղանակ**

| Ժամանակ        | Է խոնարհում                             | ա խոնարհում                             | Ածանցավոր բայեր                            |                                               |                                                     |
|----------------|-----------------------------------------|-----------------------------------------|--------------------------------------------|-----------------------------------------------|-----------------------------------------------------|
ցու, առաջացու և այլն.

-**ացուգ՝** քրնալացուգ, կալացուգ, տալացուգ, առնիլացուգ, մեռ-  
նիլացուգ և այլն.

-**է՝** վօսկէ, առգաթէ, փեղէ, ֆօղէ, պամբազ'է և այլն.

-**եղէն||եղան՝** վօսկ'եղէն||վօսկ'եղան, առգաթեղէն||առգաթեղան,  
շոնշեղէն||շոնշեղան, կանանչեղէն||կանանչեղան, պրոթեղէն և այլն.

-**երէն՝** հայերէն, ըռըսերէն, ֆառսերէն, վրրացերէն, անքերէն,  
թուրքերէն և այլն.

-**էք՝** կ'իսնաթափէք, հառսնաարեւէք, նըշանարդրէք, անշկարդրէք,  
տրնօխնէք և այլն.

-**ըթուն||ուպուն՝** ուրախըթուն||ուրախուպուն, պարեգամըթուն||  
պարեգամուպուն, հաղաղըթուն||հաղաղուպուն, սերըթուն||սերուպուն  
և այլն.

-**ի՝** կանանչի, աղի, արգաթի, փեղի, ֆօղի և այլն.

-**իգ՝** ծիղիգ, պընդիգ, ճըրիգ, լըղեգիգ, ճըբըլըրիգ, տըբընջիգ,  
լըռիգ, կըլօլիգ||պըլօլիգ||փըլօլիգ, պըջիրիգ, լըխարիգ, լօթիգ,  
հադարարիգ, սընդըվակալիգ, ալիրմաղիգ, ֆօղմաղիգ և այլն.

-**ին՝** կարքին, տեղին, անանմագին և այլն.

-**իք՝** կըպծընէիք, ըլերիք, սըռդաուգէլիք և այլն.

-**լան՝** լանցլան, ցէթլան և այլն.

-**լիգ՝** կառջլիգ, քիփլիգ, կօզլիգ և այլն.

-**հանց՝** տագըհանց, էրեսըհանց, մենծըհանց, պըջըրըհանց և այլն.

-**հար՝** տիվահար, տօղտօղահար և այլն.

-**մունք՝** սըխալմունք||սըղալմունք, արարմունք, չարչարմունք և  
այլն.

-**ստան, ստուն՝** հայաստան, Պառսկաստան, Արմաքըստան, Հռու-  
սաստան, թուրքըստուն, քըռըրստուն և այլն.

-**վասկ(ը)՝** կըղօրվասկ(ը), հինվասկ(ը), մանվասկ(ը) և այլն.

-**վօրի||վերի՝** մառթավօրի, կընգավօրի, ախճըգավօրի, տըղա-  
վօրի, մենծավօրի, ըրէխավօրի, սըղանավօրի, կ'եղավօրի, էշավօրի,  
տընագվերի և այլն.

**-ցի, ացի, էցի՝** սարեցի, կ'էղացի, քաղաք'էցի, կընդեվասցի, ըղնածօրցի, խաչիգ'էցի, ագէցի, չըվէցի, ջնհիրըցի, նախճըվանցի, պառ'սկասպանցի, վրրացի և այլն.

**-ուգ՝** աղվէսուգ, կաթնուգ, թաթուգ, վախնուգ, գ'իժվանուգ և այլն.

**-ունք՝** վօռ'թունք, մանդրունք, խագունք և այլն.

**-ուսկ(ը)՝** աբրուսկ(ը), հուրուսկ(ը), մերուսկ(ը), սըվօրուսկ(ը), պահուսկ(ը), տագաթաղուսկ(ը) և այլն.

**-օդ՝** ժանգօդ, յէդօդ, ֆօդօդ, քօսօդ, սըդօդ և այլն.

**-օվի(ն)՝** առնօվի(ն), վէննօվի(ն), տըննօվի(ն), շինօվի(ն), քանդօվի(ն), ծալօվի(ն), կըծօվի(ն), բըցօվի(ն) և այլն.

**-օց՝** խառոց, հրրօց, տըղնօց, սիպտանօց, ծըգըլթօց, հաչօց, կըլավօց, ճըղըռոց, տըրակկօց, փըսփըսօց, ֆըսֆըսօց և այլն.

Խոսվածքում կիրառական են հետևյալ ժխտական նախածանցները՝

**ան՝** անսիռդ, անխըրադ, անուսում, անպաշ, անաղըհաց, անմառթ, անկընիգ, անգավագ, անքուն, անլուգո՞ւ և այլն.

**չը՝** չըպէր, չըխօսկան, չըհաս, չըտէս, չըկամ և այլն:

Կիրառական է նաև հետևյալ փոխառյալ վերջածանցը՝

**-չի՝** նըգարչի, խառնակչի, սըվաղչի, ամբօլչի և այլն:

## ՇԱՐԱՀՅՈՒՄԱԿԱՆ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Սովորաբար բարբառները շարահյուսական խիստ առանձնահարկություններ չեն դրսևորում գրական լեզուների հանդեպ: Ուստի, համառոտ կանոնադաշտնաճի խոսվածքի որոշ շարահյուսական առանձնահարկությունների միայն:

Խոսվածքը շարահյուսական կառուցվածքով ընդհանուր առմամբ համընկնում է ժամանակակից գրական արևելահայերենին՝ դրսևորելով արևելահայ բարբառներին բնորոշ հարկանիշներ: Խոսվածքին հապուկ է խոսքի արտահայտման կենդանի, աշխույժ, հաճախ՝ առած-ասացվածքներով, օրինանքներով, առօրյայում սովորական դարձած անեծքներով ու հայիոյանքներով համեմված ոճը: Որոշ բառեր ունեն իրենց ոճական ենթադրաբերակաները: Օրինակ, **պըրօրվիլ** («սեթևեթել») բառի կողքին առկա է նաև **պըրօր-պըրօր կալ** («չափից ավելի սեթևեթել») հոմանիշը, կամ **զըռթնրվիլ** բառի կողքին **բնգնգվիլ** («խիստ զարդարվել, պճնվել») և **նգնգ-բնգնգ ըլիլ** («խիստ պճնվել, պճնազարդվել») ձևերը:

Որոշ բառեր ունեն մի շարք իրադրական տարբերակներ, որոնց կիրառությունը հաճախ խոսքին հաղորդում է ոճական որոշակի առանձնահարկություն՝

փոքր(իկ)>**պըջիր**||**պըջիրիգ**||**պըջիգ**||**պըջինգ**||**պըջլօնգ**||  
**պըջլունգ**||**պըջլննգ**||**պըջլլօ**||**փըստըլլօ**  
 կյոր(իկ)>**կլլօիգ**||**կլլօիգ**||**փլլօիգ**  
 ճխլել>**ճըլխիլ**||**պըլխիլ**||**փըլխիլ**  
 համար>**հըմար**||**մըհար**||**մար**  
 հավաքել>**հըվաքիլ**||**վըհաքիլ**||**ֆաքիլ**  
 վերցնել>**վէր ունիլ**||**վէրնիլ**||**վէննիլ**  
 իրար գալ («շարժվել») >**իընր կալ**||**փիընր կալ**||**տնընր կալ**||**նընր կալ**

հիմա>**հըմի**||**մըհիլ**||**հըմիգ**||**մըհիգ**||**հըմիգըս**||**մըհիգըս** և այլն:

Օրինակներ՝

Մին **պըջիը** փեղ **քըցեց** թօրէնը:

Հըրօրոցընը մին **փըստըլլօ** որէխա կար:

Ծիրանը սալագըմը **ճըլխէլ ա**:

**Ծիրանը հասել ա, փրփխել:**

Պատմողական խոսքին և երկխոսություններին առավել բնորոշ են երկկազմ նախադասությունները՝ հաճախ թերի կառուցվածքով: Միակազմ նախադասություններ հանդիպում են հափկապես առածներում և ասացվածքներում՝

**Հին փամբանը քամո չէն փալ:**

**Դնոգ խօսկը հննաքքմն էն ասըմ:**

**Վերի յուռղի դնդիրը ներքի յուռղմն էն գիղըմ:**

**Տըզլօզ ջաներներին կաղու էն շղնգել:**

Բարդ համադասական նախադասությունների անմիջական բաղադրիչների կապակցության գերիշխող միջոցը շարահարությունն է՝ համադաս նախադասությունների անշաղկապ միավորումը.

**Ըռավօրը վէկացամ, քընացիմ մարգը, մին դնսարն սօխ նան կանանչի քաղիմ, պերիմ, լըվացամ, փրրիմ շալըմը, էդ հնլիվօրը հացըպանրի հեղ փարավ հանղը:**

Բարդ նախադասության բաղադրիչ պարզ նախադասությունները հաճախ միմյանց հետ կապվում են հնչերանգով.

**Արմենագն ա քընացել, Կիքօրը:**

(Արմենակն է գնացել, թե՛ Գրիգորը:)

**Մարիցն էս կալի՛, բախճի՛ցը:**

(Մարի՛ցն էս գալիս, թե՛ այգուց:)

**Քընացի՛ր, մընացի՛ր:**

(Գնացի՛ր, թե՛ մնացի:)

**Տո՛ւ կըքընաս քաղաք, հառ՛սը՛դ կըզա կէղը:**

(Դո՛ւ կգնաս քաղաք, թե՛ հարսդ գյուղ կզա:)

Համադաս նախադասությունները և նախադասության համադաս անդամները միմյանց կապակցվում են հարկապես **նա(ն), յն, յն...յն, համ...համ, նն...նն** փոխառյալ շաղկապներով:

Բարդ ստորադասական նախադասությունների անմիջական բաղադրիչները կապակցվում են հափկապես **վօր, թէ, թէ վօր, բա, ինչպես նաև փոխառյալ համա, չունքի, քի** շաղկապներով:

Ի տարբերություն գրական արևելահայերենի՝ որպես պարագա հաճախ կիրառվում է **ըմ** վերջավորությամբ ներգոյական հոլովը՝

**Մաղ փիսըթունը ընդա կընգանըմն ա, իրանըմը չի:**

(Ամբողջ վարությունը նրա կնոջ մեջ է, և ոչ իր մեջ:)

**Կօքըմըդ նըստեմ, մոլրոլքդ ծիք փամ:**

(Գոգդ նստեն, մորուքդ ձգեն:)

**Խանում-խաթունը սալագըմը պար ա կալի:**

(Խանում-խաթունը կողովի մեջ պարում է:)

**Հինգ հրմբարիլումը քընաց պերեց:**

(Մինչև հինգը հաշվելու ընթացքում զնաց բերեց:)

Առավել կիրառական է նաև անկախար դերբայը՝

**Ըրեխեն քընըմ փեղը վեր ընգավ:**

(Երեխան քայլելիս ընկավ:)

**Յես մեննագ իմ մեռնըմ օրս չեմ գիտըմ:**

(Ես միայն իմ մեռնելու օրը չգիտեմ:)

Նպարակի պարագան արտահայտվում է անորոշ դերբայի ուղղական հոլովով՝

**Ըրեխեքը քընացել ին կարի քաղիլ:**

**Տըղերքը քընացել էն դառը՝ ուղիլ-խըմիլ:**

Նավաքականություն արտահայտող հոգնակի ձևերը, ինչպես նաև գույգ մարմնամասերը ստորոգյալի հետ թվով չեն համաձայնեցվում՝

**Ժանգ'երքը վըրա էր փալի:**

**Ըլըմ ա չըլըմ, մին մառթըկընիգ ա ըլըմ:**

**Մենծըպըջիրըդ շուն թառնա:**

**Ըրեխի նշկ'երը ցավըմ ա:**

**Պառավի վօղերը յեռըմ ա:**

Երբեմն կիրառվում է անհոդ ենթակա՝

**Էն ախճիգ ո'ր քընաց:**

**Մառ'թ ըղմմ անաղըհաց չի ըլիլ:**

Խոսվածքի ոճական և շարահյուսական առանձնահատկություններին, կենդանի խոսքին առավել մանրամասն կարելի է ծանոթանալ «Նմուշներ» մասում:

## ՆԵՐՔԻՆ ԵՎ ԱՐՏԱՔԻՆ ԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐ

### ԽՈՍՎԱԾՔԻ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐԻ ՆԵՐՔԻՆ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Վայոց ձորի խոսվածքն ընդգրկող բնակավայրերը, լեզվական սերտ ընդհանրություն ներկայացնելուց զար, ինչպես նշվեց նախորդ մասերում, ունեն նաև խոսվածքային որոշ փարբերություններ (ինչպես հնչյունական, այնպես էլ քերականական): Մեր ուսումնասիրության արդյունքում վեր հանված հարկանիշների փարբերություններն ըստ բնակավայրերի ներկայացված են առանձին աղյուսակով (աղյուսակ 2):

Ինչպես նկատվում է ամփոփիչ աղյուսակից (աղյուսակ 3) և դրա հիման վրա կառուցված գծապատկերից (գծապատկեր 1), մյուս բնակավայրերի հարկանիշներից ամենամեծ փարբերություններն արձանագրում է Օծով-Նորսի խոսվածքը (առավելագույն փարբերությունը կազմում է 10,5 միավոր, նվազագույնը՝ 7 միավոր), քիչ ավելի նվազ չափով Աղավնաձորի խոսվածքը (առավելագույնը՝ 8,5 միավոր, նվազագույնը՝ 3,5 միավոր): Մա կարելի է բացատրել նրանով, որ Օծովը, ինչպես նաև ամբողջությամբ օծովցիներով բնակեցված Նորսը ներկայացնում են Վայոց ձորին սահմանակից Ճահուկ-Շահապունիք գավառը, ուստի այս խոսվածքի որոշ հարկանիշներ բնականաբար թեքվում են դեպի Արցախի բարբառի Սյունիքի խոսվածքները: Աղավնաձորի պարագայում խնդիրն այլ է. այստեղ 1828 թվականին հաջորդող փարիներին հաաքարվել են նաև խոյեցի ընտանիքներ (ի դեպ, վերաբնակված ընտանիքներից սերված փոհներից մեկն այսօր էլ կրում է Խոյցունք անունը), որոնց բարբառը, ինչպես վերը նշվեց, որոշ ազդեցություն թողել է խոսվածքի վրա:

Որոշ խոսվածքներ հարկանիշների խիստ փարբերություններ չեն արձանագրում՝ Ազնաբերդի (Վերին Ազնաբերդի), Գնիշիկի (Արփիի), Խաչիկի (Չիվայի), Արենիի, Ռինդի խոսվածքները միմյանցից աննշան են փարբերվում (առավելագույն փարբերությունը կազմում է 5,5 միավոր, նվազագույնը՝ 0 միավոր): Միմյանց նկատմամբ նվազագույն փարբերություններ են արձանագրում Գնիշիկի (Արփիի) և Խա-



ջիկի (Չիվայի) խոսվածքները՝ 0 միավոր, իսկ Ազնաբերդի և Արենիի խոսվածքների միջև լեզվական «հեռավորությունը» ընդամենը 0,5 միավոր է:

Եթե որպես խոսվածքը կրող ամենամեծ բնակավայր և ճակատագրի բերումով այլ հանրապետության փարածքում հայտնվելու պարճառով 20-րդ դարում առավել կղզիացած և գրական հայերենի ազդեցություններից համեմատաբար մեկուսացած բնակավայր՝ խոսվածքի կենտրոն ընդունենք Ազնաբերդը, ապա մյուս խոսվածքները կրող գյուղերը նրանից կունենան հետևյալ խոսվածքային «հեռավորությունները».

Ազնաբերդ, Վերին Ազնաբերդ – 0

Արենի – 0,5

Գնիշիկ, Արփի – 2,5

Խաչիկ, Չիվա – 2,5

Ռինդ – 2,5

Գնդեվազ – 3,5

Կեչուր – 3,5

Աղավնաձոր – 6

Օծուփ, Նորս – 10,5:

## **ԽՈՍՎԱԾՔԻ ԴԻՐՔԸ ՄԵՐՉԱԿԱ ԲԱՐԲԱՌՆԵՐԻ ՄԻՋԵՎ**

Նարակից բարբառների նկատմամբ Վայոց ձորի խոսվածքի դիրքը ճշգրտելու համար օգտվել ենք ակադեմիկոս Գևորգ Զահուկյանի մշակած բազմահատկանիշ վիճակագրական դասակարգման սկզբունքներից: Որպես համեմատության եզրեր ընտրել ենք Վայոց ձորին աշխարհագրորեն առավել մոտ փարածքներ ընդգրկող ավանդական բարբառները՝ Արարաթյան (Երևանի), Ագուլիսի, Արցախի, Խոյի և Զուղայի (աղյուսակ 4):

50 հնչյունական (25 բաղաձայնական, 25 ձայնավորային) և 50 քերականական (25 անվանական, 25 բայական) հայերնի հատկանիշները ընդգրկող 100 բարբառային հատկանիշների<sup>1</sup> (աղյուսակում հայր-

---

<sup>1</sup> Գ. Զահուկյան, Նայ բարբառագիտության ներածություն, Երևան, 1972, էջ 45-119:

կանիշները նկարագրված են հնարավորինս սեղմ, բերված են միայն համեմատվող փարբերակները) համեմատության արդյունքները վկայում են, որ Վայոց ձորի խոսվածքն ամենամերձավոր առնչություն ունի ինչպես Արարապյան (փարբերությունները կազմում են 22 միավոր, որը խոսվածքից բարբառի անցման սահմանն է), այնպես էլ Ջուղայի (փարբերությունները կազմում են 23,5 միավոր) բարբառների հետ, այնուհետև քիչ հեռացած է Արցախի բարբառից (փարբերությունները կազմում են 27,5 միավոր): Բնականաբար, խոսվածքն առավել զգալի փարբերություններ է արձանագրում հոյի (37,5 միավոր) և Ագուլիսի (40 միավոր) բարբառներից:

Վերոհիշյալ 100 հատկանիշների փարբերություններից զար խոսվածքը, սակայն, Արարապյան բարբառի նկատմամբ դրսևորում է նաև նախորդ մասերում արդեն հիշատակված էական այլ փարբերություններ՝ ո՞ր շնչեղ ձայնորդի առկայություն, որոշ ձայնորդներից առաջ ո՞ւմ հնչյունափոխություն, բառամիջում և բառավերջում խուլերի համադրած ձայնեղացում, բառամիջի ձայնեղացած խուլի հեփընթաց առնմանությամբ բառասկզբի խուլի ձայնեղացում, արտաքին թեքման օ հոլովման առկայություն, ապառնի դերբայի օ վերջավորություն, ա, ան, (ան)է, է(ն) վերջավորություններով բացառական հոլովի առկայություն, է լծորդության որոշ պարզ բայերի սահմանական եղանակի անցյալ կատարյալի ա խոնարհիչով կազմություն, ե-զակի երրորդ դեմքի կրավորաձև վերջավորություն և այլն:

Այս փարբերությունների առկայությունը թույլ է փայլա արձանագրել, որ Վայոց ձորի խոսվածքը միջբարբառ է հայ բարբառների արևելյան խմբակցության Արարապյան կամ հյուսիսարևելյան բարբառախմբի<sup>2</sup> Արարապյան և Ջուղայի բարբառների միջև:

Ինչպես նկատվում է ամփոփիչ աղյուսակից (աղյուսակ 5) և դրա հիման վրա կառուցված գծապարկերից (գծապարկեր 2), Վայոց ձորի խոսվածքն իր հատկանիշներով մերձավորություն է դրսևորում այն բարբառների նկատմամբ, որոնք աշխարհագրորեն մոտ են Կեղադրված իր զբաղեցրած տարածքին (բացառություն է կազմում Ագուլիսի առանձնահատուկ բարբառը, որը զգալիորեն փարբերվում է շրջակա գրեթե բոլոր բարբառներից): Այս փաստը էապես վկայում է խոսվածքի՝ Գուլյալ տարածքում բնիկ, ավանդական լինելու մասին:

---

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 135:

## ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

1. Վայոց ձորի խոսվածք ենք անվանել Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի, Աղավնաձոր, Արփի, Գնդեվազ, Գնիշիկ, Խաչիկ, Կեչուր, Հորս, Չիվա, Ռինդ, Վերին Ազնաբերդ, մինչև 1988 թվականը՝ նաև հյուսիսային Նախիջևանի Ազնաբերդ և Օծուի գյուղերի ավանդական խոսվածքները, որոնք որոշ փոքրթիվ փարբերություններով հանդերձ՝ ներկայացնում են լեզվական սերտ առնչություն:

2. Խոսվածքի մասին սուկ թուուցիկ հիշարարություններ կան դասական բարբառագիարական աշխարություններում, որոնցում այն համարվել է Արարարյան բարբառի խոսվածք. Հրաչյա Աճառյանը, այնուամենայնիվ, չի ընդգրկել ո՛չ Արարարյան, ո՛չ Արցախի (Հարաբաղի) և ո՛չ էլ որևէ այլ բարբառի արարածման սահմաններում: Ուսարի, առանձին աշխարանքով ուսումնասիրությունը միայն կարող էր վեր հանել խոսվածքում առկա բարբառային յուրօրինակ իրողությունները և ճշտել նրա դիրքը մերձակա բարբառների նկարմամբ:

3. Ըստ ձևաբանական դասակարգման՝ խոսվածքը պարկանում է հայ բարբառների արևելյան խմբակցության «ում» ճյուղին և ըստ հնյունաբանական դասակարգման՝ ունի հպական բաղաձայնների երկանդամ համակարգ: Հնյունական, քերականական, բառապաշարային և բառակազմական մի շարք առանձնահարկություններով հանդերձ՝ Վայոց ձորի խոսվածքն ընդհանուր գծեր է դրսևորում հարևան Արարարյան, Արցախ-Սյունիքի, Վասպուրականի բարբառների նկարմամբ:

4. Անհայր են նաև խոսվածքի՝ Արարարյան բարբառից ունեցած փարբերությունները, որոնց մի մասը չի ընդգրկված հայ բարբառների բազմահարկանիշ վիճակագրական դասակարգման 100 հայրնի հարկանիշների ցանկում:

5. Ակադեմիկոս Գևորգ Զահուկյանի մշակած բազմահարկանիշ վիճակագրական դասակարգման սկզբունքների կիրառմամբ պարզել ենք, որ խոսվածքը Արարարյան բարբառից հեռու է 22 միավորով (այսինքն գրնվում է Արարարյան բարբառի խոսվածք կամ առանձին բարբառ համարվելու սահմանին), իսկ Զուղայի բարբառից փարբերվում է ընդամենը 23,5 միավորով: Միջակա դիրք գրավելով այս երկու բարբառների միջև՝ խոսվածքը մերձավորություն է դրսևորում

նաև Արցախի բարբառի հանդեպ (տարբերությունները կազմում են 27,5 միավոր):

6. Խոսվածքի և մերձակա բարբառների միջև աշխարհագրական և լեզվական մերձավորությունների համընկնման փաստը հաստատում է խոսվածքի տեղաբնիկ լինելու իրողությունը:

7. Ուսումնասիրության արդյունքներից կարելի է եզրակացնել, որ Վայոց ձորի խոսվածքը միջբարբառ է՝ տեղադրված հայ բարբառների արևելյան խմբակցության Արարատյան կամ հյուսիսարևելյան բարբառախմբի Արարատյան և Զուղայի բարբառների միջև: Նեփևաբար գտնում ենք, որ բարբառագիտական գրականության մեջ ճիշտ կլինի խոսվածքն անվանել Վայոց ձորի միջբարբառ:

**ՎԱՅՈՑ ՉՈՐԻ ԽՈՍՎԱԾՔԻ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐԻ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԸՍՏ  
ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ**

100

| Հ <sup>o</sup> | Հարկանիշ                                                                                                              | Ազնաբերդ,<br>Վերին<br>Ազնաբերդ | Աղավնաձոր | Արենի  | Գեղեվազ | Գնիշիկ,<br>Արփի | Խաչիկ,<br>Չիվա | Կեչուր | Ռինդ   | Օձուփ,<br>Հորս |
|----------------|-----------------------------------------------------------------------------------------------------------------------|--------------------------------|-----------|--------|---------|-----------------|----------------|--------|--------|----------------|
| 1.             | Բառասկզբում <b>բա, գա, դա, ձա, ջա &gt; պն, կն, րն, ծն, ճն</b> (Աճառյանի օրենք՝) <b>պննջնր, րնննր</b>                  | +<br>-                         | +<br>-    | +<br>- | +<br>-  | +<br>-          | +<br>-         | +<br>- | +<br>- | +              |
| 2.             | Բառամիջում և բառավերջում խուլերի ձայնեղացում <b>պազ, կադու</b>                                                        | +                              | +         | +      | +       | +               | +              | +      | +      | -<br>+         |
| 3.             | Բառասկզբի <b>հո</b> հնչյունակապակցության դիմաց <b>ֆո՝ ֆոդ, ֆորիլ</b>                                                  | +                              | +         | +      | -       | -               | -              | -      | +      | -              |
| 4.             | <b>Բաղաձայն + ն</b> -ով վերջացող բառերում <b>ն</b> -ի անկում՝ գաղտնավանկի <b>ը</b> -ի պահպանմամբ՝ <b>ծուզը, մուզը</b> | +                              | +         | +      | +<br>-  | +               | +              | +      | +      | +<br>-         |

|    |                                                                                                                                                                                     |                |                |
|----|-------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|----------------|----------------|
| 5. | Ա ձայնավորի զգալի շրթնայնացում                                                                                                                                                      | -              | +<br>-         |
| 6. | Սահմանական եղանակի ապառնիի և անցյալ ապառնիի կազմություն <b>պիպեմ</b> եղանակիչի մաշված ձևերով՝<br>ա) պերիլ'դեմ, պերիլ'դիմ՝ <sup>+1</sup> ,<br>բ) պերի'բդեմ, պերի'բդիմ՝ <sup>+2</sup> | + <sup>1</sup> | + <sup>2</sup> |
| 7. | Սահմանական եղանակի ապառնիի և անցյալի ապառնիի հիմնական կազմությանը գուգահեռ՝ ապառնի դերբայով <b>կազմություն՝ պերիլօեմ, պերիլօիմ</b>                                                  | -              | +              |
| 8. | Սահմանական եղանակի ապառնիի և անցյալ ապառնիի՝ ապառնի դերբայով կազմություն <b>ու&gt;վ</b> հնչյունափոխությանը՝ <b>պերիլ'վեմ, պերիլ'վիմ</b>                                             | -              | -              |

|                |                     |                |                |                |                |        |
|----------------|---------------------|----------------|----------------|----------------|----------------|--------|
| -              | -                   | -              | -              | -              | -              | +<br>- |
| + <sup>2</sup> | + <sup>2</sup><br>- | + <sup>2</sup> | + <sup>2</sup> | + <sup>1</sup> | + <sup>2</sup> | -      |
| -              | +                   | +              | +              | -              | -              | -      |
| -              | -                   | -              | -              | -              | -              | +      |

|     |                                                                                                                                                              |   |   |
|-----|--------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|---|---|
| 9.  | Բայի ժխտական<br>ձևերում օժանդակ<br>բայի հետադաս կի-<br>րառություն <b>պերըմ</b><br><b>չեն, պերըմ չիմ</b>                                                      | + | - |
| 10. | Ապառնի դերբայի օ<br>վերջավորություն<br><b>պերիւօ, փանիւօ</b>                                                                                                 | + | + |
| 11. | Ի-ով վերջացող<br>բառերի օ հոլովիչ՝<br><b>քամօ, մըդանօ</b>                                                                                                    | + | - |
| 12. | <b>Ք</b> հոգնակերպի կի-<br>րառություն ձայ-<br>նավորահանգ<br>բառերում՝ <b>կ'ինիք,</b><br><b>խընամիք, քամիք</b>                                                | - | + |
| 13. | <b>Է</b> լծորդության ո ըռշ<br>պարզ բայերի սահ-<br>մանական եղանակի<br>անցյալ կապարյալի<br><b>ա</b> խոնարհիչով<br>կազմություն՝ <b>պե-</b><br><b>րամ, փըրամ</b> | - | - |



|   |        |   |   |        |   |   |
|---|--------|---|---|--------|---|---|
| + | +      | + | + | +      | + | + |
| + | +      | + | + | +      | + | - |
| + | +<br>- | + | + | +<br>- | + | - |
| - | -      | - | - | -      | + | + |
| - | -      | - | - | +      | - | + |

|     |                                                                                                                                                   |   |   |
|-----|---------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|---|---|
| 14. | Է լծորդության որոշ պարզ բայերի սահ - մանական եղանակի անցյալ կապարյալի եզակի երրորդ դեմքի կրավորաձև վերջավորություն՝ պէրավ, փըրավ                  | - | - |
| 15. | Գալ, փալ բայերի սահմանական եղա - նակի ներկայի և անցյալ անկապարի նաև անկապար դերբայի մաշված ձևով կազմություն՝ կալիս ա  կալի ա, փալիս ինք  փալի ինք | - | + |
| 16. | Բառապաշարի զգալի փարբարու - թյուններ                                                                                                              | - | - |

|   |   |   |   |   |   |        |
|---|---|---|---|---|---|--------|
| - | - | - | - | + | - | +      |
| - | - | - | - | - | + | -      |
| - | - | - | - | - | - | -<br>+ |

**ՎԱՅՈՑ ՉՈՐԻ ԽՈՍՎԱԾՔԻ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐԻ  
ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԸՍՏ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ**

| Բնակավայր                   | Ազնաբերդ,<br>Վերին<br>Ազնաբերդ | Աղավնաձոր | Արենի | Գնդեվազ | Գնիշիկ,<br>Արփի | Խաչիկ,<br>Չիվա | Կեչուր | Ռինդ | Օծուփ,<br>Հորս |
|-----------------------------|--------------------------------|-----------|-------|---------|-----------------|----------------|--------|------|----------------|
| Ազնաբերդ,<br>Վերին Ազնաբերդ | —                              | 6         | 0,5   | 3,5     | 2,5             | 2,5            | 3,5    | 2,5  | 10,5           |
| Աղավնաձոր                   | 6                              | —         | 5,5   | 6       | 5,5             | 5,5            | 8,5    | 3,5  | 10,5           |
| Արենի                       | 0,5                            | 5,5       | —     | 3,5     | 2               | 2              | 4      | 2    | 10,5           |
| Գնդեվազ                     | 3,5                            | 6         | 3,5   | —       | 1,5             | 1,5            | 4      | 5,5  | 9              |
| Գնիշիկ,<br>Արփի             | 2,5                            | 5,5       | 2     | 1,5     | —               | 0              | 4      | 4    | 10,5           |
| Խաչիկ,<br>Չիվա              | 2,5                            | 5,5       | 2     | 1,5     | 0               | —              | 4      | 4    | 10,5           |
| Կեչուր                      | 3,5                            | 8,5       | 4     | 4       | 4               | 4              | —      | 6    | 7              |
| Ռինդ                        | 2,5                            | 3,5       | 2     | 5,5     | 4               | 4              | 6      | —    | 10,5           |
| Օծուփ,<br>Հորս              | 10,5                           | 10,5      | 10,5  | 9       | 10,5            | 10,5           | 7      | 10,5 | —              |



**ՎԱՅՈՑ ՉՈՐԻ ԽՈՍՎԱԾՔԻ ԵՎ ՀԱՐԱԿԻՑ ԲԱՐԲԱՆՆԵՐԻ  
ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ԱՂՅՈՒՄԱԿ**

| Հափկանիշ                                                                                                                                              | Վ. ձ. | Արփ. | Ազլ. | Արց. | Խոյ. | Ջուլ. |
|-------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|-------|------|------|------|------|-------|
| 1. Բառասկզբում <b>բ, գ, դ, ձ, ջ&gt;փ, ք, թ, ց, չ</b> (բան>փան)                                                                                        | -     | -    | -    | -    | -    | -     |
| 2. Բառասկզբում <b>բ, գ, դ, ձ, ջ&gt;բ', գ', դ', ձ', ջ'</b> (բան>բ'ան)                                                                                  | -     | +    | -    | -    | -    | -     |
| 3. Բառասկզբում <b>բ, գ, դ, ձ, ջ&gt;պ, կ, փ, ծ, ճ</b> (բան>պան)                                                                                        | +     | -    | -    | +    | +    | +     |
| 4. <b>բ + ք, գ, դ, ձ, ջ&gt;բ + փ, ք, թ, ց, չ</b><br>միջծայնավորային և բառավերջի ձայնավորահաջորդ <b>բ, գ, դ, ձ, ջ&gt;փ, ք, թ, ց, չ</b> (որք>(վ)օրփ)    | +     | +    | -    | +    | +    | ±     |
| 5. Բառասկզբում <b>պ, կ, փ, ծ, ճ&gt;բ, գ, դ, ձ, ջ</b> (պառավ>բառավ)                                                                                    | -     | -    | -    | -    | -    | -     |
| 6. <b>բ + պ, կ, փ, ծ, ճ&gt;բ + ք, գ, դ, ձ, ջ</b><br>միջծայնավորային և բառավերջի ձայնավորահաջորդ <b>պ, կ, փ, ծ, ճ&gt;բ, գ, դ, ձ, ջ</b> (կարպեք>կարբեք) | +     | ±    | -    | ±    | ±    | ±     |
| 7. Ոչ բառասկզբի <b>փ, ք, թ, ց, չ&gt;պ, կ, փ, ծ, ճ</b> (փրփուր>փրպուր, պրպուր)                                                                         | -     | ±    | ±    | ±    | ±    | -     |
| 8. <b>գ', կ', ք'</b> ոչ փոխառյալ բառերում (գարի>կ'արի, կ'նրի)                                                                                         | ±     | +    | +    | +    | +    | -     |
| 9. <b>նզն, նկն&gt;յն</b> (կանգնել>կայնել, գայնել, կայնիլ, գայնիլ)                                                                                     | -     | -    | +    | -    | +    | -     |
| 10. Զայնավոր + <b>կ, ք &gt; ձայնավոր + հ, Խ', յ, դ, խ</b> (բակլա>բախլա, փախլա, բայլա)                                                                 | -     | -    | ±    | -    | +    | -     |
| 11. <b>փ + ն, ք, ո&gt;նն</b> (մափնոց>մաննոց)                                                                                                          | +     | -    | ±    | +    | +    | -     |

|                                                                                                     |                |   |                |                |   |                |
|-----------------------------------------------------------------------------------------------------|----------------|---|----------------|----------------|---|----------------|
| 12. Միջձայնավորային բաղաձայնների<br>ոչ սաստկական և ոչ առնմանական<br>կրկնություն (ածել>ածծել, ածծել) | -              | - | -              | -              | - | -              |
| 13. Բաղաձայնախորդ ջ, ճ, չ, ձ, ծ, ց<br>>ժ, շ, գ, ս (մեջք>մեշկ)                                       | +              | + | +              | +              | + | ±              |
| 14. հ>յ, յ <sup>հ</sup> (բահ>բայ, բայ <sup>հ</sup> )                                                | -              | - | -              | -              | - | -              |
| 15. Բառասկզբում ձայնավոր>հ +<br>ձայնավոր (ամաչել>հըմանչիլ)                                          | +              | - | +              | +              | ± | + <sup>1</sup> |
| 16. Բառասկզբում ոչ առնմանական հ>խ<br>(հայ>խայ)                                                      | -              | - | ±              | -              | + | +              |
| 17. Բառասկզբում հո>ֆո (հող>ֆող`+),<br>հո>վո (հող>վող, վել`+ <sup>1</sup> )                          | ±              | + | -              | + <sup>1</sup> | - | -              |
| 18. Տարնմանական խ>հ (խաղ>հաղ`+),<br>ոչ փարնմանական խ>հ (խառնել><br>հառնել`+ <sup>1</sup> )          | +              | + | + <sup>1</sup> | +              | - | -              |
| 19. Բառասկզբում դ>խ (դեկ>խեկ)                                                                       | -              | - | -              | -              | - | -              |
| 20. Կոկորդային դ <sup>1</sup> , կ <sup>0</sup> (դավուրմա><br>դ'ավուրմա, կ <sup>0</sup> ավուրմա)     | -              | - | -              | -              | + | -              |
| 21. Ֆ-ի առկայություն (հող>ֆող,<br>ֆոֆոալ)                                                           | ±              | + | +              | -              | + | +              |
| 22. ր>ր <sup>1</sup> , յ, ճ, ժ, շ (երեք>իյեք, ժեք, ձեք)                                             | -              | ± | -              | -              | - | -              |
| 23. ռ-ի և ր-ի շփոթություն (բարի>բառի,<br>եռալ>երալ)                                                 | -              | - | -              | -              | - | -              |
| 24. Բաղաձայնահաջորդ ն-ի պահպան-<br>վածություն (բեռն>բեռն`+), (ըն>ը<br>(բեռն>բեռը`+ <sup>1</sup> )   | + <sup>1</sup> | - | +              | +              | - | ±              |

|                                                                                                                                                         |   |                |                |                |   |   |
|---------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|---|----------------|----------------|----------------|---|---|
| 25. Միջձայնավորային <b>ս&gt;հ</b> (տեսա> տեսհա՝ + <sup>2</sup> ), ցուցական դերանուններում միջձայնավորային <b>ր&gt;հ</b> (սրանք> սհանք՝ + <sup>4</sup> ) | - | + <sup>2</sup> | + <sup>2</sup> | + <sup>4</sup> | - | - |
| 26. Շեշտակի <b>այ&gt;է</b> (այս>էս)                                                                                                                     | + | +              | -              | +              | + | + |
| 27. <b>ոյ&gt;ի</b> (թոյլ>թիլ)                                                                                                                           | + | +              | -              | -              | - | - |
| 28. <b>իւ&gt;ի</b> (ալիւր>ալիր)                                                                                                                         | + | +              | -              | -              | - | - |
| 29. Երկբարբառների առկայություն (գեւր>գիւր, գող>գուղ, լուծ>լուծ)                                                                                         | - | -              | +              | -              | + | + |
| 30. Շեշտակի <b>ե&gt;իւ</b> (գեւր>գիւր)                                                                                                                  | - | -              | -              | -              | - | - |
| 31. Շեշտակի <b>ո&gt;ու</b> (գոմ>գում)                                                                                                                   | - | -              | -              | -              | + | + |
| 32. Միավանկ բառերի սկզբնային <b>ե&gt;յէ</b> (եզն>յէզ, յէզնը, յէզը)                                                                                      | + | +              | -              | +              | + | + |
| 33. Միավանկ բառերի սկզբնային <b>ո&gt;վօ, վէ, ուօ, ուէ</b> (ոխ>վօխ, վէխ, ուօխ, ուէխ)                                                                     | + | +              | -              | +              | + | + |
| 34. Քմայնացած ձայնավորների ( <b>ւն, օն, ուն, օն</b> ) առկայություն (բարակ>պանակ)                                                                        | + | -              | +              | +              | + | + |
| 35. <b>ա&gt;ւն, ու, օ, ու</b> (բանջար>պանջար)                                                                                                           | + | -              | +              | +              | + | - |
| 36. <b>ո&gt;ւն, օ, ու</b> (բոլոր>բոլոր)                                                                                                                 | ± | -              | +              | +              | + | - |
| 37. <b>ու&gt;ւն, ու, օ</b> (բուրդ>բուրդ)                                                                                                                | ± | -              | +              | +              | + | - |
| 38. Չայնավորների ներդաշնակություն (ալուր>ալուր)                                                                                                         | + | -              | +              | +              | + | - |
| 39. <b>ը-ի</b> լիաձայնություն <b>ը&gt;ի, ու</b> (բրինձ>բիրինձ)                                                                                          | - | -              | +              | +              | ± | - |
| 40. Շեշտակի <b>ա&gt;ե, է, ի, էի</b> (բան>բեն)                                                                                                           | - | -              | -              | +              | - | - |
| 41. Շեշտակի <b>ե(է)&gt;ի, էի</b> (եզն>իզ)                                                                                                               | - | -              | +              | +              | - | - |



|                                                                                                                                                  |                 |   |                |                 |                |                 |
|--------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|-----------------|---|----------------|-----------------|----------------|-----------------|
| 42. Շեշտակիր <b>ո(օ)&gt;ու, ու, ուե</b> (ով>ուվ)                                                                                                 | -               | - | +              | ±               | -              | -               |
| 43. Շեշտակիր <b>ի&gt;ե, է, ա, այ</b> (միս>մէս, մայս)                                                                                             | -               | - | +              | +               | -              | ±               |
| 44. Շեշտակիր <b>ե(է)&gt;ա, ւ, այ</b> (ծեռ(ք)>ձառ(ք), ծւռ(ք))                                                                                     | -               | - | +              | -               | -              | -               |
| 45. Շեշտակիր <b>ու&gt;ո, օ, ոէ, օէ</b> (ութ>օթ)                                                                                                  | ±               | - | +              | +               | -              | -               |
| 46. <b>ա-ի</b> շրթնայնացածություն                                                                                                                | ±               | - | +              | -               | -              | +               |
| 47. Շեշտակիր <b>ո(օ)&gt;ա, է, ի, ղ</b> (խռով>խռավ, խռվլ)                                                                                         | -               | - | +              | +               | -              | -               |
| 48. <b>ը, ը<sup>ի</sup>, ա<sup>ն</sup></b> ձայնավորների վերջնավանկային շեշտակրություն ոչ բնածայն բառերում (կանգնիր>կայնը՛, դնում>դընը՛ն)         | ±               | + | -              | -               | -              | -               |
| 49. <b>ը-ով</b> չվերջացող բառերի նախավերջավանկային շեշտակրություն (անծրև>անծրելվ)                                                                | +               | + | +              | +               | -              | -               |
| 50. <b>ա<sup>ն</sup>, է<sup>ն</sup>, ը<sup>ն</sup></b> ձայնավորների առկայություն (գրել>գափել)                                                    | -               | - | -              | +               | -              | -               |
| 51. <b>վի (վնի, վներ, վան...)</b> հոգնակերպ (աչքեր~աչվի, աչվներ)                                                                                 | -               | - | -              | -               | +              | -               |
| 52. <b>նի (նէ, նին, նիք)</b> հոգնակերպ (ալևորներ~(հ)ալևորնի՛+), <b>անի (անիք, էնի, էնէ, էնիք)</b> հոգնակերպ (կին~կընանիք՛+ <sup>1</sup> )        | + <sup>01</sup> | - | + <sup>1</sup> | + <sup>01</sup> | -              | + <sup>01</sup> |
| 53. <b>ան</b> (անք, ան(ն)եր) հոգնակերպ՝ ձիեր~ձիանք                                                                                               | ±               | + | +              | +               | +              | +               |
| 54. <b>սրան, սրար...</b> հոգնակերպներ (ակռաներ~ակռեսրան)                                                                                         | -               | - | -              | -               | ±              | -               |
| 55. <b>ր, եր, ար, եր + ք, անք, այք</b> փիպի բաղադրյալ հոգնակերպ (աղջիկներ~աղջկերք)՝ +, <b>ք + եր</b> հոգնակերպ (ամաններ~ամանքեր)՝ + <sup>1</sup> | +               | + | +              | +               | + <sup>1</sup> | +               |

|                                                                                                                     |   |   |                |                |   |   |
|---------------------------------------------------------------------------------------------------------------------|---|---|----------------|----------------|---|---|
| 56. (ն)եր-ով հոգնակիի ի հոլովում (ծովերի-ծովերի)՝ +, ի-ին զուգահեռ ու հոլովում (ծովերի>ծովերի  ծովերու)՝ ±          | + | + | ±              | +              | + | + |
| 57. Շուն, փուն բառերի արտաքին թեքման հոլովում (շուն-շունի)                                                          | - | - | ±              | -              | - | - |
| 58. է(ն)-ով բացառական (ծովից~ծովէ(ն)՝ +, ան-ով բացառական (ծովից>ծովան)՝ + <sup>1</sup>                              | ± | - | + <sup>1</sup> | + <sup>1</sup> | + | - |
| 59. ց-ով (ից, ուց, իծ) բացառական (ծովից~ծովից)                                                                      | ± | + | +              | -              | - | + |
| 60. Վերլուծական բացառական (աղբափից>աղբափի(ն) մնէ, դէն, ինա, (հ)անա, անից, նիսպա...)                                 | - | - | +              | +              | - | - |
| 61. Գործիականի ավ(նով) վերջավորություն (ծով(եր)ով~ծով(եր)ավ՝ + <sup>2</sup> )                                       | - | - | + <sup>2</sup> | + <sup>2</sup> | - | - |
| 62. Երազրությամբ վերլուծական գործիական (աղբափով~աղբափի(ն) հեպ, (հ)անով, (հ)անավ...)                                 | - | - | +              | +              | - | - |
| 63. Բացառականում մ-ի առկայություն (եղբորից~եղբորմէ, եղբորնով)                                                       | - | - | -              | -              | ± | - |
| 64. ում-ով ներգոյական (ծովում~ծովում)                                                                               | + | + | +              | +              | - | + |
| 65. Դերանունների թեք ձևերում ի-ի առկայություն (ինձ~ինձի, ձեզ~ձեզի)                                                  | - | - | -              | -              | + | - |
| 66. (ի)կ-ով դերանվանական ձևեր (այս~եսիկ, ասիկա, ինձ~ինձիկ)                                                          | - | - | +              | -              | + | - |
| 67. Ցուցական դերանունների թեք ձևերում (և հոգնակի ուղղականում) հավելական ք, դ (սրա~ստրա, էստր, սրանք~ստրանք, էստրնք) | + | + | +              | +              | + | + |

|                                                                                                                                      |                |   |                |   |                |                |
|--------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|----------------|---|----------------|---|----------------|----------------|
| 68. Յուցական դերանունների 1-ին դեմքի բացակայություն (սա, այս~էս)                                                                     | -              | - | -              | - | +              | -              |
| 69. ինքի-ով դասական թվական (երկրորդ~երկու(ի)նքի՝ +), մ նախա-<br>ծայնով (երկրորդ~երկումքի՝ + <sup>1</sup> )                           | -              | - | + <sup>1</sup> | + | -              | -              |
| 70. Հադկացուցիչի հոդառություն (աշխարհի(ն) տերը)                                                                                      | -              | - | +              | + | -              | -              |
| 71. Անորոշ հոդի երադասություն (մի աշխարհ~աշխարհ մի, մը)                                                                              | -              | - | -              | - | -              | -              |
| 72. գ նախդիրի գործածություն (տեսնել աշխարհը~տեսնել գաշխարհ)                                                                          | -              | - | -              | - | -              | -              |
| 73. Երադաս կապերի նախադաս գործածություն (ինձ հեպ~հեպ ինձի)                                                                           | -              | - | -              | - | -              | ±              |
| 74. Անձի և իրի առումների րարբերա-<br>կում (տեսնել աղքատին)                                                                           | +              | + | +              | + | +              | +              |
| 75. Դասական թվականի ում-ով կազմություն՝ + <sup>5</sup> (երկրորդ~երկսում)                                                             | + <sup>5</sup> | - | -              | - | -              | + <sup>5</sup> |
| 76. ել և իլ լծորդությունների անաձանց<br>բայերի խոնարհման ձևերի<br>րարբերակվածություն (խոսեմ,<br>խոսեցի~խոսիմ, խոսեցա)                | -              | - | -              | - | -              | -              |
| 77. ուլ լծորդության առկայություն (առնեմ~առնում)                                                                                      | -              | - | -              | - | -              | -              |
| 78. կու-ով (կը, կ, գը, գ) ներկայի (և<br>անցյալ անկարարի) առկայություն (գրում եմ, էի~կը գրեմ, կը գրեի)                                | -              | - | -              | - | -              | -              |
| 79. Ներկայի այլ մասնիկների (շարու-<br>նակականի կամ ծագումով շարու-<br>նակականի՝ կա, կոր, կո, կար...) առկայություն (գրում եմ~կա գրեմ) | -              | - | -              | - | + <sup>3</sup> | -              |


|                                                                                                                                              |       |       |                |       |   |                |
|----------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|-------|-------|----------------|-------|---|----------------|
| 80. Ներկայի այլ մասնիկների (շարունակականի կամ ծագումով շարունակականի՝ <b>հա, հայ, ահա, հանա...</b> ) առկայություն (գրում են (հիմա)~հայ գրեն) | -     | -     | -              | -     | - | -              |
| 81. Շարունակական ներկա (և անցյալ անկադար) (հիմա գրում են~կը գրեն կոր)                                                                        | -     | -     | -              | -     | - | -              |
| 82. <b>ում</b> -ով ներկա (և անցյալ անկադար) (գրում են~գրում են)                                                                              | +     | +     | +              | +     | - | +              |
| 83. <b>յիս</b> -ով ներկա (և անցյալ անկադար) (գրում են~գրել(ի)(ս) են)՝ +, միայն <b>գալ, լալ, փալ</b> բայերի դեպքում $\mp$                     | $\mp$ | $\mp$ | $\mp$          | $\mp$ | + | -              |
| 84. <b>ման</b> -ով ներկա (ելնում են~ելման են)                                                                                                | -     | -     | -              | -     | - | + <sup>1</sup> |
| 85. <b>ր</b> -ով վաղակադար (բերել են~բերել են)                                                                                               | -     | -     | -              | -     | + | -              |
| 86. <b>ուկ</b> -ով հարակադար (եփած (ծ)~եփուկ (ե))                                                                                            | -     | -     | -              | -     | + | -              |
| 87. <b>ել</b> լծորդության անաձանց բայերի ըղծականի եզակի 3-րդ դեմքի՝ <b>է</b> -ից փարբեր վերջավորություն ասի~ասի)                             | +     | +     | +              | +     | + | +              |
| 88. Օժանդակ բայի եզակի 3-րդ դեմքի <b>ա</b> -ով ( <b>ւն</b> -ով) ձև (մարդ է~մարդ ա, ւն)                                                       | +     | +     | +              | +     | - | +              |
| 89. Օժանդակ բայի անցյալ անկադարի երկձայնավոր ձևերում <b>է</b> -ի սղում (էի, էիր, էինք...~ի, իր, ինք...)                                      | +     | +     | -              | +     | - | +              |
| 90. Անորոշով (գրել են՝ +) և <b>լոց, լյաց, լի(ք)</b> փիպի դերբայներով (գրելոց են, գրելյաց են՝ + <sup>1</sup> ) բաղադրյալ ապառնի               | -     | -     | +              | -     | - | + <sup>1</sup> |
| 91. Այլ փիպի դերբայներով բաղադրյալ ապառնի՝ <b>ն</b> -ով վերջացող (գրելա(ցա)(կա)ն են, գրելակուն են՝ +, գրելացու(կ/ք) են՝ + <sup>1</sup> )     | -     | -     | + <sup>1</sup> | +     | - | -              |

|                                                                                                                                                                                |                |   |                |   |                |                |
|--------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|----------------|---|----------------|---|----------------|----------------|
| 92. <b>սիփի</b> եղանակիչի երկրորդ վանկի սղում <b>սի, ս, բի, բ</b> (սիփի գնամ~սի գնամ +), առաջին վանկի սղում <b>փի, փ, դի, դ</b> (սիփի գնամ~փի գնամ, գնալ փ'եմ + <sup>1</sup> ) | + <sup>1</sup> | - | -              | - | + <sup>1</sup> | +              |
| 93. Բաղադրյալ անցյալ ձևերի կազմում բառ-մասնիկի կամ վերջնամասնիկի օգնությամբ (գրում էի~գրում (գրելիս) եմ լալ, գրած էր եմ...)                                                    | -              | - | +              | - | +              | -              |
| 94. <b>ել</b> և <b>ալ</b> լծորդության անցողական անածանց բայերի կապարյալի հոգնակի 1-ին դեմքի համաբանական և ներդաշնակային (բոլոր դեմքերում <b>ա, ան</b> ) վերջավորություն        | -              | - | ±              | - | -              | -              |
| 95. <b>ել</b> լծորդության անածանց բայերի ոչ ցոյական կապարյալ (գրեցի~գրի(մ))                                                                                                    | +              | - | +              | - | +              | -              |
| 96. Բաղադրյալ (վերլուծական) կապարյալ (կարդացի~կարդացել եմ)                                                                                                                     | -              | - | ±              | - | -              | -              |
| 97. Ժխտական մասիկների ետադաս գործածություն (մի' գրիր~գրի՛լ մի, չգրեն~գրեն' ոչ)                                                                                                 | +              | ± | +              | + | -              | ±              |
| 98. Ժխտական բաղադրյալ ձևերի կրկնադիմություն (չեմ գրել~չեմ գրեր եմ, չեմ գրեմ...)                                                                                                | -              | - | -              | - | -              | -              |
| 99. Ժխտական դերբայի հապուկ ձևեր (լ-ի կամ ր-ի անկմամբ <b>ի</b> -ով և <b>ա</b> -ով վերջացող) (չեմ) գրի~(չեմ) գրի, (չեմ) գա~(չեմ) գա)                                             | -              | ± | -              | - | +              | -              |
| 100. Անցյալ կապարյալի եզակի 1-ին դեմքի մ-ով ձև (գրեցի~գր(եց)իմ, կարդացի~կարդացիմ)                                                                                              | + <sup>6</sup> | - | + <sup>6</sup> | - | + <sup>6</sup> | + <sup>6</sup> |

**ՎԱՅՈՅ ՁՈՐԻ ԽՈՍՎԱԾՔԻ ԵՎ ՀԱՐԱԿԻՑ ԲԱՐԲԱՌՆԵՐԻ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐԻ  
ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

| Բարբառ,<br>խոսվածք | Վայոց ձորի | Արարադյան | Ագուլիսի | Արցախի | Խոյի | Զուղայի |
|--------------------|------------|-----------|----------|--------|------|---------|
| Վայոց ձորի         | —          | 22        | 40       | 27,5   | 37,5 | 23,5    |
| Արարադյան          | 22         | —         | 46       | 33     | 43,5 | 26,5    |
| Ագուլիսի           | 40         | 46        | —        | 26,5   | 46,5 | 43,5    |
| Արցախի             | 27,5       | 33        | 26,5     | —      | 46   | 39      |
| Խոյի               | 37,5       | 43,5      | 46,5     | 46     | —    | 37,5    |
| Զուղայի            | 23,5       | 26,5      | 43,5     | 39     | 37,5 | —       |

ՎԱՅՈՅ ՉՈՐԻ ԽՈՍՎԱԾՔԻ  
ԱՐՏԱՔԻՆ ԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ



# ԲԱՌԱՅԱՆԿԵՐ

## ԳՐԱԲԱՐ-ԽՈՍՎԱԾՔ ԲԱՌԱՅԱՆԿ

ազանիմ-հաքնիլ  
 ազապ-ազափ  
 ազապ-ազադ  
 ազբն-ասալը  
 ազգ-ասկը  
 աթարոց-աթարոց  
 աժան-էժան  
 ալետր-հնալիվոր  
 ալիւր-ալիւր  
 ախոռ-ախօռ  
 ածելի-առգըլի  
 ածեն-աձիլ  
 ականջ-անգաջ  
 ականջամուտ-անգաջամընուն  
 ակն-ագը  
 ակօս-ագօս  
 ահ-ահ  
 ահա-ըհը(ն)  
 ահաւադիկ-հէդիկ  
 ահաւանիկ-հէնիկ  
 ահաւասիկ-հէսիկ  
 ադ-ադ  
 ադագ-ադաք  
 ադամ-ադալ  
 ադանձ-ադանձ  
 ադանձեն-ըդանձիլ  
 ադաչեն-ըդաչիլ  
 ադաջուր-ադաճուր  
 ադաւնեակ-յէդնուկ  
 (<ադաւնուկ)

ադր-ախալը  
 ադեղն-անեղ  
 ադիք-ադինք  
 ադուէս-ադվէս  
 ադջիկ-ախճիկ  
 ադքապ-ախկադ  
 ադօթարան-ադօթարան  
 ադօթք-ադօտիկ  
 աճեն-աջիլ  
 ամաչեն-հըմանչիլ  
 ամառն-ամառ  
 ամբար-ամբար  
 ամբարիշտ-ամբարիշտ  
 ամէն-ամմէն  
 ամիս-ամիս  
 ամոլ-ամբօլ  
 այգողք-այք  
 այգուց-էքուձ  
 այդ-էդ  
 այլ-էլ  
 այծ-էձ  
 այն-էն  
 այս-էս  
 այսօր-ըսօր  
 անալի-ըլանի  
 անապապ-անաբադ  
 անաստուած-անաստօծ  
Էրգու ախալեր մին-մինի ման էն կալի,  
Նամա տենըմ չեն:  
(աչքեր)

Տասներգու ախալեր էն,  
Մին-մինի յեննա՛ վազզ էն տալի,  
Նամա հասնըմ չեն:  
(տարվա ամիսները)

Էրգ'են փիլօն,  
Կառջ տեղեր:  
(թել և ասեղ)

Խըփեմ՝ պըռնօվըս մին,  
Պանամ՝ տընօվըս մին:  
(ճրագի լույս)

Ըստե պուբուզ,  
Ընդե պուբուզ,  
Նեթիցը՝ տուս:  
(արևի շող)

*Բանասաց՝ Մեհրաբ Մարտիրոսյան*  
(ծնվ. 1903թ.), Գնիշիկ

Էն ի՞նչն ա, էն ի՞նչը,  
Քընամ-կամ,  
Մօրըդ փօրին թնայկօվ տամ:  
(խնդ)

Էրգու փեռդէր,  
Մին փիլօն:

*(հաճար)*

Ծանդըր ըղի՝  
Ծագ չունի:

*(հավկիթ)*

*Բանասաց՝ Դմիտրի Զաքարյան  
(ծնվ. 1919թ.), Աղավաճոթ*

Էն ի՞նչն ա՝  
Ուսփի շինած, կ'էղը չմըղած:  
*(ջրադաց)*

Անծիլը անծինին պէռնէս,  
Անթաթարի վըրօվը անց կացնէս:  
*(աղ, ջորի, գէտ)*

Ալաս-փալաս՝  
Անըմը քամ՝ ջիմանաս:  
*(կարպէտ, խոսվածքում՝ փալաս)*

Աքրան-պաքրան,  
Քաք'ոլըղ ծիք քամ:  
*(գորգ գործելը)*

*Բանասաց՝ Լուսիկ Վարդանյան  
(ծնվ. 1911թ.), Գնիշիկ*

Էրգու օթախ ունէմ՝  
Մին սընանի:  
*(քիթ)*

Մին մարաք ունէմ,  
Մէշին լիքը հուրաք ա:  
*(քերան և ապամներ)*

Կարմիր պուլիզ,  
Սեվ սեյրեզ:

(*մասուր*)

Չաթուն խըմի, մօզին ուռռի:

(*ձմեռուկ*)

*Բանասաց՝ Նանո Սրեփանյան*  
(ծնվ. 1916թ.), Ռինդ

Ասըմ էմ՝ յէ՛գ, յէ՛գ՝ կալիս չի,  
Ասըմ էմ՝ կալ՝ մի, կալ՝ մի՝ կալիս ա:

(*շրթունքներ*)

Ծին՝ ծօրըմը,  
Քուռագը փօրըմը:

(*ծիրանի կորիզ*)

Էրգ՛էն աղինք,  
Պօչը՝ ծաղիզ:

(*ճրագ, մոմ*)

*Բանասաց՝ Պայծառ Գևորգյան*  
(ծնվ. 1933թ.), Կեչուր

Մին պարզ ալիր ա,  
Մէջին էլ մին գըռննա՛գ ա ճըխտամ:

(*փշատ*)

Մին մարաք ունէմ  
Մէջին հազար կըլուիս հեյվան կըլտանի,  
Նամա մին խուռ՝ցը խօղ չի փանիլ:

(*մրջնաբույն*)

Սեվ թագի՛  
Տըռնէրը վագի:

(*սաջ*)

*Բանասաց՝ Վանո Մարգարյան*  
(ծնվ. 1916թ.), Գնդեվազ

Տանեմ հաղ անեմ,  
Պերեմ կախ անեմ:  
(*վեզեր*)

Ճօթը ուղեն,  
Ճօթը պահեն:  
(*կուրծք*)

Նեռի վրեն  
Մին խախալ ծու ա փրբաձ:  
(*աստղեր*)

*Բանասաց՝ Բագրատ-Նեստոր  
Սարգսյան (ծնվ. 1923թ.), Խաչիկ*

## **Երգեր, խաղիկներ**

\*

Ծուգուկո՛ւ, նա՛րընջի,  
Ախճիգ ունե՛մ փանը չի,  
Քընացել ա պանջա՛րի.  
Պանջա՛ր չըլավ, խօղ ըլավ,  
Խօղի փագի՛ն ծիղ ըլավ,  
Ծիղը թըռավ կ'երանի՛ն՝  
Կանանչ խօղը պերանի՛ն:

\*

Ազլարիդիգ-բըռնիբիբիգ,  
Տափօվ փըվաձ, կ'եռօվ հանաձ,  
Մանդըր ճըղեր՝ փաշտի կըղեր,  
Էգ'է՛ք, էգ'է՛ք մեր չար փըղին փարեք:

\*

Լայլայ ասե՛մ քունդ փանի,  
Ցավըջօղը ճուրը փանի:  
Լայլա՛յ, բալա՛, լայլա՛յ  
Բալա՛, լայլա՛յ, լայլա՛յ:

Կառը բալիս քունը փանի,  
Ցավըժօռը սէլը փանի:

Նախշուն բալիս քունը փանի,  
Շաղ երգէն ծմբիօսլ ըլի:

\*

Ջանգո՛ւլո՛ւմ կասէմ, կըշարէմ,  
Ջան գո՛ւլո՛ւմ, ջան, ջան,  
Կասէմ, փեփօտ կըշարէմ,  
Ջան ծաղիգ, ջան, ջան:

Ներըս էգալ ծիյավօր  
Մեր փունը չառդախավօր:

Ախալեր ունէմ ավջի ա,  
Մէշկը պարագ դամշի ա:

Ախալէր, ախալէր, ջան ախալեր,  
Շաքար մաղէմ, կէր, ախալէր:

Իմ ծաղիգըս քաղած ա,  
Տէփոի փագին պահած ա:

Ծախկիս մէջումը լիս կա,  
Դո՛ւշմանի աշկը փուս կա:

\*

Արագը բուգ ա փըռնէլ,  
Յերի՛, յերի՛, յանդըմ, օյ-օյ,  
Քա՛քո՛ւլըդ թօզ ա փըռնէլ,  
Շէգօ ջան, յանդըմ, օյ-օյ:

Էն սարի հովին մէռնէմ,  
Իմ յարիս բօյին մէռնէմ:



Ծառան փափին կար կանեն,  
Կաքավներին քար կանեն:

Ջորաբ կանեն ճաղերով,  
Քեզ կըկաբեն հաղերով:

Վօխճարը փռվիմ դուզը,  
Ճօգ՛ել էմ դարագ՛օզը:

\*

Ագնի գ՛օլըմը լըղացամ,  
Մուղնօ շնուշեքը կօղացամ,  
Օխպը փարվա հիվանդ իմ,  
Յարիս փեսամ, լավացամ:

\*

Էրգ՛են կօմը սալել էմ,  
Քոնուն դայը լաննել էմ,  
Օխպը փարի ման կըգամ,  
Մըռդով սիրածիս կառնեն:

\*

Կաղնել էս ախա-բախա,  
Լնջնգիդ փուղը կախ ա,  
Սել փրդա, սիպրնգ ախճիգ՝  
Փըռնել էն ուրնր յախա:

\*

Չո՛ւ, չո՛ւ, չըվննջի,  
Իմ ախպեր քընա Գննջի,  
Գննջն խանի փրռանը  
Կանանջ կաբեն կրռանը:

\*

Բախճա ունեն ծառներով,  
Մեչին լիքը կառներով,

Կառնէրը մաղաղ կանեմ  
Ազիզ յարիս ծեռներով:

\*

Այ փրդա, ո՛ր ես, ո՛ր ես,  
Յեւ ծարավ եմ, փու ճուր ես,  
Տըված ճուրղդ վօր խըմեմ  
Սըռոզով սիրածըդ կըլեմ:

\*

Քնչալը քընաց փանծի,  
Վախով կըլուխը խանծի,  
Էզով մըղավ փեղերը,  
Կաղուն կ'երավ բեղերը:

\*

Յալլի քընանք վանքըմը,  
Նառնների արանքըմը,  
Սգները ծափ փան,  
Նառնները պար կան:

*Բանասացներ՝ Սրբուհի Հովհաննիսյան (ծնվ. 1895թ.),  
Արևհատ Ամիրջանյան (ծնվ. 1912թ.),  
Եղգինե Զաքարյան (ծնվ. 1919թ.), Ազնաբերդ*

## **Հեքիաթներ, գրույցներ**

### ***Իրեք խորատ***

Ըլում ա չըլում, մին թաքավօր ա ըլում: Ըդան եռետուն փարվա մին  
հավաղարիմ նօքնարն ա ըլում:

Մին օր ես թաքավօրը եղ նօքնարին վեննըմ ա, քընըմ իրա  
յերգըմը ման կալի: Ծաղ եմ ման կալի, թե քիչ՝ Ասրօձ գ'իդն, մին  
բազարի պաղի փագի մին հանիվօր մառթ եմ փենըմ նստած՝  
առաջին եղ իրեք պուրուզ ֆօղ: Ասըմ եմ.

– Այ հանիվօր, ես ի՞նչ պուրուզնի եմ ըստել փըրած:

Ասում ա.

– Օվորի ինձ ամմեն պուրուզի հըմար փասսը վօսկի փա՛կասէմ ինչ էն:

Թաքավորը շաղ ա ուզում գիդաննա, թէ ինչ բըղի ասի էս հանիվօրը, վօր փասսը վօսկօ առժանի ըլի: Հանում ա էռետուն վօսկի հըմբարում, փալի հանիվօրին: Հանիվօրն էլ թէ.

– Էս մին պուրուզ ֆօղը էն մառնի կըլխին ըլի, վօր մին մառնի առաջի շաղ կըպանի, էս մինն էլ ըլի էն մառնի կըլխին, վօր իրա ախպօրը բըրախ կըդա, ուրըշին կըփըռնի, էս դրադինն էլ էն մառնի կըլխին ըլի, վօր կընգանը սըռ կըդա:

Հանիվօրի ասաձներին շաղ պանի փեղ չէն փընըմ, յեղ էն փառնըմ, կալի: Նօքնարը ճամփըմը միփըկըն ա անըմ, ասըմ. «Յէս էս թաքավօրին էռետուն փարի ծառայել էմ, իմ ախպօրս հեղ քանի փարի ա խըռօվ էմ, ուրըշի հեղ էմ ախպերթուն անըմ, կընգանս էլ ըսկի փօռնցել չէմ մին թանքուն պան ասէմ: Մառնի հէնց էս հանիվօրի ասաձներին փօռնցի»:

Թաքավօրի փըղին մին նախշուն դօչ ա ըլըմ: Մին օր նօքնարը էղ դօջը դնսփու կօղանըմ ա, փանըմ, իրանց կօմի պուջախըմը կաբըմ: Յէդավ քընըմ ա չօբաններիցը մին հանման ըղէնց դօչ ա առնըմ, պերըմ, կընգանը շանց փալի, ասըմ.

– Կընի՛գ, էս թաքավօրի փըղի դօչն ա, մօռնըմ էմ ուղէնք, համա օջումի ասէս վօչ:

Ասում ա, դօջը մօռնըմ, իրա ախպերացվին էլ կանչըմ, միղէղ ուղըմ էն, խմըմ, քէֆ անըմ:

Էքսը օրը դնսփու մըհանա ա փըռնըմ, կընգանը թագըմ: Կնիզը լնչանթընը փընըմ ա, քընըմ հրէվաններին խաբար փալի, վօր իրա մառնի կօղի, դուղդուրի մինն ա՛ թաքավօրի փըղի դօջը պերել ա, մօռնի, կէրել: Խաբարը հասնըմ ա թաքավօրին, վօր դօջի կօղը, հալ-նաղը, հէնց իրա նօքնարն ա ըլել: Նէռնսօղըմ ա թաքավօրը, դադավօրներին կանչըմ ա, ասըմ.

– Դադէ՛ք էս անասփօծին, վօր իմ մինուճար ըրէխիս դօջը կօղացել ա, լնիլ:

Դադի վախար, էն ինչ նօքնարի հարազաղ ախպերն ա՛ ասըմ ա.

– Մին սըխալ պան ա արել ախպերս, մէխըն ա, խանթի արէք:

Էն ինչ ախպերացուն ա՛ ասըմ ա.

– Կախ արեք եղ բիյաբուռ-անաղըհացին, վոր իրա թաքավորի ազիզ ըրէխիցը կօղըթուն ա արել:

Դադավորնին ասըմ էն՝ հէնց դուզ էլ ասըմ ա, կախ անենք:

Կախ անիլիցն առաջ ջնլլաթը նօքնարին ասըմ ա.

– Դէ վեռ՝ չի խօսկըդ ասա:

Նօքնարը պըրանվըմ ա թաքավորին ասըմ.

– Թաքավորն աբրաձ կ'ենա, էն հնալիվորի խօսկ'երքը մըղիդ ա՛:

Ասըմ ա.

– Մըղիս ա:

Ասըմ ա.

– Այ էն իրեք պուբուզնին հըմի իմ կըլխիս ըլավ: Էն հնալիվորը վոր կար՝ իմասպուն մառնթ էր: Յէս էռեսուն քարի քեզ ծառայել էմ, պու ինձ մին դօջի մար ուզըմ էս սքանես. իմ ախպօրըս յես բըրախս քովիմ, ուրըշին ախպեր փըռնիմ, վոր ըսօրվան օրն իմ փիսըս ուզի. կընգանըս էլ մին հեղ սըռ քըվիմ, ախշարքօվը մին չավ արեց, ինձ էս օրը քըցեց:

Յէղավ ասըմ ա.

– Թաքավորն աբրաձ կ'ենա, դօջը սաղ-սալամաթ մեր կօմըմը կարաձ ա, յես միներաթ էն հնալիվորի ասաձնին իմ ուզըմ փօռնցեմ:

Քընըմ էն իսկագան դօջը կօմիցը հանըմ, պերըմ: Թաքավորը իրա արաձիցը փեշմանըմ ա, նօքնարին հազգար վօսկ'ի ա փեշք'նշ քալի, ճամփու քընըմ:

Ասսանէ իրեք խընձօր ընգավ՝ մինն ասօղին, մինը լըսօղին, մինն էլ խըրաղի դնաղիը գիդանցօղին:

### ***Մին օր նըրի էրես պուս կըզա***

Էրգու մառնթ միդել ֆօռնսի էն քընըմ: Մին խօր ծօրըմ, ախաքի կըլխին նստըմ էն, վոր դինջանան, ըդանցէն մինն էն մինին բիրդան ասըմ ա.

– Յէս քեզ բիղըմա սըքանէմ:

Էս հեղջն էլ ասըմ ա.

– Ի՞նչ էմ արել, ա՛յ մառնթ, վոր ուզըմ էս սըքանէս:

Ասըմ ա.

– Ոչ մին պան էլ արել չես, հէնց ընէնց ուզըմ էմ սըքանէմ, օ՛վ ա գիդալօ, վոր յես քեզ էս խօր ծօրըմը սըքանեցիմ:

Էս էլ Կենըմ ա ճար չըկա, ասըմ ա.

– Դէ լա՛վ, սըբանըմ էս՝ սըբանի, Կու էս գիղըմ՝ քօ խիղջըդ: Նամա լա՛վ գիղանցի, վօր էս սարէրը, էս ծօրէրը, էս քօլէրը մին օր մինին խաբար կըդան, կասէն ֆըլան վախալը ֆըլան մառնթը ըստէդ անմէդ Կէղը մառնթ ա սըբանէլ:

Էդ նամանդ մառնթը ծըճաղըմ ա ըդա ասաճի վըրէն, խանչալը քաշըմ հէնց ըդէլ էլ սըբանըմ, թօղըմ քընըմ:

Անց ա կ'էնըմ մին քսան Կարի: Մին օր էլ սըբանօղը էս անքամ մին ջանիլ Կըղի հէլ ա ֆօռնսի քընըմ: Ֆօռնսիցը յէդ Կառնալիս կալիս էն համան էն ծօրըմը, ախալըրի կըլխին նստըմ էն, դինջանըմ: Բիդդան էդ սըբանօղի միդն ա ընգըմ իրա արաճը, ասըմ ա.

– Մին քըսան Կարի առաչ էս ծօրըմը մին պան էմ արէլ՝ մինին սըբանէլ էմ, համա օջօլ գիղանցէլ չի: Ինքն էլ հալմ ասըմ էր՝ մին օր էս սարէրը, էս ծօրէրը մինին խաբար կըդան: Դէ թօղ խաբար Կան, ա՛յ շան Կդա, բա մընչէլ հըմի խը՝ չի մինին խաբար Կվին: Սարէրին նան ծօրէրին լուգո՛ւ ունէ՛ն, վօր խաբար Կան:

Նամա Կու մի ասիլ, էս հէնց էն սըբանվաճ մառնթի Կդէն ա ըլըմ: Ալըքհալը կըլխի ա ընգըմ, վօր էդ հէնց իրա հօր սըբանօղն ա, վօր կա:

Ասըմ ա.

– Էս սարէր՝նան ծօրէրը, նամանդ, հէնց քօ պէրանօվըդ խաբար Կըվին, ում վօր Կու սըբանէլ էս, յէս ընդա Կըղէն էմ:

Ասըմ ա հու համան Կէղը ըդան Կէղբատէլ անըմ սբանըմ:

Ըստէլ էն ասէլ՝ անխիղճ պան անօղի արարմունքը, վօնց էլ ըլի, մին օր ճըրի էրէս Կուս կըգա:

### ***Բնչալի նաղըրը***

Ըլըմ ա չըլըմ, մին մառնթըկընիզ ա ըլըմ: Մառնթը շաղ հէղջըկըր-րագ ա ըլըմ, քընըմ ա վարըցանք անըմ, պէրըմ Կունը լըցնըմ, համա կընիգը ամմէն Ասօ օր մին կըդօր սէվ բօքուն ա Կընըմ առաչին, դարգըմ առղը: Տու մի ասիլ էս կընգա աշկը Կուսն ա ըլըմ՝ սիբէգան ա պահըմ: Ալիը մաղիլիս լավը պահըմ ա, ճօգ սիբէգանի մըհար ա հաց թըխըմ, փիսօվն էլ՝ մառնթի մըհար:

Մին օր էլ մառնթն ասըմ ա.

– Այ կընիգ, բա յեւ ըստանաւ ախշադըմ եմ, քանի որ քաղաքը, լավ ալիք եմ աղըմ, պէտքըմ քունը, եւ խի՞ եւ ամնօր ինձ սէվ հացօվ ճամփու քունըմ:

Կնիգն էլ թէ.

– Այ քնուկեմ քօ շնչ կըլուխդ, հա՛, խի գիտըմ չէ՛ս, վօր սաղ քօ վօչաքօվ քըվօրդ արամունքն ա, վօր մէնք եւ օրին էնք. քամի ա հանըմ, կալիս ա մէր լավ ալիքը քանըմ, մընըմ ա քաղի քիսըմիսը: Ըդա հըմար էլ հացը ըստենց սէվ ա ըլըմ:

Նեղ մառնիքն էլ անքանի հաւադըմ ա: Էքսը օրը մին յեքն թօխաջ ա քունըմ ուսին, քունըմ ա, վօր քըվօրը թագի: Քիրն էլ հըրեվան կ'էղըմն ա աքիլիս ըլըմ: Ախալերը հասնըմ ա, քէնըմ ա քիրը պագըմն ա. քուր ա քաշըմ, վօր մինը քա: Քիրն ասըմ ա.

– Այ ախալեր, էդ ի՞նչ խաբար ա:

Ախալերը թէ.

– Բա քու ի՞նչ քիր եւ, վօր քամի եւ հանըմ, կալիս ա սաղ մէր լավ ալիքը քանըմ:

Քիրը անքանի կըլիսի ա ընգըմ, վօր ախալերանգան արած պաներն ա: Նամա գիտըմ չի ինչ ջուղաք քա իրա քաղըր ախալօրը, ասըմ ա.

– Այ ախալեր, այ ջանըմ, հեռու քէղան եւ էգէլ, հանա մին յեգ մէջիս, հացըմաց քունեմ, յեղավ ինչ կանէ՛ն կանէս:

Ախալօրը քանըմ ա մէջիս, նըստացնըմ, թօրէնը վառըմ ա, թավէն վէնըմ, քունըմ կըղդանը՝ հեռի կըլիսին նստըմ, վօր ծվածէլ անի:

Ախալերն ասըմ ա.

– Այ քիր, ըստիյան ըղէ վօ՛նց կարաս ծըվածէլ անէս:

Քիրն ասըմ ա.

– Բա վօր ըղանը կըլիսի եւ ընգըմ, էդ վօ՛նց չէս կըլիսի ընգըմ, վօր յեւ կ'էղէց կ'էլ կարալ չէմ քամի ըղըգէ՛ն կա ծէր լավ ալիքը ճօգի, քանի:

Ըդէլ ախալերը կըլիսի ա ընգըմ, վօր կընգան ասածը խէլքի մօղիգ պան չի: Քըվօր հէլ բանընըմ ա, էն էլ պէտքըմ ա ծըվածէլը թօրնի վըրէն անըմ, ախալօրն ուղացնըմ:

Քըվօրն էլ մին քնչալ, համա շաղ յաման քըղէն ա ըլըմ. մօր նան քէո ասածին սաղ անգաջ ա քըրած ըլըմ: Էս էլ ա կըլիսի ընգըմ, վօր էլ քըղըղաղը քէոնանգան արածն ա: Վօր հաց էն ուղըմ,

պրոծորնրմ, ք'եռին հենց ուզրմ ա ընգի ճամփա, Ք'նչալը կրբնրմ ա, թէ.

– Յեւ էլ էմ կալի: Քօ հեղող վարդցանք կանեմ, ք'եզ ք'ծմնագ կանեմ:

Ք'եռին էլ տենրմ ա, վօր շաղ ա ուզրմ, հեղը փանրմ ա:

Էքսը օրվա ըռավօղը Ք'նչալը փեղիցը վեր ա կ'ենրմ, ք'եռօն ասրմ.

– Տու քընա առողը, յեզները լրծի, յեւ հեսա քօ քամագիցող կալիս էմ:

Ք'եռօն ճամփու ա փրնրմ, ինքը մրղրմ ա կարասը, փափ կ'ենրմ: Մին կ'ես սրեաթ անշկրմ ա, փենրմ ա, հեսէ, փեռդերի փրդեն՝ ք'եռննգան սիրեգանը, էգալ:

Ք'եռնագիինն ասրմ ա.

– Ըսօր ք'եզ հրմար ճրղօվ փրլալ էմ պերիօ, դուրբանըղ ըլեմ, վօր հանղրմը ուղէս: Վօր դօլին էս վար անիօ:

Էն էլ թէ.

– Մեննագ մեր յեզն ա չալ, վօրդէ վօր չալ էզը փենաս՝ ընդէլ էլ պեր:

Ննլն ըղանց խօսկ'երնին պերաններին ա ըլրմ՝ Ք'նչալը էն սրեաթը վագգ ա փալի, հասնրմ ք'եռօն, թէ.

– Ք'եռի՛ ջան, ըշփեղան ըլրմ ա մին քանի առշին սիպարնագ կրդօր ճարի:

Ք'եռին ասրմ ա.

– Այ ջանրմ, կրդօրն ի՛նչ էս անրմ:

Ք'նչալը թէ.

– Քօ կօռծրղ չի, ք'եռի՛, ք'եզ ասրմ էմ ճարի:

Վեռ՛ջը ք'եռօ ճարը կրդրվրմ ա, քընրմ ա մըկ'ն կրղավի կրդօր ա ճարըմ, պերըմ հանղը: Ք'նչալը էղ կրդօրը վեննրմ ա փթաթըմ իրանց սեվ յեզանը՝ չալացնրմ: Յեղալ ասրմ ա.

– Ք'եռի՛, բա գիղրմ է՛ս, վօր ըսօր կ'եսօրին ճրղօվ փրլալ էնք ուղիօ:

Ք'եռին ասրմ ա.

– Դէ կօրի՛, Ք'նչալ՝ մեռաձ, ընենց ք'եռնագին չունէս, վօր մեզ հրմար փրլալ պերի, էն էլ հնլն՝ ճրղօվ:

Ք'նչալն ասրմ ա.

– Դէ լսվ, մընչեվ կ'եսօր աշկի՛:

Կ'եսօրին մին էլ էն փէնըմ, ըհը՛, ք'եռնագ'ինը խօնջէն ուսին էգալ: Ըղանք նստըմ էն փլալը մին լալ ուղըմ, համա ք'եռննգան սրռդիցը արին ա քընըմ, հա փեսըփէն ա մըղիգ անըմ, վեռ'ջը վննրնվոտոյ ա անըմ, վօր թըլի քամագ'ին մին ուրիշ չալ յեգնատըր էլ ա վար անըմ: Ասըմ ա.

– Էն օ՛վ ա էն ներք'ել վար անըմ:

Ք'նջնլը թէ.

– Տեռդերի փըղէն ա:

Ք'եռնագ'ինը վեր ա թըռնըմ.

– Ատք կա՛ մըկ'ն էլ ինքն ուղի, մէխկըն ա, սօվաճ կըլի:

Ք'նջնլը վեր ա կ'էնըմ, քընըմ՝ յանի կանջի, համա էնինջ հասնըմ ա փեռդերի փըղի առդին, ասըմ.

– Տեռդերի փըղա՛, հեսա ք'եռիս կալ'ղի ք'եգ թագ'ի, թէ ճար ունես՝ ճարըդ փես:

Յեղալ յեղ ա փառնըմ կալի՝ ք'եռօն ասըմ.

– Ընդէ մին քանի կըղաղաճ շըներ կ'ին, կարացիմ վօջ քընամ:

Ք'եռին վեր ա կ'էնըմ, մին մենճ փեղ վննըմ, քընըմ: Նէնց վօր փեռդերի փըղէն հեռվանց փէնըմ ա ք'եռին փեղը ծեռնին դըբա իրա դօլն ա կալի, սրռդաճաք ըլաճ փախնըմ ա: Նեղջ ք'եռին քամագ'իցը կանջըմ ա.

– Տեռդերի փղա, կաղնի՛, յէ քընանք փլա՛վ ուղէնք:

Նամա ըշփէ՛ փախնըմ ա, քընըմ:

Էքսը օրն էլ ք'եռնագ'ին՝նան սիրեգանը մասլըհաթ էն անըմ, վօր սիրեգանը վարատըղը քնալիս ճամփըմը մըհասուր շաղ փա, համա Ք'նջնլը էս անքամ էլ ա կարասիցը անգաջ փընըմ: Քընըմ ա մընջել վ'եռննգան կալը մըհասըրնին վաքըմ ա, լըցնըմ իրանց ճամփէն: Վեռ'ջը, էլը ք'եռննգան պէրաճ խօռնգնին իրանք՝ էն ուղըմ:

Ըղէնց մին քանի վախափց յեղը ք'եռնագ'ինը կըլխի ա ընգըմ, վօր Ք'նջնլի մաղը խառն ա էղ կօռձէրըմը, ըղա հըմար էլ իրանց պանը ծախ ա քընըմ: Մին օր էլ Ք'նջնլը կարասըմը լըսըմ ա, վօր ք'եռնագ'ինը սիրեգանի հեղ մասլըհաթ ա անըմ. ասըմ ա, վօր բիղի մին պան անէնք՝ Ք'նջնլի՛նան ք'եռօ կըլուխը խաշէնք, թէ չէ՝ ըղանք հնլն շաղ օյիննի կըհանէն մեր կըլուխը:

Էքսը ըռավօղը՝ ընքննշփան, Ք'նջնլը փըղօզանըմ ա, լէըմ ծառան կաղարին նստըմ: Ք'եռնագ'ինը փուս ա կալի պազը, փէնըմ ա ծառան վըրէն մինը փիփըփըղօզ նստաճ ա Ասըմ ա.



– Ադա՛, եղ օ՛վ ես:

Քանչևս թե՛.

– Պրլլօրավօր խաչն էն:

Քեռնագինը շաղ ա ուրխանըմ, մըդկըմն ասըմ ա՛ ես խաչը իրա վօղօվն է-գ՛ել ա մէր քունը, ասէմ բնլքի մէր կօռծին քօմմագ անի: Ասըմ ա.

– Այ Պրլլօրավօր խաչ, մեռնէմ քօ վօղիդ քազին, Քանչևսի նան իրա քեռօ դիվանը կանէ՛ս:

Ասըմ ա.

– Կանէ՛մ, կանէ՛մ: Տու էլ կարմիր յեզը մադաղ կանէ՛ս:

Քեռնագինն էլ ալքնլն ասըմ ա.

– Ճուխսր աշկիս վըրէն, կանէ՛մ, բա անիլ չէ՛մ:

Ըրոնգոնը մառթը հէնց կալիս ա քունը, քեռնագինը կըբնըմ ա յախիցը, թէ կարմիր յեզը մադաղ էմ ասէլ, շափաթօ օրը բիդի անէնք: Նեղջ մառթն ասըմ ա.

– Այ կընիգ, կօնյա մին ուրիշ պան իր մադաղ ասէլ, մեզ էլ քանի՛ յեզն ունէնք, վօր մինն էլ մադաղ անէնք:

Կընիգը անըսկամըթուն ա անըմ, էրգու վօղը քընըմ մին թայ քօշըմ՝ թե՛.

– Բիդի անէնք, վօր անէնք: Տու ի՞նչ աննամուս մառթ ես, վօր կընիգըղ ուզանա մադաղ անի՛ թօղաս վօջ:

Ըդէ Քանչևսը քեռօն կանչըմ ա դըրաղ, ասըմ.

– Քեռի՛, ինչ ասըմ էմ, լավ լըսի, համ էլ ասաճնիս արա, թէ ուզըմ չէս, վօր մէր էրգըսի վեռչն էլ կա: Ըռավօղը շափաթօ ա, կարմիր յեզը կըմօռթէնք, յեղավ քու կասէմ վա՛յ, մեռան հու թէք կընգէս, աշկէրըղ կըխըփէս, յես էլ ըդէնց կանէմ: Յեղավ էլ, յեփ վօր յես գնառթնէմ, քու էլ կըգնառթնէս:

Քեռին ասըմ ա՛ լավ:

Ըռավօղը պերըմ էն յեզը մօռթըմ: Մօռթըմ էն, թէ չէ, քեռին հարայը քըցըմ ա հու թէք ընգըմ՝ յանի մեռէլ ա: Քամագիցն էլ Քանչևսն ա մեզնլըմ: Քեռնագինը թեվ առաճ վազզ ա քալի քեռդէրէնց քունը, սիրեգանին կանչըմ.

– Բա ասիլ չէս Պրլլօրավօր խաչն իրա ասաճ դիվանն արեց, մեռնէմ ընդա գօրըթունին, սաղ մեռօղէլ էն, քունը մընացել ա ինձ նան քեզ, յէգ:

Կալիս էն երգեսօվ, ջան ասիլին, ջան լըսիլէն, ուղըմ, խմըմ, ք'էֆ անըմ: Յեղավ ք'եռնագիւնը սիրեգանին քընացնըմ ա, յեղը փընըմ կրագի վրէն դաղ ըլի, ինքը քընըմ ա ծու պերի, վօր ծըվածեղ անի: Ըդէ Ք'անջալը էմսալ վեր ա կ'ենըմ, թաւի դաղ ըլած յեղը փանըմ ա լըցնըմ փեռդերի փըղի պերանը, կալի էլը իրա փեղը թէք ընգըմ: Տեռդերի փըղէն փեղբափեղ ա ըլըմ, մեռնըմ: Ք'եռնագիւնը պանից բէխսքսնը կալիս ա իրա կօռնին: Մին էլ բիրդան Ք'անջալը վեր ա կ'ենըմ, նըսփըմ: Շաղ անց չըկացած՝ ք'եռին էլ ա «սաղանըմ»: Ք'եռնագիւնը մընըմ ա շիվար: Ք'եռին ասըմ ա.

– Այ կընիգ, բա էդ թէք ընգածն օ՛վ ա:

Կնիգը թէ.

– Օ՛վ կա, փեռդերի փղէն ա, ըղիյան անց էր կ'ենըմ, ասիմ յէ մին կըդօր մաղաղ կ'եր:

Անց ա կ'ենըմ մին սըհաթ, երգու սըհաթ, հինգ սըհաթ, փենըմ էն էդ մառթըր քընիցը գամթընըմ չի: Կըլիսի էն ընգըմ, վօր մեռել ա: Ըդէ Ք'անջալն ասըմ ա.

– Ք'եռնագիւն, գիղըմ էնք, վօր էս պանը քօ արածըդ կըլի, համա յեգ ընէնց անէնք, վօր օջօվ գիղան վօջ:

Ըրոնգիւնը մեռելը վէննըմ էն փանըմ, պընցացնըմ փեռդերէնց փան կըդուրը, հեռթի կըշփին պահըմ էն, դասսփու ասըմ վա՛յ, ընգա՛ն, ընգա՛ն հու քցըմ: Տընագանն էլ հէնց էն գիղըմ ընօր ընգավ-մեռալ, լանցըշիվաննին փընըմ էն:

Էքըր օրը Ք'անջալը ք'եռնագանն ասըմ ա.

– Վէկաց փու էլ քընա մեռնափուն, թէ չէ կըլիսի կընգէն, վօր փու էս սըբանէլ: Քամագըդ մին քանի պըջեղ սըխափօր ճըխսի, վօր մըռմըռացնի-լանցացնի, կաշվից էլ մին թումբան կարի, հաքի, վօր ծնգընէրիդ փալիս՝ լավ շըրըխկա:

Ք'եռնագիւնի սիռն էլ դէ լըցված ա ըլըմ. վեր ա կ'ենըմ, Ք'անջալի ասածնին փեղըփեղին անըմ, քընըմ մեռնափուն: Ք'անջալըս էլ մըկնն աշկըմ ա, կընգա շօրեր հաքընըմ, քամագիցըր քընըմ: Նէնց ընդէլ ա հասնըմ, վօր փեռդերի կընիգ՝նան մերը ճըղըռդալէն ասըմ էն.

– Վա՛յ, բա գիղանք վօ՛ջ էդ վօ՛նց ըլալ, էդ օ՛վ արեց...

Ք'անջալը փըռան կըշփիցը հաղօվ հասկացնըմ ա.

– Վերէ՛ք, վերէ՛ք, ա՛յ կընանիք,

Վերէ՛ք, փեսէ՛ք օ՛վ ա արել՝

Պարգաթումբան, սըխափօրվօռիգ

Կընի՛զն ա արել...

Կընանիքը լացերնին թողըմ էն, վեր կ'ենըմ, սաղի շօրըշիո՞թը պընցացըմ՝ ման կալի, մեղավօրին քըթըմ: Թափըմ էն կըլխին, ընդամ փալի, վօր փեղբափեղ ա ըլմ:

Ըդենցըթունօվ Ք'աճալը իրա ք'եռօն անըսկամ ք'եռանգանիցը ազադըմ ա: Ք'եռին էլ քընըմ ա մին նամուսօվ կընիգ առնըմ, պերըմ փընըմ փանը:

Ասսանէ իրէք խընծօր ընգավ՝ մինն ասօղին, մինը լըսօղներին, մինն էլ Ք'աճալի պէս թասիթօվ փըղէրթօնցը:

*Բանասաց՝ Թադևոս Խաչիքաբյան (ծնվ. 1898թ.), Ազնաբերդ*

### **Փրսփանբըլօջի նադըլը**

Ըլըմ ա չըլըմ, մին սէվ, կ'էշ, թամբալ փըսփանբըլօջ ա ըլըմ: Մին օր էս փըսփանբըլօջը ըռավօղը վեր ա կ'ենըմ, գուքվըմ-գըռ՞թալըմ, աճաճ-բաճաճ ըլըմ, ընգըմ ճամփա:

Քընըմ ա, քընըմ, վարափեղըմը մին աժդահա յէզն ա թո՛ւշ ըլըմ: Էս յէզն ասըմ ա.

– Էդ ո՞ր էս քընըմ, փըսփանբըլօջ բաջի:

Ասըմ ա.

– Ո՞ր կա, քընըմ էմ մառ՞թի:

– Նա՛, դէ վօր ըդէնց ա, հէնց յէգ յէս առնէմ էլի, ինձանից լավի՞ն էս ճարիլօ:

Ասըմ ա.

– Վօր կամ ք'էգ՝ ինձ ինչ կանէ՞ս:

Ասըմ ա.

– Կըփընէմ պօզերիս կըլխին՝ ման կաճէմ: Նամա վօր ինձ լըսէս վօջ՝ հեռօղացնէս, կըջըրփէմ կ'եննօվը, կըսըբանէմ:

Վախսըթունիցը բըղօջի լուգոն պերանըմը չօրանըմ ա: Ասըմ ա.

– Վօր ըդէնց ա, յէս ք'էգ պէս վերունօն էգօղը չէմ, ուրիշ մառ՞թի կըքընամ:

Ասըմ ա հու իրա ճամփէն էը քընըմ:

Քընըմ ա, քընըմ, մին պըջիր մուգն ա թո՛ւշ ըլըմ: Էս մուգը թէ.

Էդ ո՞ր էս քընըմ, փըսփանբըլօջ բաջի:

Ասըմ ա.

– Ո՞ր բիդի քընամ քընըմ էմ մառ՞թի:

Ասում ա.

– Դե վոր քընըմ էս մառնի, հենց յեզ յես քեզ առնէմ, էլի:

Ասում ա.

– Ինձ վօնց կըպահէ՛ս, վոր կամ քեզ:

Ասում ա.

– Սաղ օրը թօղալ չեմ վօչ մին կօռձ անէս, կըտընէմ պօջիս վըրէն, ման կաձէմ:

Բըղօջը շաղ ա ուրիսանըմ, ասում ա՛ էս հենց իմ պանըս ա՛ սաղ օրը կուդէմ, կըխըմէմ, ման կըգամ: Ասում ա.

– Դե վոր ըդէնց ա՛ ըռագի էմ, յէ փըսագվէնք:

Ըդանք ըդէնց փսագվըմ էն, սաղ օրը մուգը կընգանը տընըմ ա պօջի վըրէն, ման աձըմ, մուփն ընգիլը բնշտանն տանըմ ա իրա պունը:

Ըռավօղը մուգը բըղօջին ասում ա.

– Կընի՛գ, ինձ ըսօր շաղ կօռձ ունէմ. թաքավօրի տըղի հըռն-սանիքն ա, քնալ՝դէմ հըռնսանքատուն, վօր ընդիյան լավ պանէր կօղանամ պէրէմ ուդէնք, քե՛ֆ անէնք: Նէնց մէր պընի կըշտին մին մէնձ փօս կա՛ դնվա՛մ ա անց կացէլ, իրա ըռնողն ա: Տանիցը տուս չըկաս, թէ չէ՛ կընգէ՛ս փօսը՝ տունըտըս բարբաղ կանէս:

Ասում ա՛ լավ:

Նամա հենց մուգը վօղը տանիցը քաշում ա, էս բըղօջի ջանը քօս ա ընգըմ, տուս ա կալի, վօր տէնա՛ էդ ի՛նչ փօս ա: Տուս ա կալի, թէ չէ՛ քնվի վըրէն ընգըմ ա մէշը: Դէ, էս դօննուշ լանցըշիվանը տընըմ ա, հարայը քըցըմ:

Էդ վախատը ըդիյան մին ծիյավօր ա անց կէնըմ: Բըղօջը լանց ըլիլէն ասում ա.

– Այ ծիյավօր ախալէր, դուրբանըդ ըլէմ, քընա թաքավօրի պալաղը, Մուգը աղին ասա՛ սըմբուլ մագավօր, վառնթ քօշավօր քօ դունյագ՛ծգանլըդ ընգէլ ա փօսը, հասի՛:

Էս ծիյավօրն էլ ըստէ ա մդիգ անըմ, ընդէ ա մդիգ անըմ, անշկին պան չի ըրէվըմ: Ասում ա՛ լավ, ինչ վօրի ա, վօր ասում ա՛ քընամ ասէմ:

Թաքավօրի պալաղըմը մուգը վօր խաբարը լըսըմ ա՛ ալընալը կըլիսի ա ընգըմ, վօր էդ իրա կընիգը կըլի: Վէր ա թըռնըմ, կօղացաձ պանէրը լըցնըմ տօբրագը հու վագգ տալի դըբա իրա պընի դօլը: Ասում ա.

– Բա խը՞ չի լըսիր ինձ, այ՛ վօչպարօվ, վօր էդ օրն ընգար: Դէ հըմի՛ յես պօջըս կախ եմ անըմ, Կու՛ փըռնի, Կուս՛ յեգ:

Էս բըղօջն էլ թէ.

– Քընա՛, քընա՛ յես ք՛էգ հեղ խըռօվ էմ:

Էս հեղջ մուգը ինչ անըմ ա, անըմ չի՛ ըստան կարըմ չի բարըշացնի, փօսիցը հանի:

Վեռ՞ջը Կենըմ ա մութն ընգըմ ա՛սարմ ա.

– Դէ վօր ըդէնց թունդ խըռօվէլ էս, ջըհաննանը խըռօվէս, հէնց ըդէնց էլ մընա:

Ասըմ ա հու ֆօղը, քարը, զըբիլը չանգըմ ա լըցըմ փօսը, փըստանբըլօջին ծասկըմ-ֆօրըմ:

Խըռօվգանի վեռ՞չն էլ ըդէնց կըլի:

*Բանասաց՝ Վարդուշ Խաչիքարյան (ծնվ. 1916թ.), Օծուհի-  
Ազնաբէրդ*

## **Փոխադրություններ**

*Ավանէս Թումանյան*

**Մուրասանը**

**(Օծուհի-Հորսի խոսվածքով)**

Կըլի, չըլի՛ մի թաքավօր: Էս թաքավօրը իրա յերգըմը խանքար ա անըմ. «Օվ ընէնց սուր ասի, վօր յես ասեմ՝ սուր ա, իմ թաքավօրըթունիս կ'էսը կըտամ ընդան»:

Մի չօբան ա կալի: Ասըմ ա.

– Թաքավօրն աբրած կ'էնա, իմ հօրըս մի դանգանակ ունէր, վօր ըստիյան մէգըմ էր, յերգընքըմը աստըղնին խառնըմ էր:

– Կըպատահի,– ջուղաբ ա Կալի թաքավօրը,– Իմ պապիս էլ մի դալան ունէր. մի յանը պէրանին էր Կընըմ, էն մի յանն էլ մէկնըմ էր, արէվիցը վառըմ:

Մուրասանը կըլօխը քօրիլէն Կուս ա կալի:

Մի դանգի ա կալի: Ասըմ ա.

- Թաքավոր ջան, յես շուր բրդի կ'իմ, յեղացամ: Էրեզի շար անձրեվ էկավ, կ'եծակնին փրվին, Էրզնիքը ճրդվեց, քընացել իմ կըրկափեմ:

- Նա, լավ էս արել,- ասըմ ա թաքավորը,- համա լավ չիր կըրկափել. էս ըռավօր մըքն անձրեվ թափեց:

Էս էլ ա քընըմ:

Մէջիսօլ ա մըննըմ մին ք'ասըք կ'եղացի, թո՛ւրեն դօլթըղափակ'ին:

- Տու ի՛նչ էս ուզըմ, ա՛յ մառ'թ,- հառ'ցընըմ ա թաքավորը:

- Ինձ մի թո՛ւրն վօսկ'ի էս պառ'ք, էկ'ել էմ փանէմ:

- Մի թո՛ւրն վօսկ'ի,- զարմանըմ ա թաքավորը:- Մուր էս ասըմ, յես ք'եզ վօսկ'ի չեմ պառ'ք:

- Թէ վօր սուր էմ ասըմ, թաքավորըթունիդ կ'էսը փուր:

- Չէ, չէ, դո՛ւզ էս ասըմ,- խօսկը փօխըմ ա թաքավորը:

- Դո՛ւզ էմ ասըմ մի թո՛ւրն վօսկ'ին փուր:

### **Շուն'նան Կադուն**

**(Ազնաբերդի խոսվածքով)**

#### **I**

Մին վախար Կադուն լավ դանդի էր,

Շան կըլխին էլ քըթագ չըկար,

Նամա, գ'իդըմ չեմ ըշփեղան-ըշփել

Չանթել էր մին կառան մօռ'թի:

Մին օր եգավ, ծըմեովա դօլը,

Մօռ'թին պերեց Կադվի կուշփը:

- Պարաջօղում, ո՛ւսփա Փըշօ,

Կուլխըս մըռ'սեց, ի սեր Ասսօն,

Աճ էս մօռ'թին հու ինձ հըմար

Մին քըթագ կարի կըլխիս հարմար:

Նախիդ հըմար արխայի՛ն կաց,

Նամա-համա յեղացնէս վօջ:

- Աճկ'իս վրեն, Զըչօ ք'եռի,

Մին քըթագ ա, հօ մին քուրք չի,

Զօ էդ նազիզ խանթրիդ հըմար

Ուրփաթ օրը համեցի փար:

Փողի հրմար ավելո՞ւթ ա,  
Մեր մէջին խօսալն էլ ամօթ ա.  
Ի՞նչ մէնձ պան ա, այ՛ հեր օխնաձ,  
Սահ-բիրադի՛ մին քըթագի հախ:

Ուրփաթ օրը Քըջօ ք'եռին՝  
Ուսրիցն առաջ ք'նչնլ կուջին  
Տըմբացնիլէն՝ ծանդր-ծանդր  
Ուսրա Կադվի շէմքըմը կաղնէց.  
– Ուսրէն ո՞ւր ա... քըթագս ո՞ւր ա...  
– Մըկ'ն սաբրի – հեսա կըրեվա:

## II

Ուսրէն էգալ քուրքը հաքին,  
Շանը փեսալ բեղի փագին,  
Իրան-իրան մին մըմ'մըմ'թաց  
Նու մուշփաբօ վրէն կօռռաց.  
– Յուռը փարա՛վ... այ՛ փընաշէն,  
Մ'նջալ փուր մին նա՛ֆաւ քաշէմ.  
Նէշփ էս գիդը՛մ, հալա՛ն էրեգ  
Աշ էմ փըրեղ՝ էքուձ կարէմ:  
– Դէ՛ հեր օխնաձ, ըդէ՛ց ասա,  
Էլ հեմ'սօղիլըդ ինչացո՞ւ ա,  
Փօղ էմ փըվել, վախարին կարի,  
Յա՛ն չէ՛ ասա՛ էքուձ կըլի:  
Նամ ասըմ էս, համ կարըմ չէս,  
Նամ էլ հալա՛ն վըրէս կօռռըմ,  
Նա՛մ, հա՛մ, հա՛մ, հա՛մ,  
Ախալէր, քանի՞ հեղ քընամ-կամ...  
Ասեց Քըջօն հու նեղացաձ  
Թօղաց-քընաց՝ կըլուխը պաց:

## III

Մին էլ էգալ, էը կար վօջ.  
Էս մին անքամ դրբան իրա՛ր.  
Էլ բիյարուտ, անփաշ խօսկ'երք,

Էլ թանգան-հին, էլ հերնումէր,  
 Էլ կօղ Փըշօ՛, էլ քանչալ Շո՛ւն...  
 Պանը հասաւ դիվանբաշօն:  
 Շունը ընչուր քընաց, էգաւ,  
 Ուստա Կադուն կօղուրն ընգաւ.  
 Կըլուխն առաւ հու մին քըշէր  
 Կօրաւ-քընաց. էն կօռնչիւն էր...

#### IV

Էն օրվանից ընչուր հըմի  
 Շան մըղիցը էս թեկ չի.  
 Տան մըղկըմը պահըմ ա,  
 Վօրդէ Կադվին թուշ ա ըլըմ,  
 Վէր ա թըմնըմ, վըրա կալի,  
 Իրա մօռնիս յէդ ա ուզըմ.  
 Սէվըմըթին Կադուն բիրդան  
 Յէդ ա տառնըմ հու հեռսօդաձ  
 Փըշտացնըմ ա. յանի՛ էրէգ  
 Աշ էմ քըրէլ՝ էքուձ կարէմ:

***Մին կաթ մէղրոր***  
***(Ազնաբէրդի խոսվածքով)***  
***(հատված)***

Մին կ'էղացի իրանց կ'էղըմը  
 Դուքան էր պացել, պան էր ծախըմ:  
 Օրվա մին օր հըրէվան կ'էղէն,  
 Թօխաջն ուսին, շունը յեննէն  
 Սէջիսօլ ա մըննըմ մին զըռ չօբան.  
 – Պար'աչօղում, այ դուքանչի,  
     Մէղրը ջունէ՛ս,  
     Մըկն տաս մէգ:  
 – Ունէմ, ունէմ, չօբան ախալէր.  
 Ամանըդ ու՛ր ա, ամանըդ պէր,  
 Վօրդիյանը վօր տու ուզէս,  
 Էս սըհաթը քաշէմ տամ քէգ:



Ըստենց խաթրով, ըստենց խօշով,  
 Մեղրից անօշ լավ խօսկ'երթով  
 Մեղըր են քաշում. մին էլ բիրդան  
 Մին կաթ մեղըր ընգրմ ա փագը:  
 – Դը՛գգ, – ընդօլեն մին ճանջ կալի,  
 Ըդա վրդեն վեր ա կալի,  
 Ճանջի վրդեն թանքուն-թանքուն  
 Էս դո՛ւքանի փրդօնչ կադուն  
     Թըռնըմ ա հու  
     Թանթով փալի...  
 Նամա կադվի թըռնիլի հեդ  
 Չօբանի շունը ալբըհնալը  
     Նափ ա անըմ,  
     Վեր ա կ'ենըմ,  
     Նեղջ փըշօյին  
     Տընըմ փագ'ին,  
     Ծեռաց հեխարմ  
     Նու շըբըռողըմ:

– Նեխտե՛ց, հեխտե՛ց, վա՛յ, իմ կադուս,  
 Այ սափկ'ես փու, շան վօռ'թօ շուն:  
 Նեռ'սողըմ ա էս դո՛ւքանչին  
 Նու ծեռն ընգած մօղիկ պանը  
 Տուր՝ թե կըդաս շան ճագադին,  
 Թեք ա քըցըմ կադվի կօխկ'ին:

– Վա՛յ, ծեգ դուրբա՛ն, ապլան շունըս,  
 Իմ աբրուսկը՛ս, փեղը՛ս, փունը՛ս...  
 Տունըդ քանդվի, ա՛յ դո՛ւքանչի,  
 Ղամմագ, հեյվան, ֆըլան-բեհման,  
 Վօ՛նց թե շանըս փու սափկացնե՛ս,  
 Սափկացնիլը դե հըմի փես...  
 Կօռկօռըմ ա մեր աժդահեն,  
 Ծեռնի յեք'ն կօմբալ փեղը  
 Յեդ ա փանըմ, վըրա պերըմ,  
 Էս դո՛ւքանչօն շեմք'ին փըռըմ:

– Սըբանեցի՛ն... հարա՛յ, հասէ՛ք...  
Մահիլից մահիւմ, քանիցը քուն  
Ծէն էն քալի մինը մինին.  
– Նարա՛յ, հասէ՛ք... Սըբանեցի՛ն...

Վերի մահիլից, ներքի մահիլից,  
Ճամփի վրից, կօռձի քելից,  
    Լաց-շիվանօվ,  
    Նարայ քալօվ–  
    Էլ հերնըմէր,  
    Քիտ՛նան ախալէր,  
    Կընիգ, ըրէխէք,  
    Նընգ՛եր քըղէրք,  
    Ջանքաչ, անէր,  
    Քավօր, պէլի,  
    Քէռի, փէսա...

Ինչ գիղաննա՛ւ օվըս օվ ա,  
Կալիս էն հու հէնց հա կալի,  
Օվ կալիս ա՛լ քուր թէ կըդաս.  
– Ա՛յ չօլի առ՛չ, ա՛յ վերունի,  
Ախր ըստէնց էլ պա՛ն կըլի.  
Տու առըքուր էգար անէ՛ս,  
Թ՛է շէքըմը մառ՞թ սըբանէս...

Մին ասըմ էն՝ քասսը քալի,  
Ախժան անըմ, մէշտէլ քըցըմ,  
Շան կըշքիցը էրգէնացնըմ:  
– Դէ, ծէր մէռէլն էգէք քարէք:  
Ըստիյանը խաբարը քընըմ,  
Կօխկի կէղն ա կալի հասնըմ.  
    – Նարա՛յ, հասէ՛ք,  
    Նօ մէռա՛ճ չէք,  
    Սըբանեցին մէր կ'էղացօն...

Վօնց վօր էշակրէղի պունը  
    Քանդէս, բըրախ քաս,  
    Կըրէղի պէս

Կ'եղօվը մին դօշուն կաբըմ,  
 «Նու՛յ» են անըմ, փուս են կալի՝  
 Ամմեն մինը մին պան փռռնաձ.  
 Վօրի ծեռնին թուրըթվանգ,  
 Վօրը յեղան, ք'անէշ, հուրաք,  
 Վօրը մին պահ, վօրը շամփուր,  
 Վօրը նաջախ, վօրը մին փեղ,  
 Վօրը ծիյօվ, վօրը վօղօվ,  
 Վօրն անքըթագ, վօրը պօրիգ-  
 Դրբա դո՛ւշման կ'եղը մօղիգ:  
 – Արա՛, ըստենց դամմագ կըլէ՛ն.  
 Նա՛ խիղջ ունէն, նա՛ ահրափօղ,  
 Մառ՞թ քընըմ ա առըփուրի,  
 Ֆաքվըմ են հու քաշըմ թըրի,  
 Թու՛ ծեր կ'եղին, մէջի մառ՞թին,  
 Ծեր նամուսին, ծեր անյաթին...  
     Քընա՛նք, ճառ՞թէ՛նք,  
     Քանդէ՛նք, վառէ՛նք...  
 – Նա՛յ, հու՛յ, առա՛ջ, դէ ծեգ փենա՛մ...

Էգան հասան իրա՛ր վրա,  
 Նա ճառ՞թեցին հու ճառ՞թվեցին,  
 Կըդօրեցին, կըրագէցին,  
 Ըշփամ ավել կըդօրեցին,  
 Ընդամ ավել կըդադեցին,  
 ճառ՞թեցին իրա՛ր,  
 Ճընջեցին իրա՛ր,  
 Կօրան, քընացին  
 Կէննին հավասար:

## Այլ նմուշներ

### *Աղավաճորի խոսվածք*

Բաբենց Թանգուհին փրդին դարգըմ ա հրդեվանի մենձ թավեն պերի: Էս փրդեն քընըմ ա փենըմ ըղանք թօրնան վրդեն էդ թավի մեչին ծըվածեղ են անըմ: Վօր ծըվածեղը փենըմ ա, շըշկըլըմ ա, ուզըմ ա ասի՝ ծեր թավեն փըվեք, ասըմ ա.

– Մամըկօ՛ն ք՛եռի, մերըս ասըմ ա՝ մին ծեր ծըվածեղը փըվեք:

*Բանասաց՝ Գրիգոր Շահբազյան (ծնվ. 1910թ.)*

### *Ռինդի խոսվածք*

Մին շաղ այարբազ դասափու կար մեր կ՛եղըմը: Տնսերին էլ էր կ՛եղավարի խօսըմ: Մին հեղ փնսի վախարը էրգու աշագ՛ետդ յեղացած մեչխօլ են մըննըմ: Էս դասափուն կօռռալեն վրոա ա փալի.

– Վէր ընգ՛եք փեղերնիդ:

Սըվօրօղների հրոհըռօցը պընցանըմ ա: Էս դասափուն պըրանվի ի՛նչ փենա՝ էդ էրգու աշագ՛ետդն էլ փըռան փագ՛ին մեգընվել են՝ «վեր են ընգ՛ել»:

– Շո՛ն-շան վօռ՛թիք, էդ ի՛նչ էք անըմ,– լափ հեռ՛սօղըմ ա ըղանց վրդեն: Տըղերքը փեղերներիցը վեր են կ՛ենըմ, ասըմ բա փու ասի՛ր վօշ վեր ընգ՛եք:

Ասըմ են ու փախնըմ:

*Բանասաց՝ Նանո Մդեփանյան (ծնվ. 1916թ.)*

### *Արենիի խոսվածք*

Քօսօղենց Սըք՛եյին հինգ կընգա հեղ դարգըմ են ճամփի վրդի քարերը թամըզեն: Սաղ փարին էդ կօռձըն են անըմ:

Մին օր իրա թայդաշներիցը մինը՝ Մուքնասպենց Մուրենը, ըղիյան անց ա կ՛ենըմ: Ասըմ ա.

– Նը՛, Սըք՛է, կօռձըդ փենըմ եմ լավ ա. մին փըղամառ՛թ, հինգ կընիգ՝ ք՛եֆիդ ք՛եֆ չի հասնի: Ըսկի խօսկըմօսկ քըցել է՛ս:

–Արա՛, չէ: Մինը ֆափմըն չի: Կէդինը մըննէն ըղանք: Յէս մէնազ, իրանք հինգը, թօղ մինը խօսկը քըցի, էլի:

*Բանասաց՝ Խաչիկ Խաչատրյան (ծնվ. 1936թ.)*

### *Գնդեվազի խոսվածք*

Մին բազըրգ՛մնի մին դաթըրն ա ըլըմ, համա ընդամ դանջալ ա ըլըմ, վօր կարըմ չի նալլիլ րա:

Էդ դաթրին վէնըմ ա, քընըմ Նախճըվան՝ առըրուր անի: Տէնըմ ա դաթրի վօդէրը ընդամ ա մաշվէլ, վօր կարըմ չի քընա: Մին կ'էղըմ մին նալքանդ ա ճարըմ, րանըմ ա կուշրը: Էս դաթըրը համա էլը րտըմը կաղըմ չի: Նալքանդը վօր րտըմ ա ըղէնց ա, դաթրին կարըմ ա ծառանիցը, քընըմ ա կօմիցը էշին հանըմ, պերըմ կըշրին կաղնացնըմ, ասըմ.

– Զո հերըդ Առաթըր չի, է՛, վօր ըղէնց քացի էս րալի, քօ հերըդ, վօր ուզըմ էս գիղանաս, էս էշն ա վօր կա. քէգ կարքին պահի:

Աթըրը էս վօր լըսըմ ա, սուսըփուս կաղըմ ա, նալքանդը նալլըմ ա:

*Բանասաց՝ Վանո Մարգարյան (ծնվ. 1916թ.)*

### *Գնիշիկի խոսվածք*

Մին ըղնածօրցի դանվէն լէյաճ՝ փօխինճ ուղիլին քընըմ ա Ուզգիւր: Ճամփըմը մին ըռընդէցօ ա պաղահըմ: Ըռընդէցին ասըմ ա.

–Արա՛, էդ ի՛նչ էս ուղըմ:

Ըղնածօրցին թէ.

–Վօր քամին հա ըսրտէնցին րա՛ վօջ մի պան:

*Բանասաց՝ Բագրատ Հայրապետյան (ծնվ. 1935թ.)*

### *Կէշուրի խոսվածք*

Մին ըրիգի՛ն Վաղօն խըմաճ-հարփաճ, լիւլ, թօլ-թօլ ըլիլէն քընըմ ա րուսը: Մին վախար ճամփըմը ընգըմ ա քիւջի մեշրտըլը, ըղէնց էլ մընըմ:

Մին մատթ անց կ'ենալիս մուրըր րեղը կըրնըմ ա ըղան: Ասըմ ա.  
– Վայ, յես էլ հենց գ'իղացիմ քար էս, է':  
– Նենց գ'իղացիր քար էմ րար քաշի մօրըղ վըրեն,– հեռօղամ  
ջուղաբ ա րալի հարփամ Վաղօն:

*Բակասաց՝ Վարդգես Գևորգյան (ծնվ. 1932թ.)*

### *Հորսի խոսվածք*

Տասնութ թըվին թուրքը Բաղմուն վեր էր կալել:

Մի քըշերվա մէջին թուրք'երը քառսուն ջնհիլ րըղա ին վըհաբ'ել, լըցրել մին մարաբ: Մի մենձ հօր ին քանդիլ րըվել ըղանց, ննֆրն ու պնմբնգը լըցրել մէջը վառել, էղ ջնհիլներին էլ իւրնր յեննն քըցել մէջը: Մինթնք Յեղօն էր ազաղվել. քըշերօվ փախել էր, խըռըշուկ'ից «ջօր» սարք'ել, կապել վըրեն, ցերեկը րափ էր կացել, քըշերը քընացել, մընչել հասել էր Մարտիրօս կ'երը քըվօր րունը:

*Բակասաց՝ Զաբել Անդրույան (ծնվ. 1934թ.)*

### *Խաչիկի խոսվածք*

Մին օր, ըրըգնապահին, րասներգու րարեգան Բայթունը չափի րնռղննգ սալագը շըլնգամ քընըմ ա Ղըռը՝ կօլխօգի րնրմննիցը իրանց կօվի մար րնրմնն պերի:

Ֆերմայի պահեսրապէղ Աղասին մին քանի կօմվօրի հեղ ճամփի վըրեն՝ կօմի րըռանն ա ըլըմ, Ֆերմայի շներն էլ ըղանց կըշրին թագնամ:

Էս Աղասին վօր Բայթունին րենըմ ա, գ'իւվն թէ հնննք ա անըմ, կանչըմ ա.

– Բայթուն, վօնց է՛ս Զանգ'իյին քըշքըշ րամ վըրել:

Զանգ'ին քըշքըշի անըմ ա լըսըմ, թէ չէ, րեղիցը թըռնըմ ա, վագ րալի դըբա ըրելեն:

Բայթունը րնրմննը պերըմ ա, հըրօխաօրը պաղմըմ, թէ բա ըսենց՝ Զանգ'ին էգալ իրա վըրեն, ինքը սալագը փըռնըվերեց շան վըրեն, ընղնր պահեց, ընջօր Աղասին էգալ, շանը սալագ'ի րագ'իցը հանեց, րարալ:

Մին քանի որ յեր Ադասին պաղահըմ ա Բայթունի հըրօխ-պօրը.

– Ա՛, բաջանադ, բա ասիլ չես, ընօրը Զանգին ըրէխին քըրքըրիօ էր, լավ ա խէլքը կըղրէց, մըղավ սալագի փագը, սալագը փըռսըվէրէց կըլխին:

*Բանաստեղծ Բագրատ-Նեստոր  
Մարգարյան (ծնվ. 1923թ.)*

### *Ազնաբէրդի խոսվածք*

Քընացել ինք Թ-նգն կ'էղը՝ պանիր անիլ:

Սաղ քըշէրը մայիսի շըղըրդու անձվէր էր կալի: Արագիս փեսամ մէր Ըոհման էգավ, փուռը շըրըխկալէն պացավ, դաֆուլ մըղավ մէջիօլ: Վէր թըռամ, փեսամ լիսանըմ ա: Ասիմ էն հառսը ըրէխէն կըպէրի, է՛. վէր կ'էնամ էս հնալիօրին մըկն չնայըմնայ փամ, մին քընամ կ'էղը, փէնամ ի՛նչ կա: Նէնց ընօր իմ չնայը փըրէլ առաջին, մին էլ փէնամ, մէղայ՝ Ասսօ, արագիս պէս հնամն Ըոհման էգավ, ասէց. «Անա՛, վէր, մէգ փըղա ա ըլէլ»:

Վէ՛կացամ, կօքըս լիքը թնգն պանիր նան լօռ ածիմ, պըժանիլէն էգամ թո՛ւշ կ'էղը:

Ըրո՛ւգ'ոնը սաղ ֆաքվին-էգան անկալիսէք: Նէրըդ շադ էր ուրիսացել: Բիքէքըդ ասըմ ին. «Ա՛յ անա, անշկ'երը կաքիդ ա, վօնցօրի Դավօն ըլի՛ մօր դօլն ա քաշէլ»: Ասիմ՝ դէ ծէնէրնիդ կըղրէք, ընդա անշկ'երը կաքիդ չի, հէնց իմ ախպօրըս ա ուշխար փալի, մին էլ, մըղի՛գ արէք՝ իրա հօր պէս էլ ունքի վըրէն խալ կա:

*Բանաստեղծ Թէքուր Վարդանյան (ծնվ. 1899թ.)*

## ՆԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ազլ.-Ազուլիսի բարբառ  
Ազն.-Ազնաբերդի խոսվածք  
Աղվ.-Աղավնաձորի խոսվածք  
Արն.-Արենիի խոսվածք  
Արպ.-Արարապյան բարբառ  
Արց.-Արցախի բարբառ  
Արփ.-Արփիի խոսվածք  
Գնդ.-Գնդեվազի խոսվածք  
Գնշ.-Գնիշիկի խոսվածք  
Խաչ.-Խաչիկի խոսվածք  
Խոյ.-Խոյի բարբառ  
Կեչ.-Կեչուրի խոսվածք  
Նրս.-Նորսի խոսվածք  
Չիվ.-Չիվայի խոսվածք  
Ջուղ.-Ջուղայի բարբառ  
Ռնդ.-Ռինդի խոսվածք  
Վ. Ազն.-Վերին Ազնաբերդի խոսվածք  
Վ. ձ.-Վայոց ձորի խոսվածք  
Օծփ.-Օծոփի խոսվածք



## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

- Աբրահամյան Ա., Գրաբարի ձեռնարկ, Երևան, 1976:
- Աբրահամյան Ա., Նայերենի դերբայները և նրանց ձևաբանական նշանակությունը, Երևան, 1953:
- Աբրահամյան Ս., Ժամանակակից գրական հայերեն, Երևան, 1981:
- Ալիշան Ղ., Միսական, Վենետիկ, Ս. Ղազար, 1893:
- Ակնարկներ միջին գրական հայերենի պարմության, Խ. Ա-Բ, Երևան, 1973-1975:
- Աղայան Է., Բարբառային հնագույն տարբերություններ հայերենում, «ՆԽՄՏ ԳԱ հասարակական գիտությունների տեղեկագիր», 1958, թիվ 5:
- Աղայան Է., Ընդհանուր և հայկական բառագիտություն, 1984:
- Աճառեան Հր., Նայ բարբառագիտություն, Էմինեան ազգագրական ժողովածու, Խ. Ը, Մոսկուա-Նոր Նախիջևան, 1911:
- Աճառեան Հր., Քննություն Ղարաբաղի բարբառի, Վաղարշապատ, 1901:
- Աճառյան Հր., Նայերեն արմատական բառարան, Խ. Ա-Դ, Երևան, 1971-1973:
- Աճառյան Հր., Նայոց լեզվի պարմություն, Խ. Ա-Բ, Երևան, 1941-1951:
- Աճառյան Հր., Քննություն Ագուլիսի բարբառի, Երևան, 1935:
- Աճառյան Հր., Քննություն Մարաղայի բարբառի, Երևան, 1926:
- Աճառյան Հր., Քննություն Նոր Զուղայի բարբառի, Երևան, 1940:
- Աճառյան Հր., Քննություն պոլսահայ բարբառի, Երևան, 1941:
- Աճառյան Հր., Քննություն Վանի բարբառի, Երևան, 1926:
- Այվազյան Ա., Նախիջևանի պարմաճարտարապետական հուշարձանները, Երևան, 1978:
- Ասատրյան Մ., Լոռու խոսվածքը, Երևան, 1968:
- Ասատրյան Մ., Ուրմիայի (Խոյի) բարբառը, Երևան, 1962:
- Ալգերեան Մ., Առձեռն բառարան հայկազեան լեզուի, Վենետիկ, 1865:
- Գանձակեցի Կ., Պարմություն Նայոց, Թիֆլիս, 1909:
- Գրիգորյան Ա., Նայ բարբառագիտության դասընթաց, Երևան, 1975:
- Դավթյան Կ., Լեռնային Ղարաբաղի բարբառային քարտեզը, Երևան, 1966:
- Եղիշե, Վարդանանց պարմությունը, Երևան, 1947:
- Խոբեմացի Մ., Նայոց պարմություն, Երևան, 1940:
- Կոնդակյան Ժ., Մեկից յոթ տարեկան երեխաների բառապաշարը, Երևան, 1981:
- Կոստանդյան Դ., Երզնկայի բարբառը, Երևան, 1979:
- Նակոբյան Թ., Սյունիքի թագավորությունը, Երևան, 1966:

- Հակոբյան Թ., Մելիք-Բախշյան Ս., Բարսեղյան Հ., Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. Ա-Ե, Երևան, 1986-2001:
- Հայ ժողովրդի պատմություն, հ. Ա-Ը, Երևան 1967-84:
- Հայերեն բացատրական բառարան, կազմեց Սյր. Մալխասեանց, հ. Ա-Դ, Երևան, 1944-1945:
- Հայերենի բարբառագիտական աղյուս, հ. 1-2, Երևան, 1982-1985:
- Հայոց լեզվի համեմատական քերականության հարցեր, Երևան, 1979:
- Հանեյան Ա., Տիգրանակերտի բարբառը, Երևան, 1978:
- Հովհաննիսյան Լ., Հայերենի իրանական փոխառությունները, Երևան, 1990:
- Ղարիբյան Ա., Հայերեն բարբառների մի նոր ճյուղ, Երևանի պետական համալսարանի «Գիտական աշխատություններ», հ. ԺԱ, Երևան, 1939:
- Ղարիբյան Ա., Հայ բարբառագիտություն, Երևան, 1947:
- Ճեմճեմեան Ս., Նախիջևանի հայոց վարժարանը և հոռնը, Վենետիկ-Ս. Ղազար, 2000:
- Մեծունց Բ., Շամշադին-Իջևանի քովածքը, Երևան, 1989:
- Մարգարյան Ա., Գորիսի բարբառը, Երևան, 1975:
- Մարկոսյան Ռ., Արարադյան բարբառ, Երևան, 1989:
- Մուրադյան Հ., Հայոց լեզվի պատմական քերականություն, հ. Ա, Երևան, 1982:
- Մուրադյան Մ., Շաքախի բարբառը, Երևան, 1962:
- Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ. Ա-Բ, Երևան, 1979-1981:
- Պահլավերեն-պարսկերեն-հայերեն-ռուսերեն-անգլերեն բառարան, կազմեց պրոֆ. Ռ. Աբրահամյանը, Երևան, 1965:
- Պետրոսյան Հ., Գալստյան Ս., Կարազուլյան Թ., Լեզվաբանական բառարան, Երևան, 1975:
- Ջահուկյան Գ., Հայ բարբառագիտության ներածություն, Երևան, 1972:
- Ջահուկյան Գ., Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան, Երևան, 1987:
- Սարգսեանց Ս., Ազուլեցոց բարբառը (զօկերի լեզուն), Մոսկուա, 1883:
- Վարդանեան Ա., Նախիջևանի բարբառային քարտեզը, Հանդես ամսօրեայ, Վիեննա, 2000, թիվ 1-12:
- Վարդանյան Ա., Ազնաբերդի (Վայոց ձորի) խոսվածքի հնչյունահնչության և առանձնահատկությունները (դրություն), Երիտասարդ լեզվաբանների հանրապետական երկրորդ գիտաժողովի նյութեր, Երևան, 1981:
- Վարդանյան Ա., Ազնաբերդ. նախիջևանահայության վերջին ամրոցը, Երևան, 2000:

- Վարդանյան Ա., «Գիլգամեշի» խումբաբան և հայերեն բարբառային խմբաբա բուսանունը, Իրան-Նամե, հ. 37, 2001:
- Վարդանյան Ա., Վայոց ձորի խոսվածքի հնչյունաբանությունը, Բանբեր Երևանի համալսարանի, թիվ 1, 1983:
- Վարդանյան Ա., Վայոց ձորի խոսվածքի ձևաբանական առանձնահատկությունները (դրույթներ), Երիտասարդ լեզվաբանների հանրապետական հինգերորդ գիտաժողովի նյութեր, Երևան, 1986:
- Վարդանյան Ա., Վայոց ձորի խոսվածքի մանկական բառապաշարը, Պարմա-բանասիրական հանդես, 2003, թիվ 2:
- Օրբելյան Սր., Սյունիքի պարմություն, Երևան, 1986:
- Баранов Х., Арабско-русский словарь, Москва, 1977.
- Баскаков А. и др., Турецко-русский словарь, Москва, 1977.
- Даль В., Толковый словарь живого великорусского языка, Москва, 1955.
- Капанцян Гр., Историко-лингвистическое значение топонимики Древней Армении, Երևանի պետական համալսարանի «Գիտական աշխարհություններ», 1940, հ. ԺԴ:
- Лисициан С., Старинные пляски и театральные представления армянского народа, т.1, Ереван, 1958.
- Ожегов С., Словарь русского языка, Москва, 1990.
- Радлов В., Опыт словаря тюркских наречий, Москва, 1963.
- Vardanian A., The Assyro-Babylonian Khumbaba and the Armenian plant name khmbaba, Iran & the Caucasus, V, 2001, Tehran.
- Samuelian V., Le dialecte des Arméniens de Bolou (Turquie): Etat des recherches en cours, Հայ բարբառագիտության միջազգային համագումարի նյութեր, Սյունիանակերտ, 2001:
- م. معین، فرهنگ فارسی، تهران، جلد ۱-۶، ۱۹۹۶ (۱۳۷۵).

## Р Е З Ю М Е

### ВАЙОЦЗОРСКИЙ МЕЖДИАЛЕКТ


Работа посвящена исследованию одного из центральных наречий Армении – Вайоцзорскому говору, который включает в себя традиционные говоры сел Арени, Ахавнадзор, Арпи, Гидеваз, Гнишик, Хачик, Кечут, Горс, Чива, Ринд, Верин Азнаберд Вайоцзорской области Республики Армения, а до 1988 года включал также говоры приграничных сел Азнаберд и Оцоп Нахичеванской Автономной Республики.

В классических диалектологических исследованиях Вайоцзорский говор считался одним из говоров Араратского диалекта. Тем не менее Грачья Ачарян не включал этот говор в ареал распространения ни Араратского, ни Арцахского (Карабахского), ни какого-либо другого диалекта. Следовательно, лишь в отдельной работе могло быть выявлено существующее диалектное своеобразие говора и уточнено его положение среди ближайших диалектов.


Исследование материала производилось как традиционным методом исследования армянских диалектов, так и методами статистической многопризнаковой классификации и лингвистической географии.

В результате исследования выяснилось, что Вайоцзорский говор занимает промежуточное положение между Араратским и Джугинским диалектами Араратской или Северо-восточной диалектной группы Восточной группировки диалектов армянского языка и немного удален от Арцахского диалекта. Предлагается в дальнейшем в диалектологической литературе этот говор называть Вайоцзорским междиалектом.

*Summary 1*



*Þurprting 2*



ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ԽՈՍՎԱԾՔԻ  
ՏԱՐԱԾՄԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ  
1988թ.

Զարկեց 3



# ՆԱԽԻԶԵՒԱՆԻ ԲԱՐԲԱՌԱՅԻՆ ՔԱՐՏԵԶԸ 1918Թ.



ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՈՒՆՆԵՐ

- Ազուխի բարքառ
- ⊙ Զուլալի բարքառ
- ⊗ Արցախի բարքառ
- ◐ Մեղրու բարքառ
- ◑ Խոյի բարքառ
- ▨ Աստրապատի խօսուածք
- ⊗ Վայոց ձորի խօսուածք
- ⊗ Միջխօսուածքներ

Հեղինակ եւ կազմող՝  
Ա. Վարդանեան



# ՆԱԽԻԶԵՒԱՆԻ ԲԱՐԲԱՌԱՅԻՆ ՔԱՐՏԵԶԸ 1924Թ.



ՆԱԽԻԶԵԲԱՆԻ  
ԲԱՐԲԱՌԱՅԻՆ ՔԱՐՏԷԶԸ  
1988Թ.



*Þunnting 7*



# ԱՎՅԻ ՍԱՏՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿԻ ԱՊԱՌՆԻԻ ԵՎ ԱՆՅՅԱԼ ԱՊԱՌՆԻԻ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ



## Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

|                    |   |
|--------------------|---|
| ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ ..... | 5 |
|--------------------|---|

### ԱՌԱՋԻՆ ՄԱՍ ՀՆՉՅՈՒՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

|                                                  |    |
|--------------------------------------------------|----|
| ՀՆՉՅՈՒՆԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ .....                      | 17 |
| ՇԵՇՏԸ .....                                      | 19 |
| ՀՆՉՅՈՒՆԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ .....                         | 20 |
| Ձայնավորների հնչյունափոխությունը .....           | 20 |
| Երկբարբառների հնչյունափոխությունը .....          | 22 |
| Բաղաձայնների հնչյունափոխությունը .....           | 23 |
| Ձայնեղ պայթականներ և կիսաշփականներ .....         | 23 |
| Խուլ պայթականներ և կիսաշփականներ .....           | 24 |
| Շնչեղ խուլ պայթականներ և կիսաշփականներ .....     | 26 |
| Ձայնեղ շփականներ .....                           | 26 |
| Խուլ շփականներ .....                             | 27 |
| Ձայնորդներ .....                                 | 27 |
| Փոխազդեցական և դիրքային հնչյունափոխություն ..... | 29 |
| Բաղաձայնական կապակցություններ .....              | 29 |
| Հնչյունական շղթա .....                           | 30 |
| Ետնալեզվայինները ձայնավորներից առաջ .....        | 31 |
| Հնչյունափոխական այլ երևույթներ .....             | 32 |
| Հավելում .....                                   | 32 |
| Անկում .....                                     | 33 |
| Դրափոխություն .....                              | 33 |
| Կրկնություն .....                                | 34 |
| Բաղաձայնների առնմանություն .....                 | 34 |
| Բաղաձայնների փարմանություն .....                 | 34 |
| Ձայնավորների ներդաշնակություն .....              | 35 |
| Ամփոփում .....                                   | 35 |
| Պարզեցում և բարդացում .....                      | 35 |
| Ժողովրդական ստուգաբանություն .....               | 36 |
| Բաղարկություն .....                              | 36 |

**ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ  
ՁԵՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ**

|                      |    |
|----------------------|----|
| ԳՈՅԱԿԱՆ ԱՆՈՒՆ .....  | 37 |
| ԱԾԱԿԱՆ ԱՆՈՒՆ .....   | 44 |
| ԹՎԱԿԱՆ ԱՆՈՒՆ .....   | 45 |
| ԴԵՐԱՆՈՒՆ .....       | 46 |
| ԲԱՅ .....            | 49 |
| ՄԱԿԱԲԱՅ .....        | 54 |
| ԿԱՊ .....            | 55 |
| ՇԱՂԿԱՊ .....         | 55 |
| ՎԵՐԱԲԵՐԱԿԱՆ .....    | 56 |
| ՁԱՅՆԱՐԿՈՒԹՅՈՒՆ ..... | 56 |

**ԵՐՐՈՐԴ ՄԱՍ  
ԲԱՌԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ**

|                               |    |
|-------------------------------|----|
| ԲԱՌԱՊԱՇԱՐԸ .....              | 70 |
| Բառապաշարի շերտերը .....      | 70 |
| Մանկական բառապաշարը .....     | 81 |
| Բառիմասարի փոփոխություն ..... | 83 |
| Բառիմասարի մասնավորում .....  | 84 |
| Դարձվածքներ .....             | 86 |
| ԲԱՌԱԿԱԶՄՈՒԹՅՈՒՆ .....         | 87 |
| Բառաբարդում .....             | 87 |
| Ածանցում .....                | 89 |

**ՉՈՐՐՈՐԴ ՄԱՍ**

|                                     |    |
|-------------------------------------|----|
| ՇԱՐԱՀՅՈՒՄԱԿԱՆ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ..... | 92 |
|-------------------------------------|----|

**ՀԻՆԳԵՐՈՐԴ ՄԱՍ  
ՆԵՐՔԻՆ ԵՎ ԱՐՏԱՔԻՆ ԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

|                                               |    |
|-----------------------------------------------|----|
| ԽՈՍՎԱԾՔԻ ՆԱՏԿԱՆԻՇՆԵՐԻ ՆԵՐՔԻՆ                  |    |
| ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ .....                       | 95 |
| ԽՈՍՎԱԾՔԻ ԴԻՐՔԸ ՄԵՐՁԱԿԱ ԲԱՐԲԱՌՆԵՐԻ ՄԻՋԵՎ ..... | 96 |
| ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ .....                          | 98 |

**ՎԵՅԵՐՈՐԴ ՄԱՍ  
ԲԱՌԱՑԱՆԿԵՐ**

|                              |     |
|------------------------------|-----|
| ԳՐԱԲԱՐ-ԽՈՍՎԱԾՔ ԲԱՌԱՑԱՆԿ..... | 116 |
| ԳԱՎԱՌԱԿԱՆ ԲԱՌԵՐԻ ՑԱՆԿ .....  | 133 |
| ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ .....     | 148 |
| ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ .....      | 153 |

**ՅՈԹԵՐՈՐԴ ՄԱՍ  
ՆՄՈՒՇՆԵՐ**

|                            |     |
|----------------------------|-----|
| Առածներ, ասացվածքներ.....  | 154 |
| Օրինանքներ .....           | 155 |
| Երդումներ .....            | 156 |
| Անեծքներ.....              | 156 |
| Հանելուկներ .....          | 187 |
| Երգեր, խաղիկներ .....      | 163 |
| Հեքիաթներ, գրույցներ.....  | 166 |
| Փոխադրություններ.....      | 177 |
| Այլ նմուշներ.....          | 184 |
| ՆԱՍԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ..... | 188 |
| ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ .....        | 189 |

ԱՐՏԱԿ ՎԱՐՂԱՆԻ ՎԱՐՂԱՆՅԱՆ  
ՎԱՅՈՑ ԶՈՐԻ ՄԻՋԲԱՐԲԱՌԸ

АРТАК ВАРТАНОВИЧ ВАРТАНЯН  
ВАЙОЦДЗОРСКИЙ МЕЖДИАЛЕКТ

Հրատարակության է երաշխավորել  
ՀՀ ԳԱԱ Հր. Աճառյանի անվան  
լեզվաբանության ինստիտուտի  
գիտական խորհուրդը

|                           |                     |
|---------------------------|---------------------|
| Շապիկի լուսանկարները՝     | Զավեն Խաչիկյանի     |
| Շապիկի ձևավորումը՝        | Հասմիկ Մովսիսյանի   |
| Տառատեսակը՝               | Ռութեն Թարումյանի   |
| Համակարգչային ձևավորումը՝ | Գարեգին Սարգսյանի   |
| Սրբագրիչ՝                 | Վարդուհի Խաչիբաբյան |

|                |               |
|----------------|---------------|
| Տպագրությունը՝ | օֆսեթ         |
| Չափսը՝         | 60x84 1/16    |
| Թուղթը՝        | օֆսեթ         |
| Ծավալը՝        | 13 տպ. մամուլ |
| Տպաքանակը՝     | 200 օրինակ    |



Պատվեր № 795

«ՏԻԳՐԱՆ ՄԵԾ» հրատարակչություն  
Տպագրված է «Տիգրան Մեծ» ՓԲԸ տպարանում